

ՎԱՐՁՐ



ՀԱՅԿԱԿԱՆ ԵՄՐՏԱՐԱԾԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՌԻՍՏԻՆԱՍԻՐՈՂ ԳԻՄՆԱԳՐԱՍ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

DUTY OF SOUL

№9

2013



Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան
ՀՈՒԵԿԱՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ



էջ 1

Սամվել Կարապետյան
ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ




էջ 12

Սամվել Կարապետյան
ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



էջ 16

Սահակ Վարդանյան
ԱՐԵՎՍՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ



էջ 38



N 9

2013

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
 ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
 ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

խմբագիր Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ

խմբագիր-սրբագրիչ
 Proof-reader (Armenian text)
HASMIK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

թարգմանիչ Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳՁԱՅԻՆ ՋԵՎԱԿՈՐՈՂ
 Designer
ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄԵՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂ
**ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
 ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ**
 RESEARCH ON ARMENIAN
 ARCHITECTURE FOUNDATION
 Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223

ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03Ա089223
 Given 13.10.2010

**ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿԱՆ
 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
 ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

**ՏՊԱԳՐՎԵԼ Է
 «ԲՅՈՒՐԱԿՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏԱՆԸ**

Printed by
BYURAKN Publishing House

ՏՊԱԶԱՆԱԿԸ` 1000

Number of copies: 1000

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ
 Baghramian 24g, Yerevan, RA

<http://www.armenianarchitecture.am>

<http://www.raa.am>

✉ raayer@sci.am

☎ 010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
 ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 © Research on Armenian Architecture

ՀՈՌԵԿԱՎԱՆՔԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան

2012 թ. հուլիսի 22-ից օգոստոսի 12-ը պեղման-մաքրման աշխատանքներ իրականացվեցին Հոռեկավանքի վանական համալիրում (պատվիրատու՝ ԼԴՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության վարչություն): Արշավախմբի ղեկավարն էր հնագետ Գագիկ Սարգսյանը, ճարտարապետը՝ Սամվել Այվազյանը: Մեր նպատակն էր հուշարձանախումբը և շինություններն ազատել փարթամ բուսականությունից, եկեղեցին մաքրել վերջերս մասամբ փլուզված թաղի փլատակներից, հնարավորություն ընձեռել այն մանրամասն չափագրելու և հեռանկարում վերականգնման նախագիծ կազմելու համար:

Պատմական ակնարկ. վանքը գտնվում է պատմական Արցախի Մեծկողմանք գավառում՝ ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից մոտ 5 կմ հարավ-արևմուտք՝ անտառապատ սարալանջի հյուսիսահայաց կողմում: Հիմնադրման մասին ստույգ տեղեկություններ հայտնի չեն: Հիշատակություններ են պահպանվել վանքի մոտակայքում եղած երբեմնի Ուռեկա գյուղի մասին: Մասնավորապես Մ. Կաղանկատվացին հիշատակում է «Ստեփանոս քահանայ Ուռեկան գեղջ»¹: Հնարավոր է, որ վանքն իր երկրորդ անունը (առաջինը՝ Գլխո) ստացել է գյուղի անունից, որն այժմ չի պահպանվել: Այն գտնվում էր ներկայիս Թալիշ գյուղի հանդամասերից մեկում²:

Ուռեկան գյուղը գոյություն է ունեցել դեռևս վաղ միջնադարում: Հիշվում է Եղիշե առաքյալի մասունքների հայտնաբերման պատմության մեջ³: Համաձայն պատմիչի տեսիլքների՝ մի խումբ մարդիկ հայտնաբերում են քրիստոնեության քարոզչության ժամանակ նահատակված Թադեոս առաքյալի աշակերտ Եղիշեի մասունքները (ոսկորները): Դրանցից մեկը՝ Ստեփանոս քահանան, որ Ուռեկան գյուղից էր, հափշտակում է առաքյալի գլուխը և տանում իր գյուղ, որտեղից էլ նշխարները հետո տեղափոխում են «Ներսմիհրայ սուրբ ուխտն, որ այժմ կոչի Ջրվշտիկ...»⁴: Հետագայում Ջրվշտիկ վանքը կոչվում է նաև Եղիշե առաքյալի անունով:

Այս պատմությունից անուղղակի հասկացվում է, որ Ուռեկան գյուղում վաղ միջնադարում գոյություն է ունեցել սրբավայր, և դա կարող էր լինել ներկայիս Գլխո կամ Հոռեկավանք համալիրը: Ցավոք, վաղմիջնադարյան որևէ կառույցի հետքեր չենք հայտնաբերել: Հոռեկավանքի կառույցներից եկեղեցու խորանը համարվել է 5-րդ դարի կառույց⁵:

Գլխո վանքի կամ Հոռեկավանքի մասին հիշատակություններ հիմնականում պահպանվել են Մ. Կաղանկատվացու մոտ: Դրանք կապված են սբ. մասունքի՝ խաչափայտի գյուղի հետ⁶: Մ. Մաշտոցն Աղվանքում՝ լուսավորչական գործունեության ժամանակ, մոտն ուներ սուրբ խաչափայտից մի կտոր (մասունք): Հետապնդման ահից նա մասունքը թաղում է Գիս ավանում, որը գտնվում էր պատմական Ուտիք գավառում: Հետագայում՝ է դարձում, Իսրայել անունով ճգնավորը տեսիլքով իմանում է խաչափայտի տեղը և Աղվանքի եպիսկոպոսներին համոզելով՝ փնտրում, գտնում է այն և տեղափոխում Գլխո վանք: Այստեղից պարզ է, որ է դարձում վանքն արդեն գոյություն ուներ:

Ներկայումս պահպանված ամենավաղ շինությունները կառուցվել են ԺԳ դարում⁷: Մասնավորապես եկեղեցու և զավթի թվակիր շինարարական արձանագրությունները պահպանվել են դրանց մուտքերի բարավորներին, որոնց համաձայն՝ դրանք կառուցվել են համապատասխանաբար 1279 և 1284 թվականներին: Ինչ վերաբերում է զավթին արևմուտքից կից զանգակատանը, ապա դատելով շինարարական տեխնիկայից և հորինվածքից՝ կարելի է եզրակացնել, որ սա ուշ միջնադարի կառույց է: Չանգակատան հյուսիսային մույթի վրա փորագրված է Ռ-տառը, և կարելի է կարծել, որ կառուցման թիվ է՝ 1551:

ԺԷ դարում Հոռեկավանքի մոտ հիմնավորվում են մելիք Բեգլարյանները: Նրանք այստեղ կառուցում են բերդ-ապարանք, որի կիսավեր կառույցներից պահպանվում են մինչ օրս: Ենթադրելի է, որ մելիքները ձեռնամուխ են եղել նաև վանքի կառույցների վերանորոգմանը: Դրանց հետքերը տեսանելի են եկեղեցու և զավթի վրա:

1 **Մովսես Կաղանկատուացի.** Պատմություն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 11:

2 Դիվան հայ վիմագրության, հ. 5, Երևան, 1982, էջ 101:

3 **Մովսես Կաղանկատուացի.** էջ 12:

4 Նույն տեղում:

5 **Մկրտչյան Շ.,** Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 73:

6 **Մովսես Կաղանկատուացի.** էջ 201-208:

7 Դիվան հայ վիմագրության, նույն տեղում:




Հոռեկավանքի տեսքը հյուսիս-արևմուտքից և հյուսիս-արևելքից (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)

Գլխտ կան Հոռեկավանքի կենտրոնական հուշարձանախումբը բաղկացած է միանավ բազիլիկ եկեղեցուց, նրան արևմուտքից կից գավթից, վերջինիս արևմտյան մուտքի առջև բարձրացող զանգակատնից: Դրանց մոտ՝ հարավային բարձրադիր ու հյուսիսային ցածրադիր լանջերին և արևմտյան կողմում, պահպանվել են հատվածաբար ուրվագծվող շինությունների հետքեր, որոնք զգալի ավերածությունների են ենթարկվել համալիրի շուրջն առաջացած և այժմ էլ գոյություն ունեցող Թալիշ գյուղի գերեզմանոցի ընդարձակման պատճառով: Կենտրոնական հուշարձանախմբի արևմտյան ճակատի դիմաց՝ մոտ 20 մ հեռու, կիսավեր կանգնած է ԺԹ դարի սկզբի քառասենյակ բաղակապ հյուրատունը:

Հուշարձանին հարող տարածքները հնում խիտ բնակեցված են եղել: Ջարգացած միջնադարի Ուռեկ (Ուռեկան) գյուղի ավերակները, որի ամունով է կոչվել հուշարձանը, գտնվում են համալիրից մոտ 100-150 մ արևմուտք՝ Թալիշից Եղակեր գյուղատեղի տանող անտառամիջյան ճանապարհի երկու կողմերում: Այստեղ՝ գետնի մակերեսին և առավելապես ճանապարհի կտրվածքում, երևում են բազմաթիվ շինությունների հետքեր, պատեր ու խեցեղենի բեկորներ:

Կենտրոնական հուշարձանախմբից մոտ 60 մ ներքև՝ դեպի հյուսիս-արևմուտք, գտնվում է Գյուլիստանի տիրակալներ մելիք Բեգլարյանների՝ ԺԷ դարում կառուցված ահռելի դոյակ-ապարանքը՝ բազմաթիվ ու բազմապիսի սենյակներով ու շինություններով:



Հոռեկավանքի հատակագիծը (չափ.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)



Հռոեկավանքի եկեղեցու. (1279 թ.) ներքին տեսքը դեպի արևելք (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)

Վանական համալիրի արևելյան կողմում է նաև մելիք Բեգլարյանների տոհմական գերեզմանոցը:

Հուշարձանախմբի արևմտյան ճակատի առջև գտնվող փոքր հրապարակում եղել է հին գերեզմանոց, որի արևելյան ու հյուսիսային եզրերը սահել են ներքև, իսկ հարավային կողմը մասամբ ծածկվել է լանջից լվացված հողով:

Հռոեկավանքը պարսպապատ չի ունեցել:

Եկեղեցին, համաձայն մուտքի բարավորի շինարարական արձանագրության, 1276 թ. կառուցել է տեր Հովհաննեսը հայրապետ տեր Ստեփանոսի օրոք: Այն արտաքինից ուղղանկյուն, միանավ բազիլիկ շինություն է՝ լայն բացված ուղղանկյուն խորանով ու անսովոր բարձր տեղադրված երկկենտրոն թաղով: Խորանի լայնությունը սրահից տարբերվում է (փոքր է) ընդամենը 15-20 սմ-ով: Մեկ մետր բարձրությամբ բեմը հողածածկ էր՝ եզերված ակնհայտորեն ավելի ուշ շարված ճակատային պատով: Սրահից բեմ են տանում եզրային քարե երկու աստիճաններ: Տարակուսանք էր առաջացնում

եկեղեցու արևմտյան ու արևելյան պատուհանների, ինչպես նաև բեմի հյուսիսային ու հարավային պատերին բացված որմնախորշերի բարձրությունը: Վերջիններս այնքան բարձր են, որ նրանց հնարավոր չէ հասնել առկա բեմի վրայից: Բեմի հյուսիսային պատի վերին որմնախորշի տակ բացված սրբատաշ ճակատակալով նոր որմնախորշը, անկասկած, ավելի ուշ՝ ԺԸ-ԺԹ դարերի գործ է: Մեկ այլ, ավելի տարակուսելի մանրամասն կար եկեղեցու ներքին հորինվածքում: Բեմի արևելյան պատին պահպանվել են իրար կից երկու թաղերի հետքեր, որոնց տակ բացված է արևելահայաց մեկական պատուհան: Ակնհայտ է, որ մեզ հասած խորանի ու բեմի կառուցվածքը վերափոխված է և սկզբնականը չէ: Եկեղեցին կառուցված է ճեղքած քարերով, կրաշաղախով և ներսից սվաղված է:

Վերոնշյալ հոգևորական գործիչները եկեղեցու կառուցումից ութ տարի անց կառուցում են նաև գավիթը (1284 թ.), որի մասին է վկայում գավթի բարավորի արձանագրությունը: Այն եկեղեցու արևմտյան ճակատին կցված գրեթե քառակուսի հատակագծով և միևնույն շինարվեստով իրականացված կառույց է: Ունի չորս խաչվող կամարներով առանց երդիկի հորինվածք: Խաչվող կամարների կենտրոնում առաջացած քառակուսու վրա, ի տարբերություն մյուս բոլոր նմանատիպ կառույցների, ռոտոնդա չի ունեցել: Այդ հատվածը փակված է գնդաձև մակերևույթով առաստաղով: Խաչվող կամարները նստած չեն որմնասյուների վրա, այլ հենվում են պատերի վերին եզրագծից դուրս եկող



Հռոեկավանքի գավթի (1284 թ.) ներքին տեսքը դեպի հյուսիս և շինարարական արձանագրությունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)



Դռնեկավանքի գանգակատունը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)

որմնախոյակներին: Կամարները շարված չեն մնանօրինակ կառույցներին բնորոշ միակտոր սրբատաշ մեծ քարերով, այլ իրականացված են ամբողջ կառույցում կիրառված քարատեսակով և ընդգծվում են առաստաղի հարթությունում 5-10 սմ բարձրադիր, երբեմն միայն սվաղով արտահայտվող գծերով: Տպավորություն է ստեղծվում, որ գավթի խաչվող կամարները ոչ այնքան կառուցողական (երդիկ գոյացնելու և ռոտոնդա կրելու), որքան դեկորատիվ գործառույթ ունեն:

Գավթի ծառայել է նաև որպես տապանատուն, որի հատակն ամբողջովին պատված է հոգևորականների տապանաքարերով:

Չանգակատունը կառուցվել է ավելի ուշ և շինա-

րարական տեխնիկայով, քարերի գույնով ու չափերով խիստ տարբերվում է եկեղեցուց և գավթից: Նմանօրինակ լուծում ունեն նաև եկեղեցու և գավթի հետագա վերանորոգումները: Կարելի է եզրակացնել, որ զանգակատան կառուցումը և վերանորոգումները կատարվել են միաժամանակ, և դա, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել մելիք Բեգլարյանների օրոք՝ ԺԸ-ԺԹ դարերում, այլ ոչ թե 1551 թ., ինչպես կարելի էր ենթադրել: Դրա վկայությունն է նաև եկեղեցու և գավթի տանիքի հողածածկույթի տակից հայտնաբերված կղմինդրածածկը, որը բնորոշ է նշված դարաշրջաններին:

Չանգակատունը կցվել է գավթի ճակատին առանց կցակապերի: Այն նեղ, սլացիկ, բարձր շինություն է, որն իր հորինվածքով, գույնով, կառուցվածքով համալիրին խորթ կառույց է: Պսակված է եղել քառապլան ռոտոնդայով, որն այժմ չի պահպանվել: Դրված լինելով անմիջապես գավթի մուտքի առջև՝ վերջինիս բարձրության հատվածում հպված է նրա պատին, և կցակապը կազմակերպված է միայն վերին մի փոքր հատվածում: Չանգակատունն ուղղահայաց ձգված համաչափության և թույլ հիմք ունենալու հետևանքով թեքվել, հեռացել է գավթի ճակատից և առաջացրել վթարային լայն ճեղք:

Պեղումներ. պեղման աշխատանքները սկսելուց առաջ հուշարձանախմբի վիճակը նախանձելի չէր: Այն պատված էր մեծ ծառերով ու թփուտներով և լիովին տեսանելի չէր ոչ մի կողմից: Շատ թե քիչ բաց էր արևմտյան ճակատը, որի առջև՝ մոտ 35-40 քմ բաց հրապարակի հարավային եզրին աճած թփուտների վրա համատարած կախված էին ուխտավորների՝ տարբեր գույների, չափերի, ձևերի լաթեր, շորեր, թաշկինակներ՝ ստեղծելով բավական տհաճ տեսարան: Այստեղ սփռված էին նաև մատաղ արված կենդանիների, թռչունների՝ գարշահոտություն տարածող ոտքերն ու գլուխները: Համալիրի հյուսիսային ճակատին կից մասրենիները թույլ չէին տալիս մոտենալ, գոնե լուսանկարել պատին ազուցված երկու մեծ խաչքարերը: Եկեղեցու շուրջը մնացել էր մի նեղ արահետ, որով հնարավոր էր շրջանցել հուշարձանախումբը՝ ծառերի միջից հատված առ հատված դիտելով ճակատները: Եկեղեցու և գավթի հարավային ճակատին կից աճել էին երկու մեծ ծառեր, որոնց արմատները մտել էին հիմքերի մեջ, իսկ ճյուղերը պառկած էին տանիքին: Բավական մեծ ծառեր կային նաև գավթի ու եկեղեցու հողածածկ տանիքին, որոնց արմատների քայքայիչ ազդեցությունը, ամենայն հավանականությամբ, օժանդակել է եկեղեցու թաղի փլուզմանը:

Մաքրման աշխատանքները սկսեցինք թփերի ու ծառերի հեռացումով: Կտրվեցին ու արմատախիլ արվեցին բոլոր թփերն ու փոքր ծառերն արևմտյան ու հյուսիսային ճակատների դիմաց: Հարավային ճակատին կից աճած մեծ, հզոր ծառերը կտրվեցին



Դռնեկավանքի եկեղեցու փլուզված հատվածը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)

մաս-մաս այնպես, որ ճյուղերը չընկնեն շինությունների վրա: Մրանք արմատախիլ չարվեցին, քանի որ արմատները մտած են պատի մեջ, և ցանկացած գործողություն նրանց հետ կարող էր փլուզում առաջացնել: Ջգուշությամբ, հնարավորինս ներքևից կտրվեցին մաս տանիքին աճած ծառերն ու թփերը: Բոլոր այդ ծառերի բաց կտրվածքները մշակվեցին բուսականության աճը խաթարող հերբիցիդով:

Եկեղեցու և գավթի հյուսիսային ճակատների տակ կուտակված էին փլատակների թմբեր: Դրանց




Պեղումների ընթացքում հայտնաբերված արձանագիր տապանաքարեր (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)


միջի շինաքարերն առանձնացվեցին և հավաքվեցին հրապարակի անկյունում, իսկ հողը լցվեց հարթակի եզրագծին՝ լայնացնելով ու հարթեցնելով հյուսիսային հրապարակը: Այստեղ բացվեցին մինչ օրս անհայտ չորս տապանաքարեր, որոնցից երեքն արձանագիր էին.

Այս է տապան մարմնոյ | տ(է)ր Մովսէս եպ(իս)կ(ոպո)սին, ՌՃԽԱ (1692) թվին:

Այս է շիրին հողապատեան, դիակիր եւ դանպարան, ըսկզբնամայր եւ վերճնամայր, որում յառնեմք գոլ հաւասար ի փող վերճի էռ, եմ՝ տ(է)ր Յոհ/անի, ի այս շիրմի որդի գոլով մէլիք Իսայիսանի, ի գովելեաց ազգաց մեծի, | թվ(ին) ՌՃ/ՀԹ (1730):



Այս է հանգիստ Իսայիսան աղին, | սա էր որդի մէլիք Պեկարին, թվ(ին) | ՌՄ...:



Հարավային ճակատի ծառերը հեռացնելուց հետո մասամբ հարթեցվեց հրապարակը, որտեղ բաց-


վեցին նորահայտ խաչքարեր: Ուղղվեց ու կանգնեցվեց լանջից գլորված «Զոխվայի» մեծ, քանդակագարդ և արձանագիր տապանաքարը:

Այս է հան(գ)իստ Ապառ քովխին, թվ(ին) ՌՉԱ (1632):

Կանգնեցվեց երեսնիվայր ընկած երեք խաչքարերից բաղկացած հուշապատի կենտրոնական

խաչքարը, որը տեղահան էր և հենած գավթի արևմտյան ճակատին, տեխնիկական բարդությունների պատճառով չտեղափոխեցինք, այլ նրա տեղում ժամանակավոր տեղադրեցինք մոտակայքում գետնին պառկած մեկ այլ խաչքար:

Գավթի արևմտյան ճակատը մաքրելիս բացվեց ԺԷ դարի մի խաչքար: Մեկ այլ խաչքար էլ գտանք



գերեզմանոցի տարածքում, որը տեղափոխվեց ու կանգնեցվեց վերջինիս կողքին:

Կատարվեցին գավթի ու եկեղեցու տանիքի զոնդաժներ՝ երեք տեղամասերում հին ծածկի կառուց-

խաչքարը, որը, սակայն, կերտված լինելով փխրուն, վատորակ ավազաքարից, ամբողջովին քայքայված էր: Միայն թեթև նշմարվում է երբեմնի մեծ խաչի ուրվագիծը: Հուշապատի առաջին, մեծ



Հուշապատի խաչքարերը (լուս.՝ Ս. Այվազյանի, 2012 թ.)

Խաչքարեր գավթի արևմտյան ճակատին կից

վածքն ու նյութը պարզելու նպատակով: Ամենուր բացվեցին իրար մեջ հազցված կիսաբոլորակ, ուշ շրջանի կղմինդրների խարխլված շարքեր, որոնք դրված էին անմիջապես տանիքը պատող սալաքարերի և կրաշաղախի հիմքի վրա:

Կղմինդրաձածկում առանձնապես յուրահատուկ է տակդիր կղմինդրը, որը տակի հատվածում



մոտ 2 սմ ելուն ունի: Դա արված է նրա համար, որ մտնելով շաղախի մեջ՝ կղմինդրին հնարավորություն տրվի ավելի ամուր կառչելու տանիքից: Առավել վաղ շրջանի՝ սեղանաձև սաջ հիշեցնող կղմինդրներ, որոնց բեկորները հանդիպում էին փլատակներում, տեղում չհայտնաբերվեցին: Վստահաբար կարող ենք ասել, որ դրանք կառույցների նախնական՝ ԺԳ դարի ծածկից մնացած պատառիկներ են:

Եկեղեցու թաղի հյուսիսային կեսը գրեթե ամբողջովին փլուզվել էր մոտ մեկ տարի առաջ: Ամենրուպե սպառնում էին վայր ընկնել վերևից կախված քարերը, հողակույտերն ու կղմինդրները: Եկեղեցու

հատակն ու բեմն ամբողջովին պատված էին փլատակներով:

Ներսում առաջին հերթին մաքրվեցին փլատակները և վերևից կախված քարերը: Շինաքարերն առանձնացվեցին, իսկ հողը լցվեց արևմտյան հրապարակի եզրին՝ զգալիորեն ընդլայնելով տարածքը: Բացվեցին եկեղեցու՝ նախքան փլուզումը եղած ներ-



քին ծավալները, որոնք մանրամասն լուսանկարվեցին ու չափագրվեցին: Այնուհետ սկսեցինք բեմի պեղումները:

Սկզբից պեղվեց բեմի հյուսիսային կեսի կործանված թաղակապի հատվածը: Ի դեպ, բեմի մակերեսը տոփանված հողի լիցք էր: Այն պարունակում էր մանր քարեր ու շինաքարեր, կղմինդրների բեկորներ, սակավաթիվ խեցեղենի կտորներ, հաստ կրաշաղախի սվաղի մնացորդներ, կենցաղային իրերի բեկորներ, այլ կերպ ասած՝ բեմը լցված էր շինադրով: Այստեղ գտանք արձանագիր քարի փոքր բեկոր:

Լիցքի զանգվածի միջնամասից հայտաբերվեցին երկաթից, պղնձից ու մելխիորից պատրաստ-



ված մոմակալների մանր հատվածներ, ինչպես նաև վերջին շրջաններին բնորոշ իրեր: Դա վկայում է, որ բեմը նախկինում ևս փորվիր էր: Գրեթե անմիջապես բեմի մակերեսի տակ բացվեց արևելյան պատի վրա երևացող թաղերի կցակետով բարձրացված միջնապատը, որը բաժանում է բեմը երկու




խաչքարեր գավթի արևմտյան ճակատին կից

հավասար մասերի: Միջնապատի և նորակառույց բեմի ճակատակալ պատի միջև մնում է մի փոքր ազատ տարածք: Մոտ 0,4 մ խորության վրա հայտնաբերվեց երեսնիվայր ընկած խաչքարի վերնամասը: Ուղղանկյուն սենյակն ամբողջովին բացելուց հետո խաչքարը փայտե լծակներով ու պարանի օգնությամբ զգուշությամբ կանգնեցվեց արևելյան լուսամուտի տակ՝ պատին նշմարվող կրաշաղախի սվաղով հետագծի իր տեղում: Մոխրագույն կրաքարից կերտված քանդակագարդ լավ պահպանված արձանագիր խաչքարը կրում է 1457 թ.

ԹՎ(ին) ՋՁ (1457), | ես՝ Սարգիս, որդի Թ/արիչին, կանկն/եցի զխաչ/ս ինձ եւ | ամուսին Մարթին


եւ ծնո/րաց իմոց եւ | զաւակաց, ի | հա(յ)րապետու(թ)ի(ւն) | տ(է)ր Ոհան/իսին, դանու(թ)ի(ւն) Ջհ/անշահին:

Պեղվեց նաև հարավից կից մակերեսը, որտեղ բացված ուղղանկյուն սենյակը ճիշտ կրկնում է նա-



խորդին այն տարբերությամբ, որ այստեղ արևելյան պատին կցված խաչքարը հայտնաբերվեց իր իսկ տեղում, անվնաս կանգնած:

Այն գրեթե նույն ժամանակի է՝ ԺԳ-ԺԵ դդ. և ավելի է նմանվում քառանիստ սք. սեղանի ճակատա-



յին երեսին փորագրված զույգ խաչապատկերի, քան առանձին դրված խաչքարի: Թե ինչու՞ են կանգնեցվել ԺԳ դարի մատուռ-ավանդատներում ԺԵ դարի խաչքարեր, և ի՞նչ է եղել նրանցից առաջ այստեղ կանգնած, կարելի է միայն ենթադրել, բայց հստակ է, որ խաչքարերը՝ որպես սք. սեղան, և դրանք պատին ամրացնող սվաղն աղոթասրահների ոչ սկզբնական, այլ հետագա վերանորոգման արդյունք են:

Երկու բացված ծավալները մաքրելուց հետո պարզվեց, որ դրանք աղոթասենյակներ են՝ մա-

տուռ-ավանդատներ: Պատերը սվաղված են կրաշաղախով: Սվաղված է նաև մայր հողի վրա նստած հատակը, ուր արևելյան եզրամասում՝ որպես սք. սեղան օգտագործվող խաչքարերի դիմաց, սվաղի շերտի 3-5 սմ բարձրությամբ նշմարվող հետագծով ընդգծված է աղոթասրահի բեմը: Հատակի սվաղով է նշմարվում նաև մուտքի շեմը: Մատուռ-ավանդատներն ընդգծված մուտք չունեն և բաց են եղել: Դրանց մուտքերը կազմվում են հյուսիսային ու հարավային պատերին կցված դեպի սկզբնական բեմը բարձրացող աստիճանների հետնապատերի ու միջնապատի միջև բաց տարածությամբ:

Մատուռ-ավանդատների պատերի, թաղերի, սվաղների կցակետերը մանրամասն զննելու արդյունքում կարելի է վստահաբար պնդել, որ աղոթասրահները կառուցվել են եկեղեցու հետ մեկտեղ, միևնույն նախագծով ու մտահղացմամբ և կազմում են եկեղեցու սկզբնական տեսքի բաղադրամասը: Թաղակապ ծածկերի հարթ տանիքին է նստել եկեղեցու հին բեմը, որը բարձր է սրահի հատակից 220 սմ: Այնտեղ էին բարձրանում երկու կողային քարե աստիճաններով: Բեմի նմանօրինակ բարձրադիր կառուցվածքով են բացատրվում եկեղեցու անսովոր սլացիկությունը, պատուհանների ու խորանի որմնախորշերի տարակուսելի բարձրությունը:

Հայկական ճարտարապետության մեջ եկեղեցու խորանի երկհարկանի կառուցվածքը հազվադեպ հանդիպող երևույթ է: Մասնավորապես նման կառուցվածք ունեն Գեղարքունիքի մարզի Այրք գյուղի Սք. Աստվածածին և Սք. Գևորգ եկեղեցիները:

Հռոեկավանքի եկեղեցու նախնական բեմն ինչ-որ պատճառով քանդվել է և սկզբնական տեսքով այլևս չի վերականգնվել: Դա կարող էր տեղի ունենալ ԺԶ դարի հրոսակային որևէ արշավանքի ժամանակ, որի մասին անուղղակիորեն խոսում են մատուռ-ավանդատների հատակներին ու պատերի հիմնամասերի սվաղի վրա ուժեղ կրակից (հրդեհից) սևացած հետքերն ու բարակ մոխրաշերտը: Հնարավոր է, որ վանքի թալանի ու հրդեհի արդյունքում մատուռ-ավանդատների թաղերը խարխլվել, կործանվել են: Դրանք վերականգնելու անհնարինության կամ աննպատակահարմարության պատճառով կործանված աղոթասրահները լցվել են շինաղբով, հարթեցվել, իսկ բեմն իջնելով ստացել է մեզ հասած տեսքը: Բացառված չէ, որ հյուսիսային աղոթասրահի քանդակազարդ խաչքարը, որը բավական բարձր էր և դուրս էր ցցվում նորակառույց բեմի հատակից, նպատակային պոկվել է պատից ու պառկեցվել տեղում՝ հողի վրա:

Հուշարձանախմբի վերականգնման նախագիծ կազմելու համար եկեղեցու, գավթի ու զանգակատան արտաքին պատերի տակ բացվեցին 1 x 2 մ չափերով ստուգողական երեք խուզահորեր՝ շինությունների հիմքերի վիճակն ու խորությունը պարզե-




Այբ զյուղի Սբ. Աստվածածին և Սբ. Քևորգ եկեղեցիների խորանատակ ավանդատները

լու նպատակով: Բոլոր խուզահորերում՝ անմիջապես պատերի տակ, հանդիպեցին սալարկղային ու հիմնահողային, մեծ մասամբ մանկական քաղումներ: Եկեղեցու արևելյան ճակատի տակ՝ 0,5-0,8 մ խորության վրա, բացվեցին ԺԳ դարի գերեզմանոցի հարթ, տափակ սալատապաններ:

Գավթի հարավարևմտյան մասում հայտնաբերվեց արձանագիր մի տապանաքար.

Այս է հանգիստ տեր Դաիթին, որ եւ / հանգաւ, թվ. ՌՃԵ (1606)-ին:

Թվակիր մի խաչքար էլ գտնվեց եկեղեցու հարավային պատի տակից.



Թվ. ՋԿԳ (1514):

Եկեղեցու և գավթի ծածկերի վերանորոգման ժամանակ՝ ԺԷ-ԺԸ դդ, կղմինդրածածկի տակ տեղադրվել են սալաքարեր, որոնցից շատերի վրա կան ավելի վաղ շրջանի խաչաքանդակներ, իսկ դրանց որոշ մասն ունի նաև արձանագրություններ: Պեղման աշխատանքների ընթացքում հայտնա-





ա. Հուշարձանախումբը մաքրվեց բուսականությունից և հայտնվեց ձեռակերտ բացատում: Այն դարձավ տեսանելի, ընկալելի ու ընդունելի բազմաթիվ ուխտավորների, այցելուների ու զբոսաշրջիկների համար:

բ. Եկեղեցու ներսը և դրսի ճակատները մաքրվեցին հողաշերտից ու փլատակներից, ընդլայնվեցին և հարթեցվեցին հուշարձանին հարող հրապարակները:

գ. Պարզվեցին համալիրի ծածկի կառուցվածքն ու նյութը:

դ. Ծշտվեցին շինությունների հիմքերի կառուցվածքն ու հզորությունը:

ե. Հայտնաբերվեց նորահայտ արձանագիր գերեզմանական ութ հուշարձան, որոնցից երեքը՝ խաչքար, հինգը՝ տապանաքար:

զ. Բացահայտվեց հին գերեզմանոցի առկայության փաստը, և որոշվեց նրա տեղադրման խորությունը:



Խաչքարեր՝ հայտնաբերված գավթի և եկեղեցու կղմինդրածածկի տակից

բերվեցին տեղից պոկված և փլատակներում հայտնված նմանատիպ խաչասալեր:

Ամփոփելով ասվածը՝ նշենք Հոռեկավանքի պեղման-մաքրման աշխատանքների հիմնական արդյունքները.

է. Հայտնի դարձան եկեղեցու՝ տարակուսանք առաջացնող հորինվածքային մանրամասները, և հստակեցվեց ներքին ծավալների սկզբնական տեսքը:

ԵՂԵՌՆԻ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐՆ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մամվել Կարապետյան

Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Անատոլիայի հայկական գաղթավայրերում 1894-1921 թթ. ընթացքում մի քանի փուլերով իրականացված հայերի ցեղասպանությունից հետո, ինչպես Հայաստանի Հանրապետության զանազան բնակավայրերում, այնպես էլ աշխարհի բազմաթիվ երկրներում կանգնեցվել են անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող բազմաթիվ մեծ ու փոքր հուշարձաններ:

Պարզվում է, սակայն, որ հիշատակի այս կարգի առաջին հուշարձանները կերտվել ու կանգնեցվել են հենց ցեղասպանություններ իրականացված վայրերում: Վերջիններս, անշուշտ, անմահացնում են նախքան Մեծ եղեռնը տեղի ունեցած ցեղասպանությունների զոհերի հիշատակը, քանի որ 1915 թ.-ից հետո բնակչության իսպառ բնաջնջման հետևանքով այդ անելն այլևս անկարելի էր:

Հայտնի չէ, թե մնան քանի հուշարձաններ են կերտվել, օրինակ, միայն Արևմտյան Հայաստանում, սակայն, ինչպես ցույց են տալիս պահպանված թեկուզ և սակավաթիվ նմուշները, այդպիսիք անվերապահորեն եղել են:

Վերջին տարիներին դեպի Արևմտյան Հայաստան իրականացված շրջագայությունների ընթացքում, ի թիվս տարաբնույթ այլ հուշարձանների, հանդիպել ենք նաև Համիդյան ջարդերի ժամանակ ոչնչացված հայերի հիշատակը հավերժացնող առնվազն երեք հուշարձանի: Դրանք պահպանվել են Հայոց Ձոր գավառի Հնդստան և Ռշտունիք (Գյավաշ) գավառի Վառենց գյուղերի և Դիվաբույնի վանքի գերեզմանոցներում: Դրանցից առաջինը կերտվել է զանգվածային, իսկ վերջին երկուսը՝ խմբակային սպանությունների զոհերի հիշատակին:

Եվ այսպես, Հնդստան գյուղի ավերակ եկեղեցուն կից գերեզմանոցում պահպանված հուշակոթողը հաղորդում է 105 նահատակների՝ միատեղ, մույն վայրում ամփոփված լինելու մասին: Վերջինս վերին ձախ անկյունից կտրված, ուղղանկյանը մոտ անկանոն եզրագծով կոթողաձև քար է, որի մի երեսին պարզ խաչի քանդակի շուրջ վեց տողով արձանագրված է.

*Յուն(ի)ս, / նահատակելալք ԾԵ (105) անձ/ինք
աստ ամ/փոփեալ կ/յան:*

Պարզելու համար, թե որ թվականին և ինչ հանգամանքներում են հնդստանցիները 105 զոհ տվել,



1896 թ. հունիսին հայրենի գյուղում սպանված 105 հնդստանցիների հիշատակը հավերժացնող սալատապանաձև հուշաքարը



1894-1896 թթ. հայրենի վառենց գյուղում սպանված վառենցցիների հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանը վառենց գյուղի եկեղեցուն կից գերեզմանոցում

անշուշտ, հարկ էր պրպտել գրավոր հիշատակարանները: Գրանց օգնությամբ էլ բացահայտվում է, որ քուրդ համիդիեականների և թուրքերի համատեղ հարձակումը Հնդստանի վրա տեղի է ունեցել 1896 թ. հունիսին: Քաջարի հնդստանցիները չեն ընկրկել և համառ դիմադրություն են ցույց տվել, սակայն հայերը ցավալիորեն որքան քաջ, մույնքան էլ միամիտ են գտնվել և հավատ ընծայելով թշնամու երդումներին՝ տեղի են տվել:

Ահա թե ինչ է արձանագրել ժամանակի մամուլը եղելության մասին. «...2-3 օր ընդդիմադրեց, մնալով աննուաճ և քրդական արշաանքները յետս մղելով կարևոր կորուստներով: Նենգաւոր համիտիյէն տեսնելով, որ չէ կարող նուաճել այս գիտը գօրու-

թեամբ, կը դիմէ դաւաճանութեան: Կերդնու, բաղդ կը տայ, որ եթէ Հնդստանցիք յանձնուին, համիտիյէն չը պիտի վնասէ անոնց: Միամիտ հայերն անոնց խոստմանց հաւատալու դիւրահաւանութիւնը կունենան և կը յանձնուին: Համիտիյէն ներս մտնելով կը կոտորէ 64 անձինք»¹: Նույն դեպքերին արձագանքած մեկ այլ տեղեկագրի համաձայն՝ գյուղի մարդկային կորուստը կազմել է «95 սպանուած, 146 կոտորուած և առևանգուած»²:

Ինչ վերաբերում է լրագրային տվյալներում և վիճակագրում արձանագրված զոհերի թվաքանակի անհամապատասխանությանը, կարծում ենք առա-

1 «Արարատ», 1896, էջ 583:

2 «Հնչակ», 1896, № 16, էջ 123:



Հատվածներ Վառենց գյուղի գերեզմանոցից

վել վստահելի կարելի համարել վիճազրի հաղորդումը:

Յեղասպանության զոհերի հիշատակին կանգնեցված մի խաչքար-հուշարձան էլ պահպանվել է Վանա լճի հարավային ափին գտնվող Վառենց գյուղի (ներկայումս՝ գյուղատեղի) գերեզմանոցում: Խաչքարը կերտվել է 1897 թ. Համիդյան ջարդերին զոհ զնացած մի խումբ վառենցցիների՝ Մարտիրոսի, Ղազարի, Ավետիսի, Վարդանի, մյուս Ղազարի, Մարգարի, Սարգսի և Վարդերի հիշատակին: Արձանագրությունը փորագրված է խաչքարի երեսին՝ 17 և թիկունքին՝ 4 տողով (չափ.՝ 1,45 x 1,65 մ).

Մարտիրոս, Ղազարի հոգին, | Ավետիս, | Վարդան, | Ղազար, | Մարգար, | Սարգիս, | Վարդեր: | 1896-ին (ն)այս {ն}տակ(ե)ցին 1897-ին | խա(երի)ն էքէրին... | դա... | օրն Ե (5) է...: | Տ(ե)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Զ(րիստո)ս: | Յ(ի)շ(ա)ղ(ա)կ է Բանիլի(°) արդարոգ | մաքոր մաղթանօք և բար(ե)խո[ս] | Ա(ստուա)ծած(ն)այ տ(ե)ր Յ(իսու)ս ա(ստուա)ծ...: | 1895-ին աշնան | և գարնան 1896 նահատական: | 1894 թվ(ին) Ռ-ՅԽԶ (1897) | և խաերուս օծում:

Մի խումբ նահատակների հիշատակն էլ հավերժացնում է Դիվաբույնի վանքի գերեզմանոցում պահպանված խաչքարը (չափ.՝ 85 x 57 սմ): Վերջինս կրում է հետևյալ արձանագրությունը.

Թվ(ին) Ռ-ՅԽԴ (1895), Յարո(ւ)թ(ի)ն նահատակվաց է, Մարօ, Խումար, տ(ե)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Զ(րիստո)ս:

Վերջում ցանկանում ենք ուշել, որ Արևմտյան Հայաստանում պահպանված ցեղասպանության



1895 թ. նահատակների հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձան Դիվաբույնի վանքի գերեզմանոցում

զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանները գրավոր տարատեսակ վավերագրերի կողքին ունեն իրենց բացառիկ կարևորությունը և անվերապահորեն նույնպես նպաստում են ցեղասպանության առանձին դրվագների լուսաբանմանը³:

³ Հոդվածը՝ իբրև զեկույց, առաջին անգամ ներկայացվել է սույն թվականի մարտի 23-ին «Հայոց ցեղասպանություն. մարտահրավերներ հարյուրամյակի նախաշեմին» միջազգային գիտաժողովին:

ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սամվել Կարապետյան

Բազմալրը միջնադարյան Հայաստանի մեծահամբավ վանական այն համալիրներից էր, որն իր պատվավոր տեղն է գրադեցրել հոգևոր-մշակութային անխամերձ խոշորագույն կենտրոնների՝ Հռոմոսի, Շիրակավանի և Արգինայի կողքին:

Վանքը հիմնադրել է Վահրամ իշխանի որդի Սմբատ մագիստրոսը 1010 թ.¹:

Բազմալր անվամբ է հայտնի նաև առնվազն միջնադարից վանքին կից գոյություն ունեցած գյուղը, որը, ի դեպ, արդեն ԺԹ դարում հայաթափ էր: Համենայն դեպս, ինչպես 1840-ական թթ. («...այժմ տաճկաբնակ է գիւղն...»²), այնպես էլ 1878 թ. («Գոգլուճա քրդաբնակ գյուղ...»³) հիշվում է որպես այլազգիներով բնակեցված գյուղ, սակայն 1878-1879 թթ. ռուս-թուրքական պատերազմից անմիջապես հետո, ըստ ամենայնի, միառժամանակ անբնակ մնացած գյուղում հաստատվում են պատերազմի հետևանքով բնավեր եղած որոշ թվով հայեր, որոնք մինչև 1881 թ. հասցնում են իրենց համար նոր բնակարաններ կառուցել⁴: Սակայն վերջիններս հայրենի օրրանից հեռացվում են ռուսական իշխանությունների պարտադրանքով, ընդ որում, միանգամայն անարդար և մինչև իսկ բիրտ ուժի կիրառմամբ⁵: Ահա թե ինչ է գրել ժամանակի մամուլը կատարվածի մասին. «Ալաջի ստորոտում, Բազմալր գիւղի բնակիչներին հրամայված է թողնել իրենց դարաւոր դաշտերը, հայրենիքը: Բազմալրցիներին տալիս են վերջապէս Ալաջի լեռան մի կողմումը մի անջուր և ժայռոտ տեղ, որտեղ ոչ թէ կարելի չէ պարապել հողագործութեամբ, որտեղ

նրանց չեն էլ տալիս արօտատեղի: Իսկ Բազմալր յանձնում են թափառող քրդերին: Գաղթած հայերը, որ մի որևիցէ կերպով կարողանան պահպանել իրենց կենդանիները, յարաբերութիւնների մէջ են մտնում մօտիկ քուրդ բնակիչների հետ և որոշած վճարով ստանում են արածացնելու այն արօտատեղերում, որոնք խլուել են հայերից և տրուել քրդերին: Այս մասին Ղարսի իշխանութիւնը տեղեկանալով, արգելում է քրդերին արօտատեղին հայերին տալու: Հայերը ընդդիմանում են այդ կարգադրութեանը, ամենևին չը ենթադրելով, որ այդ կարող է իշխանութիւնից լինել, այլ կարծում են, որ քուրդերը ուզում են անելի վճար ստանալ արօտատեղիի համար: Բայց նրանք շուտով իրենց սխալը տեսնում են...: Գաղթողները ծախում են իրենց կենդանիները, թողնում են իրենց նոր շինած բնակարանները և գաղթում են Թիւրքիա»⁶:

Հայտնի է, որ այս կերպ վերստին քրդաբնակ դարձած և պաշտոնական տեղեկագրերում արդեն Ղոգլուջա անվամբ վկայված գյուղը 1908 թ. ուներ 460⁷, իսկ 1914 թ.՝ 552⁸ բնակիչ:

2010 թ. գյուղն ուներ 16 տուն քուրդ-շաֆի բնակիչ, որոնք իրենց իսկ վկայությամբ սերում էին Երևանի նահանգի գյուղերից:

Ահա այս գյուղի արևմտյան բարձրադիր եզրին էլ գտնվում է ԺԱ-ԺԳ դարերի ընթացքում ամբողջացած Բազմալրի մեծահռչակ վանքը՝ տեղադրված Արջո-Առիճ լեռան արևելահայաց լանջերից սկիզբ առնող և Բազմալրի միջով Անիի ուղղությամբ հոսող վտակի հանդիպակաց ափերին և բաղկացած միմյանցից փոքր հեռավորություն ունեցող երկու խմբից:

Առաջին խումբը գտնվում է վտակի աջ կողմում և ներկայացնում է համալիրի՝ միմյանց կից կենտրոնական կառույցները: Վանքի այս հատվածը բաղկացած է գմբեթավոր մեկ մեծ, երկու փոքր եկեղեցիներից, մատուռից, գավթից և սյունասրահից:

Վտակի ձախ կողմի հուշարձանախումբը բաղկացած է մեկական եկեղեցուց և մատուռից, ինչպես նաև վանքի այս հատվածում տարածված գերեզմանոցից:

Վանական համալիրի գրեթե բոլոր կառույցներն էլ իրենց որմերին կրել են բազմաթիվ արձանագրություն-

1 Վանքի հիմնադրման տարեթիվն, կառուցողի կենսագրական մանրամասներին առնչվող քննությունը, ինչպես նաև համալիրի առանձին կառույցներին վերաբերող հիշատակությունների ժամանակագրության մասին նյութերն արդեն մի խիստ շահեկան ուսումնասիրությամբ և սպառիչ կերպով ներկայացրել է Մատենադարանի գիտաշխատող Կարեն Մաթևոսյանն իր «Անի-Շիրակի պատմության էջեր» գրքում (Երևան, 2010):

2 Մարգարեան Ն., Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վեներտիկ, 1864, էջ 176:

3 Սրապյան Կ., Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1970, № 2, էջ 111:

4 Ի դեպ, վանքամերձ թաղամասում մինչև հիմա էլ պահպանվել են 1879-1881 թթ. ընթացքում հայերի կառուցած հազարաչեն հորինվածքով տներից մի քանիսը, որտեղ 1881 թ.-ից ի վեր ցարդ քրդեր են ապրում:

5 Բազմալրի հայաթափումը նորանվաճ Կարսի մարզը բնիկներից պարպելու և այլազան եկվորներով բնակեցնելու ռուսական ընդհանուր ծրագրի տակ մի բաղադրիչն էր, քանի որ անցնող տարիներին նույն ճակատագրին արժանացան մարզի հայաբնակ մի շարք այլ գյուղեր:


6 «Մեղու Հայաստանի», 1881, № 82, 10 մայիսի, էջ 2:

7 Кавказский календарь на 1910 г., Тифлис, 1909, с. 293.

8 Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914, с. 144.



Բազմաշրի վանքի ընդհանուր տեսքն արևելքից (լուս.՝ Երմակովի, ԺԹ դարի վերջ), հյուսիս-արևելքից և հարավ-արևմուտքից (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1912 թ.)



Քաղցնայրի վանական համալիրի և Ներկայիս քրդաբնակ Ղոզլուջա գյուղի վանքամերձ թաղամասի գլխավոր հատակագիծն ըստ ճարտ. Ա. Դակոբյանի, 2012 թ.

ներ: Դրանց ընդօրինակության և վերծանության գործին դեռևս 1840-ական թթ. առաջինը հետամուտ է եղել հայր Ներսես Սարգսյանը: Թեև նրա հավաքած նյութերը լույս են ընծայվել շուրջ երկու տասնամյակ անց⁹, այնուհանդերձ, թե՛ իրենից առաջ (Ս. Ջալալ-

յանց) և թե՛ հետո (Կ. Սրապյան, Ն. Էմին, Ղ. Ալիշան, Մ. Գևորգյանց, Կ. Բասմաջյան) հնավայրից վիմագրերի հրատարակություններ իրականացրած հեղինակների շարքում Ն. Սարգսյանի վերծանություններն առանձնանում են և՛ քանակապես և ամբողջականությամբ, և՛ առավել մեծ ճշգրտությամբ (գոնե պահպանված սակավաթիվ արձանագրությունների մերօրյա

⁹ Սարգսեան Ն., նշվ. աշխ., էջ 176-189:



Բազմայրի վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից և հյուսիսից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2010, 2008 թթ.)

համեմատական ուսումնասիրություններով պարզված արդյունքով), որը, ի դեպ, ներկա պայմաններում, երբ վանական համալիրի մեծագույն մասն արդեն իսպառ անհետացված է, պարզապես դժվար է գերազնահատել:

2000-2010 թթ. մի քանի այցելությունների (2000, 2005, 2007, 2008, 2010 թթ.) շնորհիվ տեղում իրա-

կանացված համակողմանի ուսումնասիրությունների շարքում մենք ևս անդրադարձել ենք վանական համալիրի վիմագրական ժառանգությանը գոնե այնքանով, որքանով որ վերջիններս առկա էին դեռևս կիսավեր կառույցների որմերին:

Հաշվի առնելով վիմագրերի աղբյուրագիտական եզակի նշանակությունն ընդհանրապես և



Բազմայրի վանքի ընդհանուր տեսքն արևելքից (լուս.՝ Գ. Առաքելյանի, 2010 թ.)

Բազմայրի վանքում եղածները մասնավորապես, ստորև, ըստ համալիրի առանձին շինությունների, ներկայացնում ենք վանքի վիմագրական բոլոր հուշարձանները, որոնք, ինչպես երևում է, առկա են եղել համալիրի գրեթե բոլոր կառույցների որմերին (մի խումբ վիմագրերի՝ ո՞ր շենքին պատկանած լինելը մնում է անորոշության մեջ)¹⁰:

Սր. Աստվածածին մայր եկեղեցի

Ա. Արտաքին արևելյան որմին. «Ի կողմն արևելեան ասագ տաճարի», ոչնչացված է.

Ի ՆՂԱ (1042) ք(ին), ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի հայոց կաթաղիկոսի եւ ի թագաւորութեանն Գագկա շահնշահի որդոյ Աշոտոյ կամ եղե իմ՝ Գրիգորո ծաղկանս եւ իմ որդեացս, որ տուի զիմ զանձագին կողպականին, որ Վասլին, Փրնդկին ընդդէմ է ի Բզմայրին վանս ի ս(ուր)բ Ա(ստուա)ծածինն ի ձեռն առաջնորդի հար Ստեփաննոսի վանն Վասլին արեւշատութեան եւ իւր որդեացն եւ իմ՝ Գրիգորո մեղաց թողութեան եւ ոգոս փրկութե(ան) եւ որդեաց իմոց եւ հայր Ստեփաննոս եւ միաբան եղբարքս կամաւ յանձն առին, որ ամենայն ամի զՊատրոսի եւ զՊետրոսի տաւնին ատարն պատարագն յամէն եկեղեցիսդ իմ եղբարն Մուկարի արասցեն եւ յետ վախճանի իմո ինձ մա-

տուցեն, արդ հայր որ լինի եւ զիմ ժամտ խափանէ, առաջի ա(ստուծո)յ իմ մեղացս պարտական լիցի, արդ եթէ որ ի մեծաց կամ ի փոքունց յիմոց կամ յաւտարաց եւ զայս հողս սուրբ ուխտես յապշտակեն այլկայրութեանն պատճառաւ, նգովեալ լիցի:

Հրատ. Սարգսեան Ն., էջ 178-179: Ջալալեանց Ս., Գանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիփլիս, 1858, էջ 36: Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 114: Армянския надписи в Карсе, Ани и в окрестностях последняго, перевод Н. О. Эмина, Москва, 1881, с. 54. Մելիքսեղեկ ք. Գեորգեանց Շիրակացոյ Համառոտ տեղագրութիւն հնութեանց մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անոյ, Աղեքսանդրապոլ, 1903, էջ 101: Բասմաջեան Կ., Հայերէն արձանագրութիւնք Անոյ, Բազմայրի եւ Մարմաշինո, Պարիս, 1931, էջ 137-138:

Ծանոթ. ի թիվս այլ մանր տարբերությունների՝ «Մուկարի» անձնանվան փոխարեն Գևորգյանցն ունի «Մուկարի»:

Բ. Ավանդատան պատին ներքուստ. «Յաջակողմն ի վերայ որման աւանդատան յարտաքուստ», ոչնչացված է.

Ողորմութեամբն ա(ստուծո)յ եւ ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի եւ ի թագաւորութեան Գագկայ շահնշահի որդոյ Աշոտոյ. ես՝ Թաղեոս, ետու զիմ...:

Հրատ. Ջալալեանց Ս., էջ 36: Սարգսեան Ն., էջ 179: Ալիշան Ղ., էջ 114: Армянския надписи..., с. 54. Գեորգեանց Մ., էջ 101: Բասմաջեան Կ., էջ 139:

Ծանոթ. ներկայացնում ենք Գևորգյանցի՝ առավել ամբողջական վերծանությունը:

Գ. «Ի հիւսիսոյ կուսէ արտաքուստ ի բարձու առաջնոյ մատրանն» կամ «Ի հիւսիսակողմն ի վերայ որման կից սորա եղեալ տաճարի, որ ի զանգակատան», 4 տող, ոչնչացված է.

10 Ինչ վերաբերում է Ն. Սարգսյանի հիշատակած վիմագրերով հարուստ «զանգակատանը», ապա խոսքը պարզապես գավթի մասին է:



Բագրատյի վանքի Սբ. Երրորդություն եկեղեցու տեսքը հարավից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

Ես՝ Սեդա տիկնաց տիկին, դուստր մեծին Վասակա, զուգակից Վահրամա իշխանաց իշխանի որդոյ Աշոտոյ իշխանաց իշխանի, տասանորդեցի զվաստակս գեղջն իմոյ գաղտաի ընծայելով ի ս(ուր)ք ուխտս Բագնայրիս վասն յիշատակի զարականին Ք(րիստոս)ի հարն իմոյ Վասակա փոխեցելոյ յաշխարհես, եթէ որ ի մեծամեծաց կամ ի փոքունց կալմիցի խափանիչ լինել, որոշեալ լիցի ի փառացն ա(ստուծոյ) եւ ընդ մեղաց մերոց համարս տացէ յառորն դատաստանի:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 36: **Մարգարեան Ն.**, էջ 188: Армянская надписи..., с. 66. **Բասմաջեան Կ.**, էջ 136:

Գ. Հարավային որմին՝ «Յահեկէ դրանն», 13 տող, ոչնչացված է.

ՈԾԸ (1209), | ի յամս ա(ստուա)ծապատիս տ(եառ)ն Սարգսի որդոյ Ապիրատին ես՝ Խաչ/երեսս, որդի Արրահամու Լառուեցի, ետու զիմ զանձագին երթն կողպակն ի Շարիվեցի վերեւն եւ մին ի ներքեւն մզքթին ընդդմ եւ երեք տուն | ի ներքեւն ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս ի ձեռն հար Սիմեոնի եւ ս(ուր)ք եղբայրութեանս եւ | զայգին որ Մարմետ եւ սքա փոխարէն հատուցին ինձ Ի (20) ար ժամ, Ը (8)՝ ինձ, | Ե (5)՝ Արրահամու, Գ (3)՝ Դինարկանն, Բ (2)՝ Հրանուշին, Բ (2)՝ արքայութեան ու հաս:

Ես՝ Մամխաթունս, դուստր Խաչերեսին, ետու զիմ կողպակն, որ ի Փողոցկտերն է ի բազրզնոցին, ի վերայ Սագունին եւ յապրանքն, ջաղաց գրաւակլան, զի գան... յուկի կազմեցի յիմ զարդիսքս եւ ե-

տու Սուրբ Աստուածածինիս եղբայրութեան, որք փոխարէն ետուն ինձ ամէն ամի Ա ար պատարկազ ինձ, որ հաստատ պահեն արինին յա(ստուծոյ) եւ որ զընծայս մեր յափշտակէ յուխտիցս *անէծք զՅուդային եւ զԿայենին...*:



Հրատ. **Մարգարեան Ն.**, էջ 179-180: **Ալիշան Ղ.**, էջ 117: Армянская надписи..., с. 54. **Բասմաջեան Կ.**, էջ 143-145:

Ծանոթ. Բասմաջեանը վերջին 6 տողը ներկայացրել է որպէս առանձին միավոր (էջ 144-145): Միայն նա ունի ընդգծված հատվածները:

Ե. Հարավային մուտքից աջ, ներքուստ. «Յաջմէ դրանն» կամ «Ի վերայ որման հարստային դռան արևմուտս կոյս զանգակատան», 13 տող, կիսով չափ ոչնչացված է.

ՈԾԹ (1210), | ի յամս ա(ստուա)ծարեալ եւ մեծարգո տ(եառ)ն Սարգսի վերադիտողի մայրաքաղաքին Անո եւ ի | պետական իշխանութեան շահրնշահ Ջաքարիայի, ես՝ Պարսիմո, որդի Հասանառաիս, | մեծանուն գեաղջն Աշականո միաբանեցա ս(ուր)ք ուխտիս եւ ետու զիմ հայրենի զայգին զՎարդենց նորքն ի Ս(ուր)ք յԱ(ստուա)ծածինս ի ձեռն բարիսէր եւ ս(ուր)ք եղբայրութեան | յիշատակ հոգո իմո, եւ սքա փոխարէն հատուցին ինձ զար յարութեան Ղազարու | բոլոր զեկեղեցիքս պատարազել զՔ(րիստոս) Ե (5), Պարսիմոի Ե (5), Խուրթին Դ (4), Սեդաին, որ հաստատուն պահեն արինին յա(ստուծոյ) եւ որք խափանեն, նզովին ի Ք(րիստոս)է:

Ես՝ Մրուան, միաբանեցա սրբոցս հետ իմ պարունին եւ ետուն ինձ ար մին պատարազ անխափան, | Ռայբիկ գրիչ:



1210 թ. արձանագրության պահպանված հատվածը (№ 4) Սբ. Աստվածածին եկեղեցու հարավային որմին ներքուստ, մուտքից աջ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

Ես՝ Սերոբ, որդի Ռատին Էրեւանեցի, ետու զիմ այգին, որ ի Չորդանն է ի | ս(ուր)ք ուխտս եւ պարտին սպասաւորք տորա ի տարին Դ (4) ար պատարագել զԶ(րիստո)ս յանուն | Սերոբին:

Հրատ. Ջալալյանց Մ., էջ 33-34: Մարգարեան Ն., էջ 180: Ալի-շան Գ., էջ 117: Армянские надписи..., с. 55. Գեորգեանց Մ., էջ 98-99: Բասմաջեան Կ., էջ 145-148:


Ջ. Հյուսիսային որմին ներքուստ. «Յաջակողմն հիսիսային լուսամտի ի ներքուստ», 12 տող, ոչնչացված է.

ՈԿԻԴ (1215), | ի յամս ա(ստուա)ծապատիւ հոգեւոր տ(եառ)ն Գրիգորոյ որդոյ Ապուղամբի ես՝ Յոհանէս քահանայ, որդի Կոստանդի Հոռմեանց, զնեցի զԳալլատնի ի կէսն ի տ(է)ր Գրիգորոյ որդոյ Ապուղամբի եւ ետու ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս, եւ | սպասաւորք ս(ուր)ք ուխտիս փոխարէն ինձ հատուցին յամէն ամի Խ (40) ար պա/տարագ. Ի (20) ինձ՝ Յոհանիսի, Ի (20) Սիսվարդին, Բ (2) Կոստանդի, Բ (2) Տիրամարն, Բ (2) Խոլցադեղին, Բ (2) Սիխելա, Գ (3) Խաչերեսին, Բ (2) Կատաին, Ա (1)



Ծանոթ. Գևորգյանցը չունի թվականը, փոխարենն ունի «ժոր Սիմանի»: Ջալալյանցի մոտ առկա են որոշ տարբերություններ և բացթողումներ: «Դ: (4) ար»-ի փոխարեն Ջալալյանցն ունի «շարսք աւոր»: Վերձանության մեջ ուղիղ տառերով ցույց են տրված մեզ հասած բեկորին պահպանված բառամասերը: «Ռայրիկ գրիչ» հատվածն ունի միայն Բասմաջեանը (էջ 147):





Տալիթիա տիկնոջն / կրկնոյ զատկին ի ժամն կատարիչք գրոյս արինեսցին յա(ստուծոյ), եւ ի եթէ որ զլիշատակս մեր խափանէ կամ յաւագաց, կամ յառաջնորդաց, մարդն այն նգովի յա(ստուծոյ) եւ ամենայն սրբոց եւ մեր / մեղացս պարտական եղիցի առաջի ա(ստուծոյ):

Հրատ. **Ջալալեանց Մ.**, էջ 38-39: **Սարգսեան Ն.**, էջ 183-184: **Ալիշան Ղ.**, էջ 121: **Արմանկյան Ս.**, էջ 56: **Գեորգեանց Մ.**, էջ 149-151:

Ծանոթ. «...ցաղեղին» անձնանունը Ղ. Ալիշանը վերականգնել է «(Խո)ցաղեղին»: Ջալալեանցի մոտ առկա են տարաբնույթ անձնանուններ: «զԳայլառճի» տեղանունը և «Բ (2) Տիրամարն, Բ (2) Խո» հատվածն ունի միայն Բասմաջյանը: Վերծանության մեջ ուղիղ տառերով ցույց են տրված պահպանված բեկորներին առկա բառամասերը:

Է. Արևմտյան որմին ներքուստ՝ «Յաջակողմն դրան», 4 տող, ոչնչացված է.

Ես՝ Խաչոսու, ծառա Բ(րիստոս)ի, ետու ի Ս(ուր)ք յԱ(ստուա)ծածինս զիմ զգա/նձագին զտունն մատ ի յԱպուղամբենց Ս(ուր)ք Գրիգոր եւ սկի արծ/արքի, եւ տքա փոխարէն հատուցին ինձ Բ (2) ար պատարագ / ամենայն ամի անխափան կատարիչք գրոյս արինին յաստուծոյ, ամէն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 180-181: **Ջալալեանց Մ.**, էջ 37: **Ալիշան Ղ.**, էջ 120: **Արմանկյան Ս.**, էջ 56: **Գեորգեանց Մ.**, էջ 102: **Բասմաջյան Մ.**, էջ 152-153:

Ծանոթ. այս և հաջորդ արձանագրությունները, հակառակ նրան, որ բովանդակությամբ միմյանցից անկախ են, Ն. Սարգսյանն ու նրանից օգտված Ղ. Ալիշանը միաձուլված են ներկայացրել, մինչդեռ Մ. Գևորգյանցն ու Կ. Բասմաջյանը՝ որպես առանձին միավոր: «Խաչատուր»-ի փոխարեն Սարգսյանն ու նրանից օգտված Ղ. Ալիշանը, ինչպես նաև ինքնուրույն ընթերցման հեղինակ Կ. Բասմաջյանն ունեն «Խաչոսու» անվանումը: Բասմաջյանը չունի «արինին յաստուծոյ, ամէն» վերջնամասը:

Ը. Նախորդից ցած, 4 տող, ոչնչացված է.

Ի հայրապետութեան հոգետոր տ(եառ)ն Գրիգորի եւ յառաջնորդութեան հար Սիմեոնի ես՝ Պաղոս երեց, ետու զի/մ այգին ի Ծաղկոցն, որ յԱշնակ

հնձանովն գեղին դեխ եւ եղբարքս ետուն ի տարին Ժ (10) ա/ր պատարագ, Դ (4) ար ինձ, Դ (4) իմ հարն՝ Ղազարայ, Բ (2) ամուսնոյն իմոյ՝ Տիրանցին, կատարիչքն / արինեալ եղիցին յաստուծոյ և ներհակքն պարտական եղիցին ի մեղացն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 180-181: **Ջալալեանց Մ.**, էջ 37: **Ալիշան Ղ.**, էջ 120: **Արմանկյան Ս.**, էջ 56: **Գեորգեանց Մ.**, էջ 102: **Բասմաջյան Մ.**, էջ 153-154:

Ծանոթ. արձանագրության սկզբնամասը՝ «Ի հայրապետութեան», այնուհետև՝ «ետու զիմ այգին ի», «պատարագ :Դ: (4) ար ինձ» և վերջնամասը՝ «արինեալ եղիցին յաստուծոյ և ներհակքն պարտական եղիցին ի մեղացն», որոնք բացակայում են Սարգսյանի ու նրանից օգտված Ղ. Ալիշանի մոտ, լրացրել ենք ըստ Մ. քնն. Գևորգյանցի վերծանության:

Գավիթ

Թ. Արևմտյան որմին ներքուստ: Ըստ Սարգսյանի՝ «Ի ներքնագարբին կամ ի ժամատանն՝ յորմունս շուրջանակի և ընդ կամարագօտեօք», ըստ Գևորգյանցի՝ «Ջանգակատան դրան ձախ կողմը» կամ «Ի ներքուստ ի ձախակողմն դրան մայր զանգակատան սուրբ Աստուածածնիս», 3 տող, ոչնչացված է.

ՈԾ (1201), | ես՝ Մխիթար որդի Դրուսիան, ետու ի ս(ուր)ք ուխտս Բագնայր զիմ աշխատանաց ... կատարեն ի ս(ուր)ք Առաքելոց զուկակին եւ Համսիսարն եւ այլ եղբարքս, փոխարէն / հատուցին ի տարին Բ (2) ար պատարագ ինձ՝ Մխիթարա եւ մին ար ամուսնոյն իմոյ ..., կատարիչք գրոյս արինեսցին յա(ստուծոյ):

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 180: **Ջալալեանց Մ.**, էջ 37: **Ալիշան Ղ.**, էջ 120: **Արմանկյան Ս.**, էջ 55-56: **Գեորգեանց Մ.**, էջ 101-102: **Բասմաջյան Մ.**, էջ 141-142:

Ծանոթ. Մ. քնն. Գևորգյանցի վերծանության մեջ բացակայում է թվականը, փոխարենը նրան հաջողվել է ընթերցել Սարգսյանի և նրան հետևածների հրատարակություններում բացակայող «կատարեն», «Համսիսարն» (կասկածելի) բառերը: Մ. քնն. Գևորգյանցը «Դրուսիան» անձնանվան փոխարեն ունի «Դուսիան»:

Ժ. Հարավային որմին, ներքուստ, 6 տող, ոչնչացված է.

Կամաւն ա(ստուծոյ) եւ Սիմեոն երեց, եւ որդի իմ Թաթուլ միաբա/նեցաք Բագնայր Ս(ուր)ք / Ա(ստուա)ծածնիս եւ տվաք ն(ո)ւ/եր յամ...:

Հրատ. **Ջալալեանց Մ.**, էջ 43: **Սարգսեան Ն.**, էջ 181: **Մրայան Մ.**, Սի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, «ԲՀԱ», Երևան, 1970, № 2, էջ 112: **Ալիշան Ղ.**, էջ 120: **Բասմաջյան Մ.**, էջ 182:

Ծանոթ. Ջալալեանցը և Բասմաջյանը «տուաք» բառից հետո ունեն «նուեր յամ...» հատվածը:

ԺԱ. Հարավային որմին ներքուստ. «Ի հարաւային որմն զանգակատանս յաջակողմն միջի լուսամտի», 7 տող, ոչնչացված է.

ՈԾԵ (1206), | կամաւ քարերարին ա(ստուծոյ) եւ՝ Գիշուկս, որդի Գրիգորոյ, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս եւ ընձաեցի Բ (2) արտ ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնիս, եւ տքա հայր Սիմեոն վարդապետս եւ այլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ ի տարին Գ (3) ար պատարագ Ա (1) ինձ, Ա (1) իմ ծ/նողացն, Ա (1) իմ եղբարցն, որ հաստատուն պահեն արինին յա(ստուծոյ): / Ա (1) արտ ի Տափիս, Ա (1) ի Մաննեխտիս:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 181: **Ջալալեանց Մ.**, էջ 43: ԳԱԹ,

Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 14: «ԲՀԱ», 1970, № 2, էջ 112: Ալիշան Ղ., էջ 120: Армянския надписи..., с. 56. Բասմաջեան Կ., էջ 142-143:

Ծանոթ. Ջալալյանցի և Սրապյանի մոտ առկա են ակնհայտ անճշտություններ:

ԺԲ. 1206 թ. արձանագրությունից ներքև՝ «Կից տրա», ոչնչացված է.

Չ... Ըահեր Կիրակոս միաբանեցայ ի սուրբ Աստուածածնիս Բզների, ետու զիմ գանձագին հողերն զեղատինե ափնակից ներքի դեհն լսնհնգնային կղերն գայ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 43: **Սարգսեան Ն.**, էջ 188: Գ.ԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 14: «ԲՀԱ», 1970, № 2, էջ 112: Армянския надписи..., с. 66. **Բասմաջեան Կ.**, էջ 189-190:

Ծանոթ. արձանագրության սկզբնամասում հրատարակչներին միայն Սարգսյանն ունի տարերվի հարյուրավորը՝ «Չ»-ն: Սրապյանը «Ըահեր» անձնանվան փոխարեն՝ «Ես Ըահիր», իսկ «հողերն զեղատինե ափնակից ներքի դեհն»-ի փոխարեն՝ «հողերս լեռադին ափնակից ներքի դեհն...»: Բասմաջեանը «լսնհնգնային կղերն գայ»-ի փոխարեն ունի «ննհնգնային...դեհն քա»:

ԺԳ. Հարավային որմին ներքուստ՝ «Ի ներքոյ նորին», 7 տող, ոչնչացված է.

ՈՂԱ (1242), | շնորհին Զ(րիստոս)ի ես՝ Սարգիս, որդի Խաչատին, միաբանեցայ | ս(ուր)բ ուխտիս, ետու ձիթահնաց աղցաղի քար և յամեն ամի | Ե (5) լիար ձեթ, իսկ հայր Աբրահամ և այլ միաբանքս փոխարկեմ հատուցին ինձ ի տարին Բ (2) ար պատարագ կատարիչքն | արհմեսցին և որ հակառակ կան, մեղաց մերոց պարտակ/ան լիցին:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 186: **Ջալալեանց Ս.**, էջ 44: Армянския надписи..., с. 64. **Բասմաջեան Կ.**, էջ 166-167:

Ծանոթ. Սարգսյանը չունի վերջին «մեղաց մերոց պարտական լիցին» հատվածը: Տարեթիվն ունի միայն Բասմաջեանը:

ԺԴ. Հարավային որմին ներքուստ. «Ի ձախակողմն լուսամտին», 5 տող, ոչնչացված է.

ՈԿ (1211), | ի յամս աստուածապատիտ(եան) Սարգսի որդոյ Ապիրատին եւ ի | յառաջնորդութեան հայր Սիմեոնի, ես՝ Արտաշիր, Աշականոյ | ռայիս, ետու զիմ գանձագին այգին, որ Աշոտոնց կոչի ի Ս(ուր)բ Ա(ստուա)ծա/ծինս, եւ պարտին սպասաորք տրա ի տարին Ը (8) ար պատարագ, Գ (3) Արտաշիրն, Բ (2) Արասս, Բ (2) Սսին, Ա (1) Գնտուտին:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 181: **Ջալալեանց Ս.**, էջ 44: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 56-57. **Գեորգեանց Մ.**, էջ 109: **Բասմաջեան Կ.**, էջ 148:

Ծանոթ. Սարգսյանի նշած «կրով ծեփեալ» հատվածի համար Գեորգեանցն ունի «հայր Սիմեոնի», Բասմաջեանը՝ «հայր Սիմեոնի», Սարգսյանի «Անսին» ընթերցման փոխարեն Գեորգեանցի մոտ՝ «Արրսին», իսկ Բասմաջեանի մոտ՝ «Սսին»:

ԺԵ. Նախորդից ներքև, 4 տող, ոչնչացված է.

Կամաւ բարերարին աստուծոյ, ես՝ Վարդապետ, եւ Արշակ | եւ Խորէն միաբանեցաք ի ս(ուր)բ ուխտս Բագնայրս, ի ձեռն հար Սիմեոնի տվաք զՎարդենաց նորքն ի Ս(ուր)բ Ա(ստուա)ծ/իածինս եւ

յոստացան սպասաորք տրա ի տարին ԺԲ (12) ար պատարագ, Դ (4) Վարդապետին, Դ (4) Աշակա, Դ (4) Խորէնս, | որ խարանեն, մեր մեղացս պարտական է առաջի աստուծոյ:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 181: **Ջալալեանց Ս.**, էջ 44: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 57. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 149:

Ծանոթ. ներկայացնում ենք Սարգսյանի վերձանությունը:

ԺԶ. Հարավային որմին ներքուստ, 3 տող, ոչնչացված է.

Ես՝ Բախտիարս, միաբանեցա Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնիս եւ ետու զիմ գանձագին գայգին ի Բագ/րանի, որ կոչի Տափկենց, եւ սպասաորքս հատուցին ինձ Դ (4) ար պատարագ անխափան:

...Ա(ստուա)ծածնիս գնեցի զԸահկանն զհողն, որ յԱզրկին եւ ետու ի ս(ուր)բ ուխտս յիշատակ հոգո ինն, ի յԱռիճք գտեփական այգին, որ ի բազում ժամանակաց ատարացեալ էր վերստին հանդերձ միաբանաւքս վերստին ի ս(ուր)բ ուխտս:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 181-182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 57. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 183:

ԺԷ. Նախորդից ցած, 2 տող, ոչնչացված է.

Ես՝ Սարգիս, ետու զիմ այգին, որ ի Մարմետ ի վերա Երասխա, ի ս(ուր)բ ուխտս յանուն իմ պատարագի Զ(րիստոս)ս Գ (3) ար:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 57. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 185:

ԺԸ. Նախորդից ցած, 2 տող, ոչնչացված է.

Ես՝ Սարկուսագս, ետու զիմ ձիթ/ահնաց կէս ակն, որ ի Կարուց դրանն, յանուն իմ պատարագի Զ(րիստոս)ս Գ (3) ար:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 57. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 185:

ԺԹ. Նախորդից ցած, 1 տող, ոչնչացված է.

Ես՝ Գոհարիկս, ետու զիմ տներն ի Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնիս յանուն իմ պ(ա)տ(ա)ր(ա)գի Զ(րիստոս)ս Բ (2) ար:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 120: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 185-186:

Ծանոթ. Գեորգեանցը «Զրիստոսի» փոխարեն ունի «Բ (2)»:

Ի. Նախորդից ցած, 1 տող, ոչնչացված է.

Ես՝ Թորոտոնց Մխիթար, ետու զիմ տունն եւ ետուն ինձ Բ (2) ար պատարագ:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 186:

ԻԱ. Նախորդից ցած, 2 տող, ոչնչացված է.

Ես՝ Յոհանէս, Թադէոսի որդիս, ետու զիմ ջաղացն, որ ի Գլիճորին զձախ աղացն, հատուցին ինձ պատարագ Ե (5):

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 110: **Բասմաջեան Կ.**, էջ 186:

Ծանոթ. «ի Գլիծորին գծախ աղացն»-ի փոխարեն Գևորգեանցն ունի «իգածորին գծախ աղացն»:

ԻԲ. Նախորդից ցած, 3 տող, ոչնչացված է.

Ես՝ *Յոհաննիս*, որդի *Առաքելին*, ետու զիմ կէս ակն ջաղացն ի Գլիծորին, որ կոչի Հատարհնիկ, յանուն իմ պատարագի *Ք(րիստո)ս Բ (2)*:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 110-111: **Բասմաջեան Կ.**, էջ 186-187:

ԻԳ. Նախորդից ցած, 1 տող, ոչնչացված է.

Ես՝ *Առիստ*, ետու զիմ տունն ի ս(ուր)ք ուխտս, որ ընդդէմ *Քահանեանց եկեղեցոյն* պատարագի ինձ *Ք(րիստո)ս*, ար *Ա (1)*:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 111: **Բասմաջեան Կ.**, էջ 187:

ԻԴ. Նախորդից ցած, 1 տող, ոչնչացված է.

Ես՝ *Վարդաշահս աշնակեցի*, ետու զիմ հայրենի այգին ի ս(ուր)ք ուխտս, հատուց ինձ *Բ (2)* պատարագ:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 111: **Բասմաջեան Կ.**, էջ 187:

Ծանոթ. «Աշնակեցի»-ի փոխարեն Գևորգեանցն ունի «ակրակեցի», իսկ Ջալալեանցը «հատուց ինձ Բ (2) պատարագ»-ի փոխարեն՝ «տունն ժամ ի տարին Բ (2) ամուր, Ա (1) անտացն, Ա (1) հազար տեղին այգին ի թամիր», որ շփոթմամբ քաղել է հաջորդ արձանագրությունից:

ԻԵ. Նախորդից ցած, 2 տող, ոչնչացված է.

Ես՝ *Աւետիս*, եւ Հազարդեղս տուար զՈւղտանատին կէսն ի ս(ուր)ք ուխտս առնեն / ժամ ի տարին *Բ (2)* ար *Ա (1)* Աւետիցն, *Ա (1)* Հազարդեղին, այգին ի *Թամիր*:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 182: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 58. **Գեորգեանց Մ.**, էջ 111: **Բասմաջեան Կ.**, էջ 187-188:

Ծանոթ. «զՈւղտանատին կէսն»-ի փոխարեն Գևորգեանցն ունի «զուղտանս, տան կէսն», իսկ «Թամիր»-ի փոխարեն՝ «թամեր»:

ԻԶ. Նախորդից ցած, 3 տող, ոչնչացված է.

Ես՝ *Պետրոս*, որդի *Պատրոսոյ*, ետու զիմ հայրենի այգին ի յԱշականն մատ ի Վարդեանց, ի *Ս(ուր)ք* / յԱ(ստուա)ծածինս ի յառաջնորդութեան հայր ..., հատուցին ի տարին *Զ (6)* ար պատարագ *Ա (1)* ինձ, *Ա (1)* Աստրատանա, *Ա (1)* իմ հարն, *Ա (1)* Հարկետրին, *Ա (1)* Քոյրկանն, *Ա (1)* Յայսմկանն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 183: **Ջալալեանց Ս.**, էջ 45: **Ալիշան Ղ.**, էջ 121: Армянския надписи..., с. 59. **Գեորգեանց Մ.**, էջ 111: **Բասմաջեան Կ.**, էջ 188:

Ծանոթ. «մատ ի Վարդեանց»-ի փոխարեն Գևորգեանցն ունի «մատ ի տանց», «...հատուցին»-ի փոխարեն՝ «Միմանի և հաստատեցին», իսկ «Յայսմկանն»-ի փոխարեն՝ «այս մանկանն»: Ջալալեանցի մտ առկա են անճշտություններ:

ԻԸ. Հյուսիսային որմին ներքուստ. «Ի հիսիսակողմն ի վերայ միջին որման զանգակատան», 9 տող, առկա է.

ՈԿԳ (1215), / կամաւ հոգոյն սրբոյ, ես՝ տ(է)ր Գրիգոր, վերայդիտող մայրաքաղաքին Ա/նոյ, հաստատեցար ի մեր սեփական ուխտս ս(ուր)ք եղբայրութեամբս հանդերձ, եթէ որ ի միաբանացս փոխի ի *Ք(րիստո)ս*, պատարագ մատուցեն հաւրն *ԴԽ*, իրիցոյն եւ արեղին *ԳԽ*, աշխարհական արեղին *ԲԽ* եւ ամենայն եղբայր ար մի պատարագ եւ որ չկարէ *Ժ (10)* կանոն աղաթք արասցէ, եթէ որ յայս կարգերոցս պակասեցուցէ խոճի ի մեղաց / պարտական է առաջի ա(ստուծո)յ, տ(է)ր ա(ստուա)ծ ողորմեա Սարգարէին, ամէն:

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 183: **Ջալալեանց Ս.**, էջ 37-38: **Ալիշան Ղ.**, էջ 118: Армянския надписи..., с. 59.

Ծանոթ. Սարգսեանը չունի «վերայդիտող մայրաքաղաքին Անոյ հաստատեցար» հատվածը:

ԻԹ. Հյուսիսային որմին ներքուստ (նախորդի շարունակությունն է), 5 տող, առկա է.

Ես՝ *Խաչեղբայր*, որդի *Ա(ստուա)ծատրո*, եւ ամուսին իմ *Միսմաճ շինեցար* / զգերեզմանաց մին եկեղեցին եւ տուար զմեր տաճարն եւ զՍալրատոյթն եւ ի ներքեւն տունն ի *Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս*, եւ հայր *Միմետոն* եւ / այլ եղբարքս փոխարէն հատուցին յամէն ամի *Զ (6)* ար ժամ, *Գ (3)* ար / *Խաչեղբարն*, *Գ (3)* *Միսմամին*, կատարիչք զրիս արիննեսցին յա(ստուծո)յ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 38: **Սարգսեան Ն.**, էջ 183: Армянския надписи..., с. 59. **Բասմաջեան Կ.**, էջ 163-164:

ԻԺ. գավթի հյուսիսային որմին ներքուստ (նախորդի շարունակությունն է), 6 տող, առկա է.

Անուամբն ա(ստուծո)յ բնակիչք ս(ուր)ք ուխտիս տ(է)ր *Քրիստափոր* եւ *Գամաղիէլ վարդ/սպետս* ամենայն միաբանաւքս զայս կտակ անջնջելի հաստատեցար, եթէ որ ի միաբանացս փոխի առ *Ք(րիստո)ս*, զինչ որ անդարձ առնէ եւ իւր հոգոյն տես(դ) մի որ իշխեսցէ խափանել ո՛չ պատրոն, ո՛չ հայր, ո՛չ միաբան, ապա եթէ լու/(ծանն)ն յերից ս(ուր)ք ժողովոյն, նզովեալ եղիցին հոգով եւ մարմնով. զՅովսէփ / զրիչ տ(է)ր յիշեա:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 38: **Սարգսեան Ն.**, էջ 183: **Ալիշան Ղ.**, էջ 118: Армянския надписи..., с. 60. **Բասմաջեան Կ.**, էջ 165-166:

Լ. Հյուսիսային որմին ներքուստ (նախորդի շարունակությունն է. «Գարձեալ ի ներքոյ սորա»), 4 տող, մասամբ ոչնչացված է.

(Կամ)ան ա(ստուծո)յ ես՝ *Խաչտուր*, էտու զՄուլտրին հողն, որ Թեղենեաց / (այգ)ոյն ի հետ է, ի Բզնայր, ի *Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս*, եւ հայր *Արքահամ* եւ / (եղբ)արքս փոխարէն հատուցին *Բ (2)* ար ժամ, *Ա (1)* ինձ, *Ա (1)* տիկնոջն, / (որ հաս)տատուն պահ(են) արինին յա(ստուծո)յ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 38: **Սարգսեան Ն.**, էջ 186: Армянския надписи..., с. 64. **Բասմաջեան Կ.**, էջ 167-168:




Գավթի հյուսիսային որմին ներքուստ պահպանված վիմագրերը (№№ ԻԷ-Լ)

ԼԱ. Արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո. «Ի վերայ արևելեան որման ձախակողմն դրան տաճարին ի մէջ զանգակատան», 8 տող, առկա է.

Ի թու(ի)ն / ՈՉԲ (1233), / շնորհիւն Զ(րիստոս)ի ի տէրութեան տեղոյս Գրիգորի մագիստրոսի որդոյ Ապուղամրի եւ յառաջնորդութե(ան)ս հար Սիմեոնի, ես՝ Սարգիս, Ծմակին աւագերեց, որդի Գրիգոր քահանայի, ետու զիմ զանձագին հայրենիք այգին

զՇիջանկի զՆերքի դեհն իւր ծաղկոցովն, իւր չորեւսին ափներովն ի ս(ուր)ք մայրս լուսոյ, եւ սքա փոխարէնս հատուցին յամենայն ամի ութ ար յանուն իմ պատար/ազել զԶ(րիստոս)ս եւ այլ ետու զԶարգզեմա տներն, զի ուր ինձ վախճան լինի զհչերապաշտաւն եւ մատաղ առնեն / կատարիչքն եւ հաստատուն պահողքն արինեսցին ի Զ(րիստոս)է ա(ստուծոյ):



Գավթի հյուսիսային որմին ներքուստ պահպանված վիճագրերի գրչանկարները (№№ ԻԷ-Լ)

Հրատ. Ջալալեանց Ս., էջ 41-42: Մարգարեան Ն., էջ 185: Армянские надписи..., с. 62. Բասմաջեան Կ., էջ 157-158:

ԼԲ. Արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 4 տող, առկա է.

Ես՝ Հասան կողբցի, որդի Մխիթարա ըռախիսին, բռռն Համէլին, ապախնեցայ ի Սուրբ Ա(ստուա)ծածինս եւ յա/յլ սուրբքս եւ վասն փրկութեան հոգոց

մերոց ետու զմեր զանձագին հայրէնիքս կինն զկէս դանկն ի ս(ուր)ք յուխտս եւ լերամբքն, եւ սոքա փոխարէնս հատուցին ի տարին տասն պատարագ, զուք արն Համէլի՝ իմ եղբարն եւ զերկուսն Կատախն, կատարիչք գրիս արինին յա(ստուոճոյ) եւ ամենայն սրբոց, ամէն:

Հրատ. Ջալալեանց Ս., էջ 42: Մարգարեան Ն., էջ էջ 185: Армянские надписи..., с. 62. Բասմաջեան Կ., էջ 188-189:



Գավթի արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո պահպանված (№№ LU-Lb) վիմագրերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

ԼԳ. Արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է. «Դարձեալ կից դրան»), 7 տող, առկա է.

ՈՉԲ (1233), | կամաք մարդասիրին ա(ստուծո)յ ես՝ Վարհամ, որդի Մխիթարա, թռռն Աւետեացն Չէչկանց, եւ զիւզ/ակից իմ Փառձանձս միաբանեցաք ս(ուր)ք մար լուսոյ, ետու զիմ գանձագին կողպակն | ի Փողոցկտերն, որ ի Թորոսնց կողպակին վերա է, եւ զայն տունն, որ Սեւքթենց հմնակից է եւ ի | վերայն կողպակն եմ շինած, եւ սոքա հայր Միմէոն եւ միաբանքս փոխարէնս հատուցին մեզ յա-

մ/ենայն ամի տաւնել երկու արտ պատարագ, գործն Վահրամս, երեքն Փառանցին, զմինն Մամբանին, արդ եթէ որ յառաջնորդաց տեղոյս զգրեալս խափանէ կամ ծախէ, մեր մեղացն պատասխան տացեն յատենին Բ(րիստոս)ի:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 42: **Սարգսեան Ն.**, էջ 184: **Ալիշան Ղ.**, էջ 121-122: **Армянские надписи...**, с. 61. **Քամաջեան Կ.**, էջ 158-159:

Ճանոթ. առաջին հիշատակման մեջ անձնանունը ոչ թե «Փառանցան» է, այլ՝ «Փառձանձ»: Ջալալյանցի մոտ բվականը՝ «ՈՂԲ (1243)»:



Գավթի արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո պահպանված (№№ LU-LB) վիմագրերի զոջանկարը

ԼԳ. Արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 5 տող, առկա է.

Կամարն Ք(րիստոս)ի այս մեր զիր է սուրբ ուխտիս հար Սիմեոնի եւ միաբան սպասատրաց սրբոցս. զեյրդ որ Խաչէրեսն՝ Վարդին որդին, ի Ք(րիստոս)ս փոխեցաւ եւ զիր զանձով շինած տներն ի գաղտ դասն խեչ երես | ի ս(ուր)ք մայրս լուսոյ, ապա դասն ժամանակի հանդիպեցաք սոփ եւ սրո եւ զերութեան, ծախեցաք եւ ի սրբոցս ի պէտս անցուցաք եւ փոխարէնս հատուցաք յամենայն ամի երեք ար պատարագ, զերկուսն Խաչե-

րեսին եւ զմէկն | ամուսն իւրոյ՝ Սլքերոյն, եթէ որ զգրեալս մեր անփոյթ առնէ եւ խափանէ, յերից ս(ուր)ք ժողովոյն նզովեալ եղիցին, ամէն:

Հրատ. Չայալեանց Մ., էջ 42-43: Մարգարեան Ն., էջ 184: Այիշան Դ., էջ 121-118: Армянские надписи..., с. 61. Գեորգեանց Մ., էջ 107-108: Բասմաջեան Կ., էջ 160-161:

ԼԵ. Արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 4 տող, առկա է.

Ողորմութեամբն ա(ստուծոյ) ես՝ Ասագոսիկին, դուստր Գորգկանն, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս եւ



Գավթի արևելյան որմի հարավային որմնակամարի ներքո պահպանված (№№ L2-Խ) վիճագրերը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

զիմ զհայրենի կէս ակն / ձիթահանքն, որ ի յիմ ի ծնողացն ի պսակի ներքեւ ինձ բաժինք էր հասել, ետու ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս, եւ հայր Սիմէոն մի/արբանաքս փոխարէնս հատուցին մեզ յամենայն ամի հինգ ար պատարագ, զերեք արն Աւագտիկնա եւ զմինն Գորգ/կանն եւ զմէկն Թաճերոյն, եթէ որ զյիշատակս մեր խափանէ, մեր մեղացն համարս տացեն առաջի Զ(րիստոս)ի: Մանասէ գրիչ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 43: **Մարգսեան Ն.**, էջ 185: Армянские надписи..., с. 61-62. **Բասմաջեան Կ.**, էջ 164-165:

L2. Արևելյան որմին, հյուսիսային որմնակամարի ներքո, 6 տող, առկա է.

Թո(ւին) / ՈՉԳ (1234), / շնորհիւն ա(ստուծոյ) ե տ՝ Շարափշահ, որդի Ապիրատին, ետու մեր սեփական եկեղեցիս ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս Գ (3) ակն ջաղաց ի Շիրակուանին եւ զխաչին մարզն, եւ սպասատր(ք)ս հայր / Սիմեոն եւ այլ միարբանքս փոխարեն հատուցին ինձ ԺԸ (18) ար ժամ, Ժ (10) ար ինձ, Գ (3) Կարէկին, / Բ (2) Կիրիկէի, Ա (1) Հասանա, Բ (2) Արիսաթունին:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 39-40: **Մարգսեան Ն.**, էջ 185-186: Армянские надписи..., с. 63. **Բասմաջեան Կ.**, էջ 161-162:

Շանթ. Ջալալեանցի ընթերցումը սխալաշատ է: Մանր վրիպումներ ունի նաև Մարգսեանը:

ԼԷ. Գավթի արևելյան որմին՝ հյուսիսային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 4 տող, առկա է.

Ես՝ Թագո(ւ)հի, զուգակից Շարափշահին, ետու / զխաչ մեծածախս եւ աւետարան, Սառըճ փողոցին կողպակի վեր, ի Շիրակուանին / զմարզն, որ ճլուտ կոչի, փոխարեն հատուց ինձ Զ (6) ար պատարագ, Ե (5) ինձ, Ա (1) արն Մա/մուզին:


Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 39-40: **Մարգսեան Ն.**, էջ 186: Армянские надписи..., с. 63. **Բասմաջեան Կ.**, էջ 162-163:

ԼԸ. Արևելյան որմին՝ հյուսիսային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 3 տող, առկա է.

Ես՝ Թաիկ թագո(ւ)հի, դուստր Շարափշահի, ետու(ւ) երկո(ւ) կողպակ յիմ կողպակ/անոյն, որ ի Նալպնդնոցին եւ Առաքել, եւ հայր Սիմեոն եւ այլ միարբանքս փոխարեն հատուցին / ինձ Ը (8) ար պատարագ, կատարիչք գրեոյս արիհնեալ եղիցին յա(ստուծոյ):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 39-40: **Մարգսեան Ն.**, էջ 186: Армянские надписи..., с. 63. **Բասմաջեան Կ.**, էջ 163:

ԼԹ. Արևելյան որմին՝ հյուսիսային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 6 տող, առկա է.



Գավթի արևելյան որմն հարավային որմնակամարի ներքո պահպանված (№№ 12-15) վիմագրերի գրչանկարը

ՉԺԱ (1262), շնորհիվն ա(ստուծոյ) ես՝ Թաիկս, դուստր Շարապշահին, ետու զիմ գանձագին հայրէն/իքն զՆորսն ի մեր ս(ուր)ք ուխտս ի Բզնայրս ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծամծինս, եւ հայր Աբրահամ եւ այլ միաբանեալ ս(ուր)ք / եղբայրքս փոխարէն հատուցին յամենայն ամի Ժ (10) ար պատարագ, Ը (8) արն ինձ առնեն Թաիկանս / եւ Բ (2) արն Գրիգորու, արդ որք կատարեն եւ հաստատ պահեն, արինեալ եղիցին յա(ստուծոյ), հաստատե / ամենայն անդաստանարն հողովն եւ ջրովն մինչ ի գալուստ որդոյն ա(ստուծոյ), զՍիմեոն գրիչ յիշե վ(ա)ս(ն) / տ(եառ)ն:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 40: **Մարգսեան Ն.**, էջ 187: Армянская надписи..., с. 65. **Քասմաջեան Կ.**, էջ 169-170:

Ծանոթ. Սարգսյանը «ամենայն» բառի փոխարեն ունի «աննացն» անորոշ տառակապակցությունը, Ջալալյանը վերջնամասում՝ «զՍիմեան գրիչս յիշեցէք»: Սարգսյանն այդ հատվածը չունի, բայց խնդիրն այն է, որ տեղում ընթերցվում է «զՍիմեոն գրիչ յիշե վ(ա)ս(ն) / տ(եառ)ն», որն անսխալ վերծանել է Քասմաջյանը:

Խ. Արևելյան որմնի՝ հյուսիսային որմնակամարի ներքո (նախորդի շարունակությունն է), 4 տող, առկա է.

Կամանն ա(ստուծոյ) ես՝ Կոստերս ծմակեցի, ապաիմեցայ ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծամծինս զհիրա-

տունն, որ / Պիչարենց կոչի, որ ծախել էին վանեցիքն, եւ դարձուցի ի վանքս եւ ետու զին / Պ (800) սպ(իտակ), հայրս եւ վարդապետքս եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին ինձ ի տարին Բ (2) ա/լր ժամ, արդ էթէ որ գլխատակս:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 41: **Մարգսեան Ն.**, էջ 187: Армянская надписи..., с. 65. **Քասմաջեան Կ.**, էջ 176-177:

Ծանոթ. Սարգսյանն իրավամբ նշել է, որ փորագրիչն արձանագրության վերջնամասը թերի է թողել: Հուսարակիչներն ունեն միմյանցից գատվող որոշ տարրերը:

ԽԱ. Արևելյան որմնի կից հյուսիսային որմնակամարի խոյակին և որմնակամարառոթին («Ի վերայ կամարին մօտ դրան յարևելեան սեան յաջակողմն»), 12 տող, առկա է.

ՉԺԱ (1262), / կամանն ա(ստուծոյ) ես՝ Ապուղամը, որդի Մարիստ/րոսի, թոռն Վարհամ իշխանին, վասն ի Բ(րիստո)ս յո/յոյն ետու զիմ գանձագին հայրենիքն / զԿաղողց կէսն իւր / հողովն ու ջրովն ի Ս(ուր)ք / Ա(ստուա)ծամայրս ի մեր ս(ուր)ք ուխտս, որ մատ ի Բրիստոս զփոխարէնն ի յիմ մայրն վճարէ ի Մամբան, / հաստատ է մինչ ի Բրիստոս, զՍիմեոն գրիչս յիշեցէք):

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 40: **Մարգսեան Ն.**, էջ 188: Армянская надписи..., с. 66. **Քասմաջեան Կ.**, էջ 170-171:



Գավթի արևելյան որմին կից որմնախոյակների և նրանց վրա հանգչող կամարաոտքերի արևմտահայաց երեսներին պահպանված 1262 և 1267 թթ. վիմագրերը (№№ ԽԱ-ԽԲ)



Գավթի հյուսիսարևելյան սյան վրա հանգչող գմբեթատակ քառակուսին կազմած կամարաոտքի արևմտահայաց երեսին պահպանված (№ ԽԳ) վիճագիրը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2005 թ.)

Ծանոթ. Սարգսյանը չունի Ջալալյանցի մոտ առկա «Քրիստոս զփոխարենն ի յիմ մայրն վճարէի առ Քրիստոս հաստատեալ էի մինչ Քրիստոս, աղաչեմ զՍիմեան գրիչս յիշեցէք» հաստվածը, որի փոխարեն էլ տեղում իրականում արձանագրված է. «վճարէ ի Մամբան | հաստատե մինչ ի Քրիստոս, զՍիմեան գրիչս յիշեցէք»։ Ջալալյանցի մոտ տարեթիվն է՝ ՆԺԱ (962)։

ԽԲ. Արևելյան որմին կից հարավակողմի որմնասյան խոյակին և որմնակամարաոտքին («Ի վերայ կամարի ձախակողմեան արևելեան սեան»), 13 տող, առկա է.

ՉԺԶ (1267), | կամաւն ա(ստուծոյ) ես՝ Ապոլի-
ղանը, որդի Մաքիստրոսի, որ գնեցի զկէս Կադ-
դուցն ի Տիգր/անանց եւ ետու ի Ս(ուր)ք | Ա(ստուա)-
ծածինս ի մեր ս(ուր)ք | ուխտս, որ զփոխար/էնն
մատ ի Քրիստոս ի Վարիա/մ իշխանն ի յիմ եղ-
բայրն վճարէ, հաստատ է մինչ ի գալուստ որդոյն
ա(ստուծոյ) բոլոր ամէն գեղն, Սիմեոն | գրիչ։

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 41: **Մարգսեան Ն.**, էջ 186: Армян-
ская надписи..., с. 64. **Բասմաջեան Կ.**, էջ 168-169:

Ծանոթ. «Մատ ի Քրիստոս ի Վարիա/մ իշխանն ի յիմ եղ-
բայրն վճարէ հաստատ է մինչ ի գալուստ որդոյն ա(ստուծոյ)
բոլոր ամէն գեղն, Սիմեոն | գրիչ» հաստվածը Սարգսյանի մոտ
բացակայում է, իսկ Ջալալյանցն էլ նույն հաստվածն այսպես է
ընթերցել. «մտ ի Քրիստոս ի Վահրամի իշխանից իմ եղբարց
վճարէ, հաստատ է մինչ ի գալուստ որդոյն աստուծոյ բոլոր

ասեմ գեղն, Սիմեան գրիչ», իսկ տարեթվի մեջ բաց է բողել միա-
վորը և ստացել «ՉԺ» (1261): Նույն վրիպումն ունի նաև Բաս-
մաջյանը:

ԽԳ. Հյուսիսարևելյան սյան վրա հանգչող գմբեթատակ քա-
ռակուսին կազմած կամարաոտքի արևմտահայաց երեսին (ըստ
Ջալալյանցի՝ «Յաջակողմն առաջի սեան ի վերայ կամարին»),
սկզբնամասի և վերջնամասի տողերը վնասված են, ի սկզբանե
եղել է 17 տող, որից առկա է գրեթե 8 տողը.

ՉԻ (1271), | շնորհին աստուծոյ ես՝ Ալէքս վա-
ճառական, որդի Դազարու, միաբանեց/այ սուրբ
Աստուածածնիս, ետու | Վերի խյաչ զփո[ղոցի] |
կուղպակ մի սկի մի արծ/աթի, եւ հայր Աբրա/իամ
Գ(ե)որգ վարդապետ/ս և այլ միաբանքս փոխարէն
հատուցին ի տար/ին ԺԲ (12) պատարագ, Ա (1)
Դազարու, Ա (1) Խոցատեղին, Ա (1) | [Սիե/տիցն], Ա
(1) Թամամի/ն, [Ա (1) Թագերոցն, Ա (1) Վար/դէ
տիկնայ, Ա (1) Էրրիանո/սի, Գ (3) Խոցատիղին, Ա
(1) Մամաթին, Ա (1) Համասի որդոյն, որ զփոխա-
րէն հատուցին կատարիչք արինին յաստուծոյ]:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 40-41: **Բասմաջեան Կ.**, էջ 179-180:

Ծանոթ. «Թամամի» անձնանվան փոխարեն Ջալալյանցն ունի
«Թագերոցն»: Ջալալյանցի [Սիե/տիցն]-ի փոխարեն Բասմաջյա-
նը՝ «Թէտեցն»: «Մամաթին, Ա (1) Համասի որդոյն, որ զփոխարէն
հատուցին կատարիչք արինին յաստուծոյ» հաստվածն առկա է

միայն Ջալալյանցի մոտ: Պակասող հատվածները լրացրել ենք ըստ Ջալալյանցի և Բասմաջյանի ընթերցումների:

ԽԳ. Հարավային որմին ներքուստ, 5 տող, ոչնչացված է.

ՈՂԱ (1242), կամաւ անեղին ա(ստուծոյ) ես՝ Մանգտավագս, որդի Խամարտաւիին մշեցի, միայլ-բանեցա Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնիս եւ ետու ընծայ ճ (100) դահեկան, հայրս՝ | Մուս, վ(ար)դ(ա)ւ(ետ)քս եւ այլ միայրանքս փոխարէն հատուցին ինձ ի տարին ի տալինի ս(ուր)ք Սարգսի Բ (2) ար պատարագել յանուն իմ գ-Զ(րիստո)ս, դատի գրիչ:

Հրատ. **Ջալալյանց Ս.**, էջ 44: **Սարգսեան Ն.**, էջ 186: ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 14: «ԲՀԱ», 1970, № 2, էջ 112: Армянския надписи..., с. 63. **Բասմաջեան Կ.**, էջ 180-181:

Ծանոթ. Բասմաջյանի մոտ տարեթիվն է «Չ...»: Սրալայանն անձնանուններն ընթերցել է «Մանգտվաք որդի Խարտուլին» (տպագրված օրինակում դարձել է «Մանգտվուգ որդի Խարտաշին»): Սարգսյանցի մոտ «դատի գրիչ» բացակայող հատվածը Բասմաջյանը կասկածանքով առաջարկել է «Դաիթ» անձնանունը:

ԽԾ. Հյուսիսային որմին ներքուստ, 13 տող, ոչնչացված է.

ՉԺԱ (1262), | ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի տ(եառ)ն տեղոյս | շնորհին ա(ստուծոյ) ես՝ Գարեգոյն էրեց, որդի Մանգիկ իրիցու, եւ ամուսին իմ՝ | Մարեամ, միաբանեցաք ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս եւ ետու զիմ գանձագին գեղն գՆորխորոյրիկ իւր ամենայն անդաստանաւք, որ բնական լեալ է, մի տաւնական մակադաք, մի | աւետարան ոսկետուփի իմ գանձով գնած, վասն յերկար կենդանութեան պատրոնաց | իմոց եւ յիշատակ ծնողաց՝ Մանկանն եւ Թաճերոյն, եւ հայր Աբրահամ եւ Յուսէփ փակակալ եւ այլ ս(ուր)ք եղբայրքս փոխարէն հատուցին ի տաւնի քառասնիցն Չ (6) | ար պատարագ յամենայն ամի Բ (2) Գարեգոյնին, Բ (2) Մարեմա, Ա (1) Մանկկանն, Ա (1) Թաճերուն, արդ էթե որ զմեր պատարագին խափանէ կամ զմեր աւետարանն կամ զտաւնականն ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնէս ի մեր գերեզմանէս հանէ, յերից ս(ուր)ք ժողովոցն նգովեալ եղիցի հոգով եւ մարմնով, եւ որք հաստատ | պահեն, արիւնեալ եղիցին յա(ստուծոյ), ամեն: զՍիմեոն գրիչ յիշեցէք աղաչեմ: Յայս զար/ս Ա (1) ար Մանկկանն, Ա (1) ար Թաճերուն:

Հրատ. **Ջալալյանց Ս.**, էջ 39: **Սարգսեան Ն.**, էջ 187: Армянския надписи..., с. 64-65. **Բասմաջեան Կ.**, էջ 171-173:

Ծանոթ. Ջալալյանցի մոտ տարեթիվն է «ՉԾԱ (1302)» և չունի «ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի տ(եառ)ն տեղոյս» հատվածը, «Յուսէփ փակակալ»-ի փոխարեն էլ՝ «Յովհաննէս փակակալ»: «Յայս զար/ս Ա (1) ար Մանկկանն, Ա (1) ար Թաճերուն» հատվածն ունի միայն Բասմաջյանը:

ԽՉ. Արևմտյան մուտքի զույգ որմնապույուներից մեկի խոյակին, 1 տող, ոչնչացված է.


...սացրայս | գնէհա...կէն:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 191:

ԽԷ. Արևմտյան մուտքի զույգ որմնապույուներից մեկի խոյակին, 1 տող.

...րորոյ | ախաթանեն:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 192:



ԽԸ. գավթի ներսում.

ԹՎ(ին) ՉՂԴ (1345), կ...

Հրատ. առաջին անգամ:



Ծանոթ. արձանագրությունը թերի է բողմված:

Սր. Գրիգոր եկեղեցի

ԽԹ. «Ի վերուստ դրան տաճարին սրբոյն Գրիգորի» կամ «Ի վերայ դրան երկրորդի մատրանն սուրբ Գրիգոր կոչեցելոյ».

ՇՂԴ (1145) թվ, ես՝ Ազիզս, մեղուցեալ աղախին Զ(րիստոս)ի, աւ(ր)հնեցի զեկեղեցիս զՍ(ուր)ք Գրիգոր ի յիշատակ որդու իմո՝ Գրիգորո, ի ձեռն հար... և մար, Ա (1) եւ առաջնորդ սուրբ ուխտիս...:

Հրատ. **Ջալալյանց Ս.**, էջ 34: **Սարգսեան Ն.**, էջ 188: Армянския надписи..., с. 66. **Բասմաջեան Կ.**, էջ 140:



Ծանոթ. վանքամերձ քաղամասի բնակելի տներից մեկի որմունքում որպես շինարար գործածված պահպանվել է այս արձանագրության մաս կազմող մի բեկոր: Վերծանության մեջ ուղիղ տառերով ցույց են տրված բեկորի վրա պահպանված բառամասերը:

Ծ. նախորդից ցած.

Ի ՈՒ (1152) քվ...:

Հրատ. Սարգսեան Ն., էջ 188: Բասմաջեան Կ., էջ 140-141:

ԾԱ. Սր. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքից վեր. «Ի հարավակողմն ի վերուստ դրան», արտաբուստ, 13 տող, ոչնչացված է.

ՈՂԸ (1229), | տիկնութեան Խաթուն՝ (կո/ղակից) բարիպաշտ իշխանին Խառառսին, ետու | զիմ բաժին հայրենիքն ի Մոզուաց, որ է ի հնգիկէ մինն ա/զատեալ եւ բաժանեալ սահմանաւքն այլ եւ այլ ի | հրեշտակաբնակ ս(ուր)ք ուխտս ի Բագնայրս յաղագս յիշատակողաց մերոց եւ անդրանկին մերո Սասնային, որ կիսարեա փոխեց/աւ եւ սուգ մեծ երող ծնողաց իւրոց, յորոյ յիշատակ շինեցի | զՍուրբ Միոն ի վերայ տապանատանս, սպասատրք Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնիս՝ ա(ստուա)ծասէր | հայր Սիմեոն եւ այլ ս(ուր)ք եղբարքս, յանձն առին յամեն ամի Խ (40) ար պատար/ագել գԶ(րիստո)ս, Ի (20) ար Խաթունին, Ժ (10) Խառառսին, Ժ (10) Սասնային անխափան մինչեւ ի | ծագումն որդոյն ա(ստուծո)յ, եթէ ի մեծաց կամ ի փոքունց զմեր ընծայքս հանէ ի ս(ուր)ք | ուխտէս, եթէ կամ առաջնորդ զմեր ժամն խափանէ, մեղաց մերոց պարտական լիցի առաջի ա(ստուծո)յ, կատարիչք գրիս արինին յա(ստուծո)յ:

Հրատ. Սարգսեան Ն., էջ 179: Ջալալեանց Ս., էջ 34: Ալիշան Բ., էջ 116-117: Գեորգեանց Մ., էջ 99: Բասմաջեան Կ., էջ 155-156:

Ծանոթ. ներկայացնում ենք Ն. Սարգսյանի և Մ. քին. Գևորգյանցի վերծանությունների համադրման արդյունքում առավել ամբողջական տարբերակը: Ինչ վերաբերում է քվագրման խնդրին, ապա հրատարակիչներից և ոչ մեկին չի հաջողվել տալ ստույգ վերծանությունը (Ն. Սարգսյանի և նրանից օգտված Գ. Ալիշանի մոտ՝ «ՈՂԸ (1299) կամ ՈՂԲ (1223)», իսկ Ս. Ջալալյանցի և Մ. քին. Գևորգյանցի մոտ՝ «Թվին ՆՂԸ» (1029): Բասմաջյանի մոտ որոշակի է ՈՂԸ, որի ստույգ լինելը հստակեցրել է իմնավորել է Կ. Մաթևոսյանը (նշվ. աշխ., էջ 80):

ԾԲ. Սր. Գրիգոր (հարավային) եկեղեցու արևմտյան ճակատին՝ մուտքից վեր երեք շարք քարերի վրա. «Վերոյ քան գղումն նորին մատրանն», 15 տող, ոչնչացված է (գրչանկարը՝ ըստ Ա. Վրույրի լուսանկարի).

ՉԺԱ (1262) կաման ա(ստուծո)յ ես՝ Խառազ, մեծ Խառազիս թոռն, Ասասնիս որդիս, իմ | անդրանիկ որդին Սասնայն, որ կէս տարեկան ի Զ(րիստո)ս փոխեցաւ յիմ գանձագի/ն հերէնեցն յԱշնկու, որ իմ պապն զնել էր ու սիկելով յիս տվել, ինչ իմ պապն մեռաւ, ես՝ Խառազ, իմ կնոջն զբաժինքն՝ ակն ու մարգարիտ, իմ պարոնին տվի Շահնշահի ու կրկին զԱշնակ զնեցի ու զիմ որդոյն բաժինն զՍասնին ի Բզն/երս տվի յԱ(ստուա)ծածնիս զվերի էզին՝ իւր ընծանովն, Բ (2) շինական զՄեհրեանն ու զԽաչատուր Դուլուսին փեսայն իրենց հողովն ու ջրովն ի Տզնիս զջաղ/ացն յիմ խոտահարն Ծ (100)


բարդ խոտի տեղ, որ վանքս ընձէ, մի սկի արծաթի ես՝ Խառազ, զայս ընծա տվի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածնիս, ով այս գրելոցս հակառակ կա, ի Քրիստոս հրա/պարակին ա(ստուա)ծամայրս լինի իւրն դատախազ:

Ես՝ տ(ե)ր Սարգիս, | եւ հայր Աբրահամ Յուսէփ փակակալ եւ այլ միաբանքս հաստատեցին ի տարին | Ժ (10) ար պատարագ. Ե (5) Սասնին, Ե (5) Խառազա, ով որ որ զայս գիրս խափանէն, | ՅԺԸ (318) իցն [նզովեալ] լիցի հողով եւ մարմնով եւ որ հաստատ պահեն, արինեալ եղից/ին յա(ստուծո)յ, ամէն, զՄիմէռն [պտտող] յիշեցէք. աղաչեմ:

Հրատ. Ջալալեանց Ս., էջ 35: Սարգսեան Ն., էջ 188-189: Армянския надписи..., с. 67. Բասմաջեան Կ., էջ 174-176:

ԾԳ. Սր. Գրիգոր (հարավային) եկեղեցու արևմտյան ճակատին՝ մուտքից վեր՝ լուսամտից հարավ, և ստորին մասում՝ երեք շարք քարերի վրա, 15 տող. «Ի վերայ խաչքարի եղերոյ յորմն ի վերուստ դրան», ոչնչացված է (գրչանկարը՝ ըստ Ա. Վրույրի լուսանկարի).

Թ(վին) | ՉԺԵ (1266), | շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Խառառս, որդի Սասնային, ետու ի մեր սեփական | ս(ուր)ք ուխտն Բզներ, ի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածին զմեր զգանձագին զՋրձորիկ վանքն՝ | իւր սահմանաւքն ջա(ղա)ցովն եւ պահիզա/նաւքն եւ զաղի աղբերն զպահէզն, որ իմ պապն | զնեալ էր եւ ինձ տվեալ, ես յիմ կենդանութեան ետու ի վանքն, եւ հայր Աբրահամ եւ այլ ս(ուր)ք եղբարքն փոխարէն հատուցին ինձ ի տարին Ժ (10) ար պատարագ յետ ելից իմն ինձ առնեն ով եւ իցէ, որ մեր արձանագիրս յետ շրջէ կամ այլոց յատարաց մեղաց մերոց



պարտական եղիցի առաջի ա(ստուծոյ): Ի(սրա)էլ գրիչ:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 35: **Սարգսեան Ն.**, էջ 189: Армян-ская надписи..., с. 67-68. **Բասմաջեան Կ.**, էջ 177-178:

Ծանոթ. Ջալալեանցը չունի թվականը, սակայն ճիշտ է ընթերցել «պահիզա/նալքն» բառը, որի փոխարեն Սարգսյանն ունի «պահի զան...», իսկ Բասմաջյանը՝ «պահեզան, [զմարա]զն»: «Ի(սրա)էլ գրիչ»-ը ունեն միայն Սարգսյանը և Բասմաջյանը: Վերծանության մեջ ուղիղ տառերով ցույց են տրված բեկորի վրա պահպանված բառամասերը:

ԾԳ. Սբ Գրիգոր եկեղեցու մուտքի որմնասյուներից մեկի վրա, 2 սող.

Ես՝ ծառայ Բ(րիստոս)ի Գրիգորս, որ | ... հաստատուն:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 191:


ԾԸ. Սբ. Գրիգոր եկեղեցու հարավային մուտքից վեր՝ կամարին, արտաքուստ, 1 սող.

Տէր ողորմեա Յովանիսի:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 191:

Սբ. Երրորդություն եկեղեցի

ՇՁ. Վանական համալիրի հյուսիսային եզրին առանձին կանգնած Սբ. Երրորդություն բոլորածն եկեղեցու արևմտյան մակատին՝ մուտքից վեր. «...զբարատրաւ դրանն արձանագրեալ այսպէս...» կամ «Արձանագրութիւն սուրբ Երրորդութեան վանաց, որ անկանի ի հիսիսակողմն վերտառեալ սուրբ Աստուածամնիս վանաց: Ի վերայ կամարի դրանն ի երուստ», 3 սող.



Ի փառս ամենաս(ուր)բ Երրորդութե(ան) հար եւ որդոյ | եւ հոգոյն սրբոյ շինեցեալ, | թու(ին) ՈՂԸ (1223):

Հրատ. **Սարգսեան Ն.**, էջ 189: **Ջալալեանց Ս.**, էջ 46: ԳԱԹ, Գ. Սրվանձտյան ֆոնդ, ք. I, գ. 17, ք. 14: «ԲՀԱ», 1970, № 2, էջ 112: **Բասմաջեան Կ.**, էջ 154:

Ծանոթ. «Շինեցեալ»-ի փոխարեն Բասմաջյանի մոտ՝ «ես մեղոցեալ եւ ան...»:

Վանքամերձ հուշարձաններ

ԾԷ. Վանքից դուրս գտնվող մի մեծ խաչքարի վրա եղել է.

ԹՎԽ ՈՂԵ (1226):

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 155:

ԾԸ. Վանքից դուրս գտնվող մեկ այլ մեծ խաչքարին եղել է.

Ով ս(ուր)բ նշան տ(ե)րունական երկրպագես-ց(ե)ս, լեր պահապան ասուր վերջին մեծի ծագման, | թիս ԶԺԸ (1269):

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 178-179:

ԾԹ. Վանքից դուրս առանց պատվանդանի մի մեծ խաչքարի թիկունքին, 12 սող.

Շնորհին Բ(րիստոս)ի ես՝ | Մուսէս քահանա, | կազմեցի ս(ուր)բ նշան/ս, կանկնեցի սա բարեխ/ասս առ Բ(րիստոս)ս ինձ և ծնող/աց ինց, ով երկրպագողք | ս(ուր)բ նշանիս զՄուսէս և զծնողսն իմ և զեղ/բայրս ըստ հոգո և ըստ մ/խրմնոյ յիշեցէք ի Բ(րիստոս)ս, | ա(ստուա)ծ զձեզ յիշեցէ:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 190-191:


Կ. Բագնայրի վանքից շուրջ 1 կմ արևմուտք՝ վտակի ակունքի մոտ՝ ձորակի ձախակողմյան ժայռին, դեռևս պահպանվում է միտումնավոր կերպով մասամբ վնասված և քերված արձանագրություն, որի նախկին միակ գիտական այցելում եղել է Կ. Բասմաջյանը.

ԶԿՁ (1317), զՅովսէփ յիշեցէք ի տ(ե)ր:

Չնկարիչ ս(ուր)բ նշանացս զ(Յ)ովսէփ անարժանս, յիշեցէք ի Բ(րիստոս)ս, | աղաչեմ:

Վայ է ինձ, խաբ եղեալ և կոր/եալ, | տ(ե)ր, որ ի մէջ լերին:

Հրատ. **Բասմաջեան Կ.**, էջ 181-182:



ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Սահակ Վարդանյան

Պատմական Գալիցիայի, Պոդոլիեի, Վոլինիայի և Բուկովինայի երկրամասերը գտնվում են Ուկրաինայի արևմուտքում և ընդգրկում են այժմյան Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի, Տերնոպոլի, Խմելնիցկու, Վոլինիայի և Չերնովցիի մարզերը:

Հայերն այս տարածաշրջանում բնակություն են հաստատել ԺԲ դարի վերջից՝ Գալիցիա-Վոլինյան իշխանության ժամանակաշրջանից, սակայն կազմակերպված և հզոր համայնքները սկսում են ձևավորվել ԺԴ դարի կեսերից, երբ այդ տարածքներն անցնում են Լեհական թագավորության տիրապետության տակ: Հայերի զանգվածային գաղթը պայմանավորված էր Անի մայրաքաղաքի և Կիլիկիայի հայկական թագավորության անկման հետ: Հայտնի է, որ ԺԵ դարի վերջին՝ Օսմանյան կայսրության կողմից Դրիմի, Բեսարաբիայի, Վալախիայի և Մոլդովայի գրավումից հետո հաստատված հայերի մի մասը ստիպված վերագաղթում է դեպի հյուրընկալ Լեհական թագավորություն:

ԺԴ դարի կեսերից լեհական քաղաքներում ներդրված Մագդեբուրգյան իրավունքի համաձայն՝ հայերը ստանում են լայն ինքնավարություն: Լվովում, Կամենեցում, Յագլովեցում և մի շարք խոշոր այլ բնակավայրերում նրանք ունեին սեփական դատարաններ, որտեղ հայ համայնքի կողմից ընտրված տասներկու կամ վեց դատավորները գործում էին լեհահայերի օրենսգրքով, որը ստեղծվել էր Միխայիլ Գոշի հայտնի «Գիրք Դատաստանի» հիման վրա և 1519 թ. պաշտոնապես հաստատվել Միգիզմունդ Ա թագավորի կողմից¹:

Քաղաքակրթության՝ առավել զարգացած մակարդակի շնորհիվ հայերն այս տարածաշրջանում գրավում էին սոցիալական բարձր դիրք: Արևելյան երկրների (Թուրքիա, Իրան, Հնդկաստան, Եգիպտոս և այլն) հետ առևտուրը նրանց բացառիկ մենաշնորհն էր, որը պայմանավորված էր արևելյան լեզուների իմացությամբ և այդ երկրներում հայ համայնքների հետ սերտ կապերով:

Հայերը ներմուծում էին արևելյան գործվածքներ, մետաքս, համեմունքներ, քաղցրավենիք, թանկարժեք քարեր և զարդեր, որոնք հատկապես բարձր էին գնահատվում լեհ ազնվականության կողմից: Նույն գործունեների շնորհիվ նրանք նաև դիվանագիտական ծառայություններ էին մատուցում լեհ արքունիքին:

Հայերը միաժամանակ հմուտ արհեստավորներ էին՝ քարտաշներ, կաշեգործներ, գորգագործներ, կավագործներ, զինագործներ, մետաղագործներ, դերձակներ, ոսկերիչներ և այլն: Նրանք մեծ ավանդ ունեին վերոնշյալ արհեստների ներմուծման և զարգացման գործում՝ հիմնելով արհեստագործական միություններ:

Լեհ թագավորները և իշխանները նոր քաղաքներ հիմնադրելիս բնակության էին հրավիրում հայերին, նրանց շնորհում հարկային և մաքսային արտոնություններ, ինչպես նաև բնակելի տներ, եկեղեցիներ և հասարակական այլ շինություններ կառուցելու իրավունք: Նրանք բնակվում էին առանձին թաղամասերում, որոնց կենտրոնում գտնվում էին հայկական եկեղեցին, դպրոցը, հոգևորականի տունը, իսկ ծայրամասում՝ գերեզմանատունը:

Հետաքրքրական է, որ ուկրաինացի հայագետ Իվան Լիննիչենկոն ուսումնասիրությունների արդյունքում հանգել է այն եզրակացության, որ տարածաշրջանի առավել հռչակավոր կենտրոնները, ինչպիսիք են Լվովը, Լուցկը և Կամենեց-Պոդոլսկին, իրենց հարստությամբ, փայլով և նշանակությամբ առավելապես պարտական էին հայերին²:

Հայերը մեծ մասնակցություն են ունեցել նաև երկրի պաշտպանության գործում. Կամենեցում, Ժվանեցում և Յագլովեցում կառուցել են բերդապարիսպներ, լեհական բանակին տրամադրել զորք, զենք և զինամթերք: Մասնավորապես հայտնի է, որ 1683 թ. Վիեննայի մոտակայքում օսմանյան բանակին հաղթած և Եվրոպայի փրկիչը համարվող Յան Գ Սոբեսկի թագավորի զորքում կռվում էին մի քանի հազար հայեր³:

Լեհահայ համայնքը շարունակաբար հզորանում էր ԺԷ-ԺԸ դարերում, իսկ հայկական մեծ և փոքր գաղթօջախների ընդհանուր թիվը մոտ 60 էր: Գալիցիայում հայերի կենտրոնը Լվովն էր՝ հայ եպիսկոպոսի նստավայրը, իսկ Պոդոլիեում՝ Կամենեցը, որտեղ հայերը լեհերի և ռուսիների պես, որպես բնիկներ, ունեին առանձին և անկախ մագիստրատ ու վոյտ (կառավարիչ): Մյուս խոշոր և հայտնի գաղթօջախներից կարելի է առանձնացնել Լուցկը, Վլադիմիր-Վոլինսկին, Գալիչը, Յագլովեցը, Սնյատինը, Չամոստիան, Տիսմենիցան, Խոտինը, Բարը,

¹ Гаюк И., Армянская церковь как уникальный феномен христианского мира, Львов, 2005, էջ 162.

² Լիննիչենկո Ի., Լեհաստանի եւ Արեւմտեան-Հարավային Ռուսիայի հայերը, Մոսկուա, 1894, էջ 3:

³ http://pl.wikipedia.org/wiki/Ormianie_w_Polsce.

ԱՐԵՎՍՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՔԱՐՏԵԶ



Բերեժանին, Պողիայցին, Ջոլչևը, Յարուսավը, Բուչաչը, Ժվանեցը, Ստանիսլավը, Հորոդենկան, Լիսեցը, Օբերտինը, Ստուդենիցան, Կուրաչիվցին, Չերնովցին, Բրոդին, Սատանովը, Ռաշկովը, Բալտան, Կուտին և Մոգիլ-Պողոլսկի⁴:

Հայ համայնքի համար կործանարար են դառնում ԺԷ դարի կեսերից տեղի ունեցող որոշ իրադարձություններ: Նախ մեծ հարված էր բռնի կաթոլիկացումը: 1627 թ. Էջմիածնից Լվով է ժամանում Ամենայն հայոց Մելքիսեթ կաթողիկոսը և երիտասարդ հոգևորական Նիկոլայ Թորոսիչին օծում Լվովի հայոց եպիսկոպոս: Վերջինս չի ընդունվում հայ համայնքի կողմից և դիրքերը պահպանելու համար օգնության է դիմում լեհական իշխանություններին և Հռոմի պապին, որոնց հորդորով 1630 թ. ընդունում է կաթոլիկություն⁵: Պայքարն ընդդեմ կաթոլիկացման շարունակվում է ընդհուպ մինչև ԺԷ դարի վերջը, սակայն չդիմանալով տնտեսական և քաղաքական ճնշումներին՝ հայերը տեղի են տալիս:

1672-1699 թթ. օսմանյան զորքերի կողմից Հարավային Պողոլիեի բռնազավթման արդյունքում Կամենեցի, Յազլովեցի, Ժվանեցի և մի շարք այլ քաղաքների հայերը ստիպված են լինում հեռանալ, իսկ դրանց ազատագրումից հետո արդեն միայն մի մասն է վերադառնում՝ գտնելով իրենց եկեղեցիները և տները կիսավեր վիճակում⁶:

ԺԸ դարի վերջին Ռեչ Պոսպոլիտայի (1569-1795 թթ. Լեհ-լիտվական միացյալ պետություն) բաժանումը Ռուսական, Պրուսական և Ավստրիական կայսրությունների միջև հանգեցնում է նոր իշխանությունների կողմից հայկական ինքնավարության մարմինների և դատարանների վերացմանը: Ռուսական կայսրության տարածքում ԺԹ դարի սկզբին դադարեցվում է նաև հայ կաթողիկե եկեղեցու անկախությունը՝ այն ենթարկելով տեղի կաթոլիկ եպիսկոպոսությանը:

Հայ համայնքի տնտեսապես թուլանալը պայմանավորված էր ԺԸ դարից սկսած հրեա առևտրականների հզորացման հետ, քանի որ նրանք իրավունք էին ստացել բնակվելու քաղաքներում և անազնիվ մրցակցությամբ աստիճանաբար դուրս էին մղում հայերին առևտրի ոլորտից⁷:

Վերոնշյալ գործոնների ազդեցության, ինչպես նաև մայրենի լեզվի մոռացության արդյունքում տեղի էր ունենում հայ համայնքի աստիճանական ուժացումը և լեհացումը: ԺԹ դարի սկզբին գաղթօջախների մի մասն արդեն անցել էր պատմության գիրկը:

Հայ համայնքի վերջին զարթոնքը կապված է 1918 թ. Լեհաստանի Երկրորդ Հանրապետության կազմավորման հետ, որի ժամանակ մեծ ավանդ ունեռ հասարակական-քաղաքական գործիչ, Լվովի ու Բերեժանու պատվավոր քաղաքացի, Ավստրո-Հունգարական, այնուհետև լեհական Մեյմի պատգամավոր, Լվովի վերջին հայ կաթողիկե

4 Baracz S., Rys dziejow Ormianskich, Ternopol, 1869, էջ 72-180:

5 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 285-306:

6 Григорян В., История армянских колоний Украины и Польши (армяне в Подолии), Ереван, 1980, էջ 89-91:

7 Նշվ. աշխ., էջ 168:

արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոֆիլ Թեոդորովիչը (1864-1938 թթ.): Նրա մահվան կապակցությամբ 1938 թ. դեկտեմբերի 4-ին Լեհաստանում հայտարարվում է համազգային սուգ: Յ. Թ. Թեոդորովիչի օրոք վերանորոգվում և ընդլայնվում է Լվովի մայր տաճարը, հիմնվում է Լվովի հայկական թանգարանը, եկեղեցական ծեսը մաքրվում է լատինականությունից, հրատարակվում է «Սուրբ Գրիգորի սուրհանդակ» լեհերեն ամսագիրը և այլն:

Սակայն Երկրորդ աշխարհամարտը, ֆաշիստական օկուպացիան և դրան հաջորդող Գալիցիա-Պոդոլյան հողերի միացումը Խորհրդային Ուկրաինային կործանարար են լինում հայ համայնքի համար: Լեհաստան, կաթողիկե ու բարեկեցիկ հայերն օտար էին նոր համայնավարական հասարակարգին և լեհերի հետ միասին Լեհաստան են արտաքսվում: Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոսության վերջին ղեկավար Դիոնիսիոս Կատեանովիչը, որը պատերազմի պատճառով այդպես էլ եպիսկոպոս չօժվեց, 1945 թ. նոյեմբերի 27-ին ձերբակալվում է խորհրդային հատուկ ծառայությունների կողմից, մեղադրվում գեներալ Դրաստամատ Կանայանի ստեղծած Հայկական լեզեոնին աջակցելու համար⁸ և 1954 թ. նոյեմբերի 18-ին Կոմի Հանրապետությունում գտնվող ուղղիչ-աշխատանքային ճամբարում կնքում մահկանացուն⁹:

Հայ համայնքի ամբողջ գույքը, եկեղեցիներն ազգայնացվում են, մի մասը վերածվում է տարատեսակ պահեստների, սպորտային և մշակութային հաստատությունների, իսկ Կամենեց-Պոդոլսկու, Մոզիլ-Պոդոլսկու, Տիսմենիցայի և մի շարք այլ եկեղեցիներ հիմնահատակ քանդվում են:

Երբեմնի հզոր համայնքից այսօր որպես հուշ են մնացել հայկական մի քանի տասնյակ շինություններ, լքված գերեզմանատներ և թանգարանային մեծաքանակ նմուշներ: Լեհաստանում բնակվող հայերի ժառանգների ճնշող մեծամասնությունն իրեն համարում է հայկական ծագումով լեհ, ընդ որում, խառնամուսնությունների պատճառով նրանք գրեթե չեն պահպանել ազգային դիմագիծը:

Այս համայնքի շուրջ ութդարյա փառապանծ պատմությունը և տխուր վախճանը համոզիչ օրինակ են այն բանի, որ հայրենիքից դուրս հայերը վաղ թե ուշ դատապարտված են ուժացման և կործանման:

Ուկրաինայի անկախացումից հետո հայկական հուշարձանների ճակատագիրը տարբեր կերպ է դասավորվել:

2012 թ. մայիս ամսին Արևմտյան Ուկրաինայի երբեմնի հայաշատ տասներեք բնակավայրերում կատարված հետազոտությունների շրջանակում մեզ հաջողվեց ուսումնասիրել պահպանված պատ-

մաճարտարապետական մոտ երկու տասնյակ հուշարձաններ և համալիրներ: Հայկական տասնչորս կանգուն եկեղեցիներից միայն Լվովի մայր տաճարը և մասամբ Չերնովցու եկեղեցին են վերադարձվել Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմին: Իվանո-Ֆրանկովսկի, Կամենեց-Պոդոլսկու և Կուտիի եկեղեցիները տրամադրվել են Ուկրաինական ուղղափառ, Յազովեցիներ և Լվովի Սբ. Խաչը՝ Ուկրաինական հունակաթողիկ, իսկ Լիսեցիներ և Ժվանեցիներ՝ Լեհ կաթողիկ եկեղեցիներին: Ինչ վերաբերում է Բերեժանու, Հորոդենկայի, Սնյատինի և Լուցկի հայկական եկեղեցիներին, ապա դրանք կիսախարխուլ վիճակում են և հանձնված են բախտի քմահաճույքին:

1. ԼՈՒՑԿ (ԼՈՒՑԱԿ, ԼՈՒԿԵՈՐԻԱ)

Վոլինիայի մարզի կենտրոնն է և այժմ ունի մոտ 200.000 բնակիչ:

Հայերը քաղաքում հիմնավորվել են ԺԳ դարից, և մինչև Լվով տեղափոխվելը (1367 թ.) այն հայ առաքելական եպիսկոպոսի նստավայրն էր:

Հայոց թաղը գտնվում էր հին քաղաքի արևմտյան մասում, որտեղ ԺԳ դարում հայերի մոտ 800 տուն կար¹⁰, սակայն աստիճանական ուժացման հետևանքով ԺԹ դարի սկզբին համայնքն այլևս գոյություն չունեց¹¹:

Սբ. Ստեփանոս հայկական եկեղեցի. գտնվում է հին հայկական թաղամասում՝ Գալիչկա Գուլյիչևնա փողոց, № 12 հասցեում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 50°44.20.21''; E 025°18.54.48'', ծ. մ. 180 մ):

Կառուցվել է 1427 թ., իսկ 1560-ական թթ.՝ հիմնավորապես վերանորոգվել հայ հոգևորական Վարչիկի կողմից¹²:

Մինչև ԺԷ դարի կեսերը գործում էր որպես հայ առաքելական եկեղեցի, այնուհետև վերափոխվում հայ կաթողիկե եկեղեցու: 1820 թ. փակվում է և վերածվում զինապահեստի: 1845 թ. շենքն այրվում է:

1954 թ. խորհրդային իշխանությունները կիսավեր եկեղեցին վերափոխում են երկհարկանի բնակելի շենքի¹³:

Եղել է միանավ, երկթեք տանիքով բազիլիկ շինություն (արտաքին չափերն են՝ մոտ 22 x 11 մ, բարձրությունը՝ 14 մ, պատի հաստությունը՝ 1,5 մ): Ունեցել է երեք խորան՝ նվիրված Սբ. Ստեփանոսին, Սբ. Աստվածածնին և Սբ. Կատեանին¹⁴: Ուղղանկյուն սրահի արևելյան մասում նույնաձև խորանն

¹⁰ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 278:

¹¹ Baracz S., նշվ. աշխ., էջ 154:



¹² Колосок Б., К истории армянского строительства в Луцке, «Архитектурное наследство», 1984, № 32, էջ 122-124:

¹³ Троневич П., Хілько М., Сайчук Б., Втрачені християнські храми Луцька, Луцьк, 2001, էջ 62-64:

¹⁴ Baracz S., նշվ. աշխ., էջ 153:

⁸ Дашкевич Я., Вірмени в Україні: дорогами тисячоліть, Львів, 2012, էջ 1072-1074:

⁹ Гаюк И., նշվ. աշխ., էջ 206:



ԼՈՒՑԿ. Սբ. Ստեփանոս եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից
 ա) Ի դարի սկզբին

բ) 2012 թ.՝ վերածված բնակելի շենքի

գ) եկեղեցու կտրվածքը դեպի հյուսիս և հատակագիծը

եր՝ կից մեկական ավանդատնով, որոնց մուտքերը բացված էին խորանից¹⁵: Վերջինիս արևելյան պատը ներքուստ մեղմ կորոթյուն ուներ և արտաքուստ շեշտված էր ուղղանկյուն ծավալով: Մուտքը բացված էր հարավային ճակատի կենտրոնից:

Բնակելի շենքի վերածելիս կառույցին հավելել են նոր բացվածքներ, պատշգամբներ և միջնորմներ: Այժմ էլ հստակ նշմարվում է եկեղեցու ավագ խորանը, որտեղ բնակիչների լոգասենյակներն են:

Քաղաքում հայ համայնքին պատկանող մյուս հուշարձանները, այդ թվում՝ եկեղեցուն հարող հոգևորականի տունը, հիվանդանոցը և գերեզմանատունը, չեն պահպանվել:

2. ԼՎՈՎ (ԼՎԻՎ, ԼԵՄԲԵՐԳ, ԼԵՈՊՈԼԻՍ)

Արևմտյան Ուկրաինայի նույնանուն մարզի և հայ համայնքի գլխավոր կենտրոնն է՝ մոտ 750.000 բնակչությամբ:

Հայերը Լվովի հիմնադիրներից են և այստեղ են հաստատվել ԺԳ դարի կեսերին՝ իշխան Դանիել Գալիցկու կողմից քաղաքի հիմնադրման ժամանակներից, չնայած առաջին հիշատակությունը Լվովի տարածքում ապրող հայերի մասին վերաբերում է 1183 թ. Պողոսյան Վաչագանի Սբ. Աննա հայկական փայտաշեն եկեղեցուն¹⁶:

1349 թ. Լեհաստանի թագավոր Կազիմիր Գ Մեծը գրավում է Լվովը, իսկ 1356 թ.-ից քաղաքին շնորհվում է Մագդեբուրգյան իրավունք, որի արդյունքում հայերը ստանում են լիակատար ինքնավարություն, մասնավորապես՝ սեփական դատարան: Այն պահպանվում է մինչև 1787 թ.:

1367 թ. Հայ առաքելական եպիսկոպոսությունը Լուցկից տեղափոխվում է Լվով և գործում մինչև 1946 թ.:

ԺԵ դարի սկզբին քաղաքում բնակվում էր մոտ 300 հայ ընտանիք, որը կազմում էր բնակչության մոտ 1/4-ը, իսկ ծաղկման շրջանում՝ ԺԷ դարի սկզբին, նրանց թիվը հասնում էր մոտ 1000-ի¹⁷:

1616 թ. Լվովում հիմնադրվում է առաջին հայկական տպարաններից մեկը, որտեղ տպագրվում են հայերեն և հայատառ գրքեր, այդ թվում նաև հայ-դիչաղերենով, որը Գրիմից գաղթած հայերի հիմնական խոսակցական լեզուն էր¹⁸:

ԺԷ դարում Լվովում գործում էր հայկական դպրոց՝ 80 աշակերտի համար, 1665-1784 թթ.՝ հայ կաթողիկե հոգևոր բարձրագույն պապական, 1863-1914 թթ.՝ հայ որբերի գիշերօթիկ դպրոցները¹⁹:

1792 թ. հիմնադրվում է «Mons Pius» հայկական առևտրային բանկը՝ 40 հազար ոսկի կապիտալով²⁰:

¹⁵ Колосок Б., նշվ. հոդվ., էջ 123:

¹⁶ Lechicki Cz., Kosciol Ormianski w Polsce, Lwow, 1928, էջ 33:

¹⁷ Baracz S., նշվ. աշխ., էջ 117:

¹⁸ Дашкевич Я., նշվ. աշխ., էջ 279-303:

¹⁹ Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 283:

²⁰ Lechicki Cz., նշվ. աշխ., էջ 113:

ԺԸ դարի վերջերից հայ համայնքն աստիճանաբար նորանում է և վերջնականապես վերանում Ի դարի 40-ական թվականներին:

1934-1939 թթ. գործում էր Լվովի հայկական թանգարանը²¹, որի նմուշների մի մասն այժմ ցուցադրվում է Լվովի կրոնի պատմության թանգարանում:


ԺԶ դարում Լվովում հիշատակվում են հայկական 3 եկեղեցի և 1 վանք՝ Սբ. Աստվածածնի վերափոխման, Սբ. Խաչ, Սբ. Հակոբ և Սբ. Աննա²², որոնցից այժմ կանգուն են առաջին երկուսը:

Սբ. Աստվածածնի վերափոխման մայր եկեղեցի. գտնվում է Վիրնենսկա (Հայկական) փողոց, № 7-13 հասցեում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 49°50.36.14''; E 024°01.50.41'', ծ. մ. 288 մ):

Արևելյան հնագույն հատվածը կառուցվել է 1363-1370 թթ. որինահայ առևտրականներ Շահին-շահի որդի Հակոբ Կաֆայեցու և Աբրահամի որդի Փանոս Հաչաթեցու միջոցներով: Ճարտարապետն էր Գրիմից հրավիրված ճեմովացի Դորինգենը (Դորչի)²³: Դարերի ընթացքում եկեղեցին բազմիցս վերակառուցվում և ընդլայնվում է:

ԺԶ դարում հյուսիսային և հարավային մասերում ավելացվում են սյունաքանդակները:

ԺԷ դարում Լվովի հայ կաթողիկե առաջին եպիսկոպոս Նիկոլայ Թորոսկիչը բարոկկո ոճով եկեղեցուն արևմուտքից կցում է կենտրոնական միանավ հատվածը (ճարտ.՝ Վոյցեկ Կիելար): Բացի



ԼՎՈՎ. Սբ. Աստվածածնի վերափոխման եկեղեցու հատակագիծը

այդ՝ ամբողջությամբ վերափոխում է եկեղեցու ներքին հարդարանքը և հարմարեցնում կաթողիկե եկեղեցու պահանջներին:

1712 թ. եկեղեցին մեծապես տուժում է հրդեհից, 1723-31 թթ.՝ հիմնավորապես վերանորոգվում²⁴:

Վերջին խոշոր վերանորոգումը և ընդլայնումը դեպի արևմուտք իրականացվում են Ի դարի սկզբին Լվովի հայ կաթողիկե արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչի կողմից: Նրա պատվերով ճարտ. Ֆրանցիսկ Մոնչինսկին մոդեռն ոճով կառուցում է եկեղեցու երրորդ՝ կենտրոնագմբեթ հատվածը, իսկ



ԼՎՈՎ. Սբ. Աստվածածնի վերափոխման եկեղեցու տեսքը հարավից (ջրաներկ, գործ՝ Ս. Բիսաժի, 1937 թ.) և հարավ-արևելքից (լուս.՝ 2012 թ.)

արևմտյան մասից դեպի Կրակովյան փողոց՝ գլխավոր շքամուտքը:

Արևելյան հնագույն մասում որմերից և մույթերից ծեփածածկույթի հեռացման ժամանակ կրկին ի հայտ են գալիս հայ առաքելական շրջանում ստեղծված խաչաքանդակները և որմնանկարները:

Ի դարի 30-ական թթ. եկեղեցին հարդարվում է Յան Հենրիկ Ռոզենի գեղանկարներով և Յուզեֆ Մեռոֆֆերի խճանկարներով²⁵:

Խորհրդային իշխանության տարիներին եկեղեցին փակվում է և վերածվում նկարների պահոցի:

2000 թ. վերադարձվում է հայ առաքելական եկեղեցուն, վերանորոգվում և 2003 թ. մայիսի 18-ին օծվում Գարեգին Բ կաթողիկոսի կողմից:

21 Smirnow J., Muzeum Ormiańskie we Lwowie, “Kurier Galicyjski”, 30.04-13.05.2010, էջ 20-21:

22 Baracz S., նշվ. աշխ., էջ 104-152:

23 Lechicki Cz., նշվ. աշխ., էջ 34:

24 Նշվ. աշխ., էջ 98:

25 Wolanska J., Katedra Ormiańska we Lwowie, w latach 1902-1938, Warszawa, 2010, էջ 529-535:



ԼԿՈՎ. հատվածներ Սբ. Աստվածածնի վերափոխման եկեղեցու. ներքին ծավալներից և Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսի (1545-1567 թթ.) բարձրաքանդակը

Եկեղեցին 1998 թ.-ից ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում (№ 865):

Բաղկացած է արևելյան հին եկեղեցուց, կենտրոնական միանավ և արևմտյան գմբեթավոր սրահներից: Եկեղեցուն կցված են հարավային սյունասրահը և հյուսիսային ավանդատուն-գանձարանը:

Հին եկեղեցի. եռանավ, խաչաձև, երկսյուն գմբեթավոր բազիլիկ է՝ կառուցված հայ միջնադարյան ճարտարապետական ոճով (արտաքին չափերն են՝ 15 x 12,5 մ): Կենտրոնական նավն ավելի լայն է և բարձր կողային նավերից: Երեքն էլ արևելքից ավարտվում են ներքուստ և արտաքուստ կիսաշրջան հատակագծով խորաններով: Տրանսեպտի և կենտրոնական նավի հատման տեղում վեր է հանում 12 նիստանի թմբուկով, բրգաձև վեղարով գմբեթը:

Կենտրոնական միանավ սրահ. ուղղանկյուն, թաղածածկ, միանավ, երկթեք տանիքով կառույց է՝ կից հին եկեղեցուն արևմուտքից: Փայտաշեն կեստնային թաղը տեղ-տեղ պատված է ոսկեգօծ նախշերով:

Արևմտյան գմբեթավոր սրահ. կենտրոնական միանավ սրահին արևմուտքից կից ուղղանկյուն շինություն է, որի չորս անկյունային որմնասյուների հենված է աստիճանավոր առագաստներով կեղծ գմբեթը:

Հարավային սյունասրահ. պսակված է երկայնական չորս և լայնական երկու կամարներով: Հատակը պատված է արձանագիր բազում տապանաքարերով:


Հյուսիսային ավանդատուն-գանձարան. միա-հարկ սյունասրահը հետագայում արտաքուստ



ԼՎՈՎ. Սբ. Աստվածածնի վերափոխման եկեղեցու զանգակատուն-աշտարակի տեսքը հյուսիսից

Pius» հայկական առևտրային բանկի և հայ բենեֆիկտուսիների վանական շինությունները:

Չանգակատուն-աշտարակը կառուցվել է 1571 թ. ճարտ. Պյոտր Կրասովսկու կողմից կաֆայեցի հայ վաճառական Անդրեասի պատվերով²⁷: Այն քառակուսի հատակագծով եռահարկ շինություն է: Առաջին հարկն ունի թաղածածկ դարպաս, որը միմյանց է կապում Հայկական փողոցը և եկեղեցու արևելյան բակը: Երկրորդ հարկն ուղղանկյուն սենյակ է: Երրորդ հարկից սկսած՝ ընդհանուր ծավալից առանձնանում են չորս կիսակլոր փոքր աշտարակները, որոնք ավարտվում են կենտրոնական ռոտոնդայի չորս կողմերում տեղադրված փոքր ռոտոնդաներով:



ԼՎՈՎ. Սբ. Խաչ վանքի տեսքն արևմուտքից

պատով փակվել է և այժմ մասամբ ծառայում է որպես հայ հոգևորականի նստավայր: Արևմտյան մասում դրան կցված է երկհարկ շինություն:

Ներքին հարդարանք. ներքուստ մասամբ պատված է խճանկարներով և որմնանկարներով: Վերջիններիս մեծ մասը մոդեռն արվեստի գլուխգործոցներից է: Գ-մբերին առկա է Հայր Աստծո, Հիսուս Քրիստոսի և Սբ. Հոգու յուրօրինակ խճանկարը՝ պատրաստված մուրանոյի ապակույց: Աստվածաշնչյան կերպարների գերակշիռ մասը ներկայացված է Լվովի՝ Ի դարի սկզբի մշակութային և եկեղեցական ականավոր գործիչների դիմապատկերներով²⁶: Ավագ խորանին «Խորհրդավոր ընթրիքը» որմնանկարն է, որտեղ Հուրան հավանաբար ոչ որի չվիրավորելու նպատակով ունի անդեմ ստվերի տեսք:

Եկեղեցում են գտնվում Ստեփանոս Ե Սալմաստեցի Ամենայն հայոց կաթողիկոսի արձանը և Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Իսահակ Իսահակովիչի մարմարե կիսանդրին:

Այլ շինություններ. եկեղեցու ճարտարապետական համալիրի կազմում են նաև զանգակատուն-աշտարակը, հայ եպիսկոպոսի նստավայրը, «Mons

Եկեղեցու բակում պահպանվել են հայատառ և լատինատառ բազմաթիվ շիրմաքարեր, որոնց մի մասն այստեղ է բերվել ԺԸ դարի վերջին ավերված հայոց գերեզմանատնից:

Համալիրը հարավից կամարաշար պարսպով առանձնացված է հին հայկական քարաշեն կառույցներով հայտնի Վիրմենսկա փողոցից, որը Լվովի հնագույն վայրերից է: Հայկական շենքերը 3-4 հարկանի են, ունեն մեծ նկուղներ, գեղեցիկ շքամուտքեր և պատշգամբներ: Պատերին փակցված ցուցանակների վրա նշված են դրանք կառուցած հայ ընտանիքների անունները՝ Էմինովիչներ, Թումանովիչներ, Մուրատովիչներ, Նիկոլակիչներ և այլն:

Սբ. Խաչ հայկական վանք. գտնվում է Չամարտինովսկայա փողոց, № 9 հասցեում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 49°50.57.13''; E 024°01.34.29'', ծ. մ. 270 մ):

Փայտաշեն եկեղեցին կառուցվել է 1611 թ., իսկ քարակերտ եկեղեցին՝ 1630-ական թթ. հայ վաճառական Սահակ Ագոբսովիչի միջոցներով²⁸:

ԺԸ դարի վերջերից Սբ. Խաչ վանքն առգրավում են ավստրիական իշխանությունները, գործածում

26 Նշվ. աշխ., էջ 194-198:

27 Baracz S., նշվ. աշխ., էջ 115:

28 Lechicki Cz., նշվ. աշխ., էջ 63:



ԼՎՈՎ. հատված Լիչակովսկի գերեզմանոցից և հայկական գիշերօթիկ դպրոցի հիմնադիր Յոզեֆ Թորոսիչի մահարձանը

որպես ռազմական հիվանդանոց, զորանոց, իսկ հետագայում՝ նաև որպես բանտ: Խորհրդային տարիներին այստեղ գործում էր Հրշեջ ուսումնարանը, որն այժմ Լվովի ոստիկանական ակադեմիան է:

Եկեղեցին վերանորոգվում է 2004 թ. և գործածվում հունակաթղթիկ հոգևորականների կողմից:

Բարոկկո ոճով կառուցված միանավ բազիլիկ շինություն է՝ արտաքուստ շեշտված ուղղանկյուն խորանով և երկու ավանդատներով: Արևմտյան մասում գտնվում է եռակամար զանգակատունը:

Հայկական մահարձաններ և տապանաքարեր Լվովի Լիչակովսկի կենտրոնական գերեզմանոցում. բազմազգ հանգուցյալների այս գերեզմանոցում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 49°50.00.42''; E 024°03.10.89'', ծ. մ. 314 մ) իրենց ճոխությամբ առանձնանում են բազմաթիվ դամբարաններ ու մատուռներ, որոնք կրում են հայկական ազգանուններ՝ Թորոսիչներ, Միկուլիներ, Վարտանովիչներ, Արրազամովիչներ, Բոգդանովիչներ, Մարմարոշներ, Թեոդորովիչներ և այլն: Ակնառու են Լվովի հայ եպիսկոպոսներ Սամուել Ստեֆանովիչի, Գրիգոր Շիմոնովիչի, Գրիգոր Ռոմաշկանի, Իսահակ Իսահակովիչի և Յոզեֆ Թեոդորովիչի մահարձանները: Մուտքի մոտ բժիշկ և մեկենաս, հայկական գիշերօթիկ դպրոցի հիմնադիր Յոզեֆ



ԼՎՈՎ. հայ եպիսկոպոսներ Սամուել Ստեֆանովիչի (վախճ. 1858 թ.) և Գրիգոր Շիմոնովիչի (վախճ. 1875 թ.) մահարձանները

Թորոսիչի մահարձանն է՝ երկու սաների հետ, իսկ մի փոքր վերև՝ նրա եղբոր՝ հայտնի բժիշկ և դեղագործ, Տրուսկավեցի հանքային ջրերի բուժիչ հասկոթյունները հայտնաբերած Թեոդոր Թորոսիչի շիրմաքարը:

3. ԲԵՐԵՇՄՆԻ (ԲԵՐԺԵՇՄՆԻ)

Տերնուպոլի մարզի Բերեժանու շրջանի կենտրոնն է և ունի մոտ 20.000 բնակիչ:

Հայերը քաղաքում հիմնավորվել են ԺԷ դարի երկրորդ կեսից և ունեցել լայն ինքնավարություն, վոյտ և սեփական դատարան²⁹:

ԺԸ-ԺԹ դդ. գործում էր հայկական գրավատունը, որի եկամուտներն ուղղված էին եկեղեցու և հոգևորականի նյութական կարիքները հոգալու համար: Հայտնի են հիմնադիրների անունները՝ Անտոն Այվազովիչ, Աննա Կամենչանկա, Գունիկ Բոգոսևիչ, Բոգրան Ստեֆանովիչ և այլք³⁰:

1724 թ. հայկական դպրոցը գլխավորում էր քահանա Յան Օհանովիչը³¹:

ԺԸ դարի սկզբին Բերեժանիում բնակվում էր մոտ 200 հայ ընտանիք³², իսկ 1890-1897 թթ.՝ Յուզեֆ Թեոդորովիչի հովվությամբ՝ մոտ 240 հոգի³³:

Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է քաղաքի Վիրմենսկա փողոցում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 49°26.41.42''; E 024°56.12.74'', ծ. մ. 283 մ):

Կառուցվել է 1764 թ. հայ հոգևորական Դեոդատ Հորբազի նախաձեռնությամբ նախկին փայտաշեն եկեղեցու տեղում³⁴: 1791 թ. սեպտեմբերի 11-ին եկեղեցին օծվում է Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Յակոբ Թումանովիչի կողմից³⁵:

ԺԸ դարի վերջին՝ Ռեչ Պոսպոլիտայի բաժանումից հետո, Բերեժանին անցնում է Ավստրիական կայսրությանը, հայկական ինքնավարությունը վերանում է, իսկ հայ համայնքը՝ խիստ նոսրանում: Եկեղեցին բռնագրավվում է և գործածվում նախ որպես ցորենի պահեստ, ապա՝ լեռ կաթոլիկ եկեղեցի, իսկ ավելի ուշ՝ որպես զինապահեստ:

1828 թ. հայ համայնքին հաջողվում է վերադարձնել և վերանորոգել եկեղեցին, որը նույն թվականի սեպտեմբերի 10-ին վերածում է Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Սամուիլ Ստեֆանովիչը³⁶: Այն գործում է մինչև 1945 թ., իսկ վերջին հոգևոր սպասավոր Կազիմիր Ռոմաշկանը ձերբակալվում



ԲԵՐԵՇՄՆԻ. Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցու և զանգակատան տեսքը հյուսիս-արևելքից (ջրաներկ, գործ՝ Ս. Բիսաժի, 1937 թ.) և հարավ-արևելքից (լուս.՝ 2012 թ.)

և դատապարտվում է հակախորհրդային գործունեության համար³⁷:

Խորհրդային տարիներին եկեղեցին կրկին վերածվում է պահեստի, իսկ 1990-ական թթ. սկզբին՝ կարճ ժամանակով տրամադրվում Մոսկովյան պատրիարքության Ուկրաինական ուղղափառ եկեղեցուն: Այդ տարիներին եկեղեցու ներսում իրականացվում են վերափոխման աշխատանքներ, ոչնչացվում բազմաթիվ որմնաքանդակներ, որոնց հետքերը դեռևս պահպանվում են:

Ներկայումս եկեղեցին չի գործում, տանիքը վթարային վիճակում է, և անհասպող վերանորոգման կարիք ունի:

Միանավ բազիլիկ է՝ արևմուտքից հիմնական ծավալից առանձնացող արտաքուստ ուղղանկյուն խորանով: Մուտքը բացված է արևելյան ճակատից, որը ձևավորված է չորս դեկորատիվ որմնաշյուներով և հորիզոնական քիվերով: Խորանի երկու կողմերում ավանդատներն են, որոնցից հարավայինը գաղտնի թունելով միացած է եղել Բերեժանու

29 Գրիգորյան Վ., Ավանրկ Բերեժանիի հայ գաղութի պատմության, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 79-81:

30 Григорян В., նշվ. աշխ., էջ 152:

31 Baracz S., նշվ. աշխ., էջ 78:

32 Дашкевич Я., նշվ. աշխ., էջ 231:

33 Գրիգորյան Վ., նշվ. հոդվ., էջ 84:

34 Baracz S., նշվ. աշխ., էջ 78:

35 Նշվ. աշխ., էջ 79:

36 Նշվ. աշխ., էջ 80:

37 Смирнов Ю., Из истории Бережанская армян и их святых, “Галицкие ворота”, 2002, № 7-9 (91-93), էջ 26:



ՔԵՐԵԺԱՆԻ. Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցին հյուսիս-արևմուտքից, հատվածներ ներքին ծավալներից և սրբերի բարձրաքանդակներ (լուս.՝ 2012 թ.)

բերդին, սակայն այն այժմ մասամբ փլուզված է: Եկեղեցու արևելյան եզրին կառուցված է օթյակը, որը հենվում է երկսյուն, եռակամար նախասրահին: Օթյակի լուսամուտին որպես պատուհանագոգ է ծառայում հայ հոգևորականի տապանաքարը, որը հավանաբար այստեղ է հայտնվել խորհրդային տարիներին: Մասամբ պահպանված գեղեցիկ որմնակարները և որմնաքանդակները խիստ վտանգված են՝ տանիքից ներթափանցող անձրևաջրերի պատճառով: Տանիքի կենտրոնում պահպանվել է ռոտոնդան:

Եկեղեցու տարածքը շրջապատված է քարե պարսպով, որի արևելյան մասում զանգակատունն է: Հարավային կողմում գտնվում է հայկական





ԲԵՐԵՃԱՆԻ, հայկական դպրոցը 1930-ական թթ. և 2012 թ., զանգակատունը (լուս.՝ 2012 թ.)

դպրոցի շենքը, իսկ դեպի հյուսիս՝ հայ հոգևորականի տունը: Վերջինս, ի տարբերություն եկեղեցու և դպրոցի, բավական բարվոք վիճակում է և գործում է որպես Բերեժանու պատմաճարտարապետական արգելոցի վարչական շենք:

4. ԻՎԱՆՈ-ՖՐԱՆԿՈՎՍԿ (ՍՏԱՆԻՍԼԱՎ, ՍՏԱՆԻՍԼԱՎՈՎ)

Համանուն մարզի կենտրոնն է և ունի մոտ 225.000 բնակիչ: Քաղաքը 1662 թ. հիմնադրել է լեհ մագնատ Անջեյ Պոտոցկին: Նա, հրավիրելով հայերին, տալիս է լայն ինքնավարություն³⁸:

1665 թ. հայերն արդեն ունեին փայտաշեն եկեղեցի, որի առաջին հայ հոգևորականը Գրիգոր Բալասանովիչն էր³⁹:

ԺԸ դարի սկզբին համայնքը ծաղկում է ապրում:

1743 թ. սկսվում է աղյուսաշեն նոր եկեղեցու կառուցումը⁴⁰:

1782 թ. հայ համայնքի անդամների թիվը հասնում էր 396-ի, 1808 թ.՝ 514-ի, իսկ 1900 թ.՝ 699-ի⁴¹:

Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է քաղաքի կենտրոնում՝ Վիրմենսկա փողոց, № 6 հասցեում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°55.21.55''; E 024°42.42.82'', ծ. մ. 257 մ):

Եկեղեցին կառուցվել է 1743-1763 թթ. և հետագայում բազմիցս նորոգվել:

1868 թ. այն մեծապես վնասվում է համաքաղաքային մեծ հրդեհից, վերանորոգվում 1870 թ., ինչի արդյունքում երկու աշտարակները դառնում են ավելի ցածր, իսկ դրանց բրգածև վեղարները՝ զանգակածև:

Առաջին աշխարհամարտի ժամանակ եկեղեցին տուժում է գնդակոծությունից, 1919-1930 թթ. կրկին նորոգվում է և գործում մինչև 1946 թ.⁴²:

Խորհրդայնացումից հետո հայերը ստիպված լքում են քաղաքը՝ հիմնականում վերաբնակվելով Գդանսկ քաղաքում:

Այդ տարիներին եկեղեցին սկզբում վերածվում է նկարչական արվեստանոցի, իսկ 1971 թ.՝ Աթեիզմի և կրոնի քանգարանի⁴³: 1992 թ.-ից պատկանում է Ուկրաինական ուղղափառ ավտոկեֆալային եկեղեցուն, իսկ դրան կից հոգևորականի տունը և հայկական դպրոցն այժմ ծառայում են որպես հոգևոր ճեմարան:

38 Baracz S., նշվ. աշխ., էջ 167:


39 Chowaniec Cz., Ormiane w Stanislawowie w XVII-XVIII wieku, Stanislawow, 1928, էջ 6:

40 Նույն տեղում:

41 Сиреджук П., Расселение и численность армян в Галицком прикарпатье в XVII-XIX вв., «Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 1, էջ 136:

42 [http://uk.wikipedia.org/wiki/Вірменська_церква_\(Івано-Франківськ\)](http://uk.wikipedia.org/wiki/Вірменська_церква_(Івано-Франківськ)).

43 Նույն տեղում:




ԻՎԱՆՆ-ՖՐԱՆԿՈՎՍԿԻ. Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (ջրամերկ, գործ՝ Ս. Բիսաթի, 1937 թ.) և հատվածներ (լուս.՝ 2012 թ.)

Բարոկկո ոճով կառուցված եռանավ գմբեթավոր բազիլիկ է: Կողային նավերից զգալիորեն բարձր կենտրոնական նավի և տրանսեպտի հատման տեղում գտնվում է կեղծ գմբեթը: Ուղղանկյուն

ավագ խորանը երեք կողմերից շրջապատված է կողային նավերի բարձրությամբ ներքուստ տարանջատված հինգ ավանդատներով:

Արևմտյան ճակատի անկյուններում վեր են



ԻՎԱՆՈ-ՖՐԱՆԿՈՎՍԿ. Սբ. Աստվածածնի անադարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցու արևմտյան ճակտոնի գազափն գետեղված Աստվածածնի արձանը և հատակագիծը (լուս. 2012 թ.)

հառնում բոլորածն հատակագծով երկու զանգակատուն-աշտարակները, որոնց միջև գտնվում են շքամուտքը և նախասրահը:

Եկեղեցին զարդարում են լեռն հայտնի նկարիչ Յան Մոլեցկու որմնանկարները, որոնք առանձնահատուկ վեհություն են հաղորդում, իսկ ավագ խորանի արևելյան պատին կցված է նախկին վեճաբլ՝ հայկական ոճով ձևավորված բուսազարդ խաչաքանդակով:

Արտաքուստ ներկված է երկնագույն սվադով, որի շնորհիվ ժողովրդի կողմից ստացել է «Երկնագույն եկեղեցի» անվանումը:

Եկեղեցուն կից հայկական գերեզմանատունը չի պահպանվել:

5. ԼԻՍԵՑ (ԼԻՍԻՇՑ)

Իվանո-Ֆրանկովսկից մոտ 10 կմ հեռու գտնվող Լիսեց գյուղաքաղաքն այժմ ունի մոտ 2800 բնակիչ:



ԼԻՍԵՑ. ներկայումս գոյություն չունեցող Սբ. Գրիգոր Լուսավորիչ մատուռը (ջրաներկ, գործ՝ Ս. Քիսաժի, 1937 թ.)

Հայերն այստեղ են գաղթել Մուրովայից և Բեսարաբիայից ԺԷ դարի երկրորդ կեսին:

1729 թ. հիմնականում Բոգդանովիչների ընտանիքի միջոցներով ստեղծվում է հայկական բանկը՝ 3681 լեռական ոսկի կապիտալով⁴⁴:

1782 թ. բնակվում էր 268, 1840 թ.՝ 198, իսկ 1922 թ.՝ ընդամենը 44 հայ⁴⁵:

Սբ. Աստվածածնի անադարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է Տարաս Շևչենկոյի փողոցում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°52.06.26''; E 024°36.31.75'', ծ. մ. 294 մ):

Առաջին փայտաշեն եկեղեցին կառուցվել է 1728 թ.: 1779 և 1830 թթ. այրվել է, հետո՝ վերակառուցվել⁴⁶:


1853 թ. կառուցվել է աղյուսաշեն եկեղեցին և պահպանվել մինչև մեր օրերը:

Խորհրդային տարիներին գործում էր որպես աղի պահեստ, այնուհետև՝ կինոթատրոն:

Եկեղեցին ունեցել է վեց խորան, որոնցից երկուսը նվիրված էին Սբ. Աստվածածնին, իսկ մյուսները՝ Հիսուս Քրիստոսին, Սբ. Գրիգորին, Սբ. Աննային և Սբ. Կատաանին⁴⁷:

Վերջին վերակառուցումը կատարվում է Ռևրախնայի անկախացումից հետո և վերածվում Լեռ կաթոլիկ եկեղեցու:

44 Baracz S., նշվ. աշխ., էջ 156:
 45 Сиреджык П., նշվ. հոդվ., էջ 136:
 46 Baracz S., նշվ. աշխ., էջ 154:
 47 Նշվ. աշխ., էջ 155:



ԼԻՍԵՑ. Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (ջրաներկ, գործ՝ Ս. Քիսաժի, 1937 թ.) և 2012 թ.



Այն միանավ բազիլիկ է՝ հյուսիս-հարավ կողմնորոշմամբ: Հարավից հիմնական ծավալից առանձնանում է կիսակլոր խորանը, որին արևմուտքից կից է ցածրահարկ ուղղանկյուն ավանդատունը: Հյուսիսային մասում գտնվող երկհարկանի, ուղղանկյուն հատակագծով նախասրահն ավելի լայն է հիմնական շինությունից: Կենտրոնական մասում վեր է խոյանում երկհարկ զանգակատուն-աշտարակը՝ ութանիստ վեղարով: Մուտքի վերևի խորշում տեղադրված է Սբ. Աստվածածնի արձանը: Նույն ճակատի աջ և ձախ թևերի դռները և պատուհանները խորհրդային տարիներին փակվում են աղյուսաշարով, իսկ նախասրահի երկրորդ հարկն ընդլայնվում է և վերածվում ամֆիթատրոնի: Եկեղեցու ավագ խորանին տեղադրված է հայկական դիմագծերով Սբ. Աստվածածնի՝ հրաշագործ համարվող սրբապատկերի կրկնօրինակը:

Եկեղեցուց դեպի հյուսիս-արևմուտք պահպանվում է հայ հոգևորականի միահարկ տունը, որն այժմ ծառայում է որպես երաժշտական դպրոց:

Հյուսիսարևմտյան մասում կառուցված Սբ. Գրիգոր Լուսավորիչ մատուռը չի պահպանվել:

6. ՏԻՍՄԵՆԻՑԱ (ՏԻՍՄԻՆԻՑԱ)

Իվանո-Ֆրանկովսկի մարզի Տիսմենիցայի շրջանի կենտրոնն է՝ մոտ 10.000 բնակչությամբ:

Հայերն այստեղ հիմնավորվել են ԺՉ դարում: 1782 թ. բնակվում էր 315, իսկ 1922 թ.՝ ընդամենը

135 հայ⁴⁸, որոնք ունեին ինքնավարություն և դպրոց:

Սբ. Կատանի հայ կաթողիկե եկեղեցի. չի պահպանվել: Գտնվում էր քաղաքի կենտրոնում: Այժմ նրա տեղում քաղաքապետարանի շենքն է:

Առաջին փայտաշեն եկեղեցին կառուցվել է 1684 թ. հոգևորական Յակոբ Վարդերեսկիչի գլխավորությամբ⁴⁹: 1759 թ. սկսվում է քարակերտ եկեղեցու շինարարությունը: 1791 թ. օգոստոսի 20-ին օծվում է Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Յ. Թումանովիչի կողմից⁵⁰:



ՏԻՍՄԵՆԻՑԱ. Սբ. Կատանի հայ կաթողիկե եկեղեցին (ջրաներկ, գործ՝ Ս. Քիսաժի, 1937 թ.)

48 Сиреджук П., 62վ. հոդվ., էջ 136:

49 Baracz S., 62վ. աշխ., էջ 172:

50 Նշվ. աշխ., էջ 174:



ՅԱԶԼՈՎԵՑ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից (2012 թ.)

Եկեղեցին եղել է բարոկկո ոճով կառուցված միանավ բազիլիկ՝ արտաքուստ շեշտված ուղղանկյուն խորանով: Գլխավոր ճակատի եզրերին առկա էին քառակուսի հատակագծով և քառանիստ բրգաձև վեղարներով զույգ զանգակատուն-աշտարակներ:

Հայկական մատուռ. մինչև 2011 թ. կանգուն էր 1828 թ. Օհանովիչի կառուցած հայկական մատուռը, սակայն վթարային վիճակի պատճառով այն ևս վերափոխվում է:

Այլ շինություններ. քաղաքի կենտրոնում պահպանվել են հայ հոգևորականի տունը և հայկական փայտաշեն երկու տներ: Վերջիններս նույնպես գտնվում են խիստ վթարային վիճակում և չվերանորոգվելու դեպքում մոտակա տարիներին կփլուզվեն:

7. ՅԱԶԼՈՎԵՑ (ՅԱԶԼՈՎԿԱ)

Գտնվում է Տերնոպոլի մարզի Բուչաչի շրջանում և ունի մոտ 600 բնակիչ:

Գյուղը հիմնադրել են 1250 թ. Գրիմից գաղթած հայերը, կառուցել քառակուսի հատակագծով (5x5 մ) պաշտպանական բարձր աշտարակ՝ շրջապատված փայտե պարսպով և ջրափոսով⁵¹:

ԺՉ դարում Յազլովեցն ուներ 1235 բնակիչ և իր նշանակությամբ երրորդն էր Պոդոլիեում: 1672 թ. բնակվում էր 128 հայ ընտանիք: Նրանք ունեին լայն ինքնավարություն, սեփական դատարան, վոյտ և արհեստագործական միություններ⁵²:

1665 թ. տեղի քահանա Աստվածատուր Ներսեսովիչի կողմից հիմնադրվում է հայկական դպրոցը՝ ավելի քան 60 աշակերտով, որտեղ առարկաները դասավանդվում են հայերենով և լատիներենով⁵³:

1676 թ. քաղաքն ընկնում է օսմանյան տիրապետության տակ և անկում ապրում: Հայերի մեծ մասը հեռանում է քաղաքից, իսկ դպրոցը՝ փակվում:

ԺԸ դարի սկզբին՝ Յազլովեցը Ռեչ Պոսպոլիտայի կազմ վերադառնալուց հետո, հայ համայնքը վերականգնվում է, սակայն չկային նախկին ինքնավարությունն ու հարստությունը, որի արդյունքում էլ այն ԺԹ դարի սկզբին վերանում է⁵⁴:

Սբ. Աստվածածին հայկական եկեղեցի. գտնվում է գյուղի հին հայկական քաղամասում՝ Վիրմենսկա փողոցում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°57.40.50''; E 025°26.38.43'', ծ. մ. 282 մ):

52 Գրիգորյան Վ., Յազլովեց քաղաքի հայ գաղթօջախը (համառոտ պատմություն), «ՊԲՀ», 1973, № 3, էջ 52:

53 Նշվ. հոդվ., էջ 64:

54 Նշվ. հոդվ., էջ 70:

51 Підставка Р., Рибчинський, Язловець: історія, архітектура, туризм, Тернопіль, 2011, էջ 4:



ՅԱԶՆՈՎԵՑ. Սբ. Աստվածածին եկեղեցու տեսքն արևմուտքից (2012 թ.)



ՅԱԶՆՈՎԵՑ. Սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատան տեսքը հարավից (2012 թ.)


Կառուցվել է 1551 թ.: Գործում էր մինչև ԺԹ դարի սկիզբը, իսկ հայ համայնքի վերանալուց հետո՝ 1809 թ., տրամադրվում է Ուկրաինական հունականաթուղի եկեղեցուն⁵⁵: Խորհրդային տարիներին վերածվում է պահեստի: Այժմ գործում է որպես հունականաթուղիների Սբ. Նիկողայի եկեղեցի:

Միանավ, թաղածածկ բազիլիկ է՝ արևելքում հիմնական ծավալից դուրս եկող կիսաշրջանաձև խորանով: Եկեղեցու արևմտյան շքանուտքը զար-

դարված է գեղեցիկ որմնաքանդակներով, որի վերին մասում գետեղված է շինարարական հայերեն արձանագրությունը: Եվս մեկ հայերեն արձանագրություն էլ պահպանվել է հարավային մուտքի վերնամասում:

Հյուսիսից եկեղեցուն կից է ուղղանկյուն հատակագծով ցածրահարկ ավանդատունը, իսկ հարավից՝ ԺԷ դարի կեսերին կառուցված քառակուսի հատակագծով, քառահարկ աշտարակ-զանգակատունը (պատերի բարձրությունը՝ մոտ 20 մ): Վերջինիս առաջին հարկի ծածկը քարաշեն է, իսկ մյուսներինը՝ փայտաշեն: Տանիքին առկա են մեկ կենտրոնական և չորս կողային ռոտոնդաներ:

Հայկական ջրհորներ. գտնվում են եկեղեցուց ոչ հեռու: Կառուցվել են 1613 թ. և գործում են մինչև այժմ: Հյուսիսային և հարավային ջրհորները բաց են, կոպտատաշ շարված պատերով (մակերեսները՝ համապատասխանաբար 12,14 քմ և 17,15 քմ⁵⁶): Կենտրոնական՝ արևելյան թաղածածկ ջրհորը մխրճված է զառիթափ լանջին (մակերեսը՝ մոտ 5,35 քմ): Հինգ աստիճաններով մուտքն արևմտյան կողմից է և ունի փայտե դուռ, իսկ արևելյան



ՅԱԶՆՈՎԵՑ. Սբ. Աստվածածին եկեղեցու հատակագիծն ըստ Յ. Խալփախչյանի

55 Baracz S., նշվ. աշխ., էջ 92:

56 Халпахчян О., Сооружения армян в Язловце, “АН”, 1986, № 34, էջ 167:



ՅԱՋԼՈՎԵՑ. Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին տեսքը դեպի արևելք (2012 թ.)



ՅԱՋԼՈՎԵՑ. 1613 թ. հայկական ջրհորի շինարարական արձանագրությունը (2012 թ.)

պատին առկա է գեղեցիկ հարթաքանդակով շինարարական արձանագրությունը:

Գյուղի հյուսիսային մասում՝ ճանապարհի եզրին, պահպանվում են հայկական գերեզմանատունը և Սբ. Ավետման մատուռը, իսկ հասարակական և բնակելի մյուս շինությունները՝ հոգևորականի տունը, դպրոցը, բաղնիքը և այլն, կործանվել են դեռևս Առաջին աշխարհամարտի ժամանակ:

8. ՀՈՐՈՂԵՆԿԱ (ԳՈՐՈՂԵՆԿԱ)

Իվանո-Ֆրանկովսկի մարզի Հորոդենկայի շրջանի կենտրոնն է և ունի 12.400 բնակչություն:

Հայերն այստեղ հաստատվել են 1670-ական թթ. Մոլդովայից և Վալախիայից: 1782 թ. բնակվում էր 410, իսկ 1900 թ.՝ ընդամենը 43 հայ⁵⁷: 1856-1916 թթ. քաղաքը պատկանում էր հայազգի ազնվական Ռոմաշկան տոհմին⁵⁸: Այժմ բնակվում է 1990-ական թթ. Վրաստանից տեղափոխված 1 հայ ընտանիք:

Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է քաղաքի կենտրոնում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°40.04.44''; E 025°30.20.96'', ծ. մ. 272 մ) և պահպանված ամենաին շինությունն է: Կառուցվել է

1706 թ.: Ունեցել է երեք խորան՝ նվիրված Սբ. Աստվածածնին, Սբ. Գրիգոր Լուսավորչին և Սբ. Կատանին⁵⁹:

1931 թ. եկեղեցին հիմնավոր վերանորոգվում է տեղի հոգևոր ապաստվոր Ադամ Ռոշկո Բոգդանովիչի կողմից⁶⁰:

Հյուսիս-հարավ կողմնորոշմամբ միանավ բազիլիկ է, սակայն չորս կողմերից ընդհանուր ծավալից դուրս եկող երեք խորանների և նախասրահի շնորհիվ ստացել է խաչաձև հատակագիծ: Հյուսիսային երկու անկյունները ամրացված են չորս որմնահեծերով: Խորաններն արտաքուստ հնգանիստ են: Հարավային ավազ խորանը չափերով ավելի մեծ է, իսկ արևմտյան և արևելյան խորաններն ավելի փոքր են և հիմնական շինությունից փոքր-ինչ ցածր: Դրանք եկեղեցու հետ հաղորդակցվում են արևելյան և արևմտյան պատերի մեջ բացված կամարակապ մուտքերով: Հյուսիսային մասում գտնվող նախասրահը երկհարկանի է, և ներքին աստիճաններով հնարավոր է բարձրանալ երկրորդ հարկ, որտեղ գտնվում է դեպի արտաքին պատշգամբ տանող դուռը: Եկեղեցու ներսում պահպանվել են որմնանախշերի մի մասը և ավազ խորանի կենտրոնական պատին տեղադրված փայտյա շրջանակը, իսկ արևելյան խորանի մեջ առկա է մասնատուփ:

57 Сиреджук П., նշվ. հոդվ., էջ 136:
58 <http://pl.wikipedia.org/wiki/Romaszkanowie>.

59 Baracz S., նշվ. աշխ., էջ 84:
60 <http://fundacjaormianska.pl/cmentarze/horodenka/>.



ՀՈՐՈՂԵՆԿԱ. Սբ. Աստվածածնի անարատ հղիության հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիսարևմտյան կողմից (ջրաներկ, գործ՝ Ս. Քիսաժի, 1937 թ.), հյուսիսից և հարավից (2012 թ.)



ՀՈՐՈՂԵՆԿԱ. հատվածներ Սբ. Աստվածածնի անարատ հղիության հայ կաթողիկե եկեղեցու ներքին ծավալներից (2012 թ.)

Եկեղեցին այժմ գտնվում է վատթար վիճակում, տանիքն ունի վերանորոգման կարիք, իսկ ռոտոնդան չի պահպանվել:

Եկեղեցու բանալիները գտնվում են Կիևի պատրիարքության Ուկրաինական ուղղափառ եկեղեցու սպասավոր հայր Մորոզի մոտ, որը միջոցներ է ձեռնարկում եկեղեցին վերանորոգելու համար:

Հայ հոգևորականի տունը չի պահպանվել:

9. ՄՆՅԱՏԻՆ (ՄՆԻԱՏԻՆ)

Իվանո-Ֆրանկովսկի մարզի Սնյատինի շրջանի կենտրոնն է և ունի մոտ 10.000 բնակիչ:

Միգիզմունդ Գ քազավորի հրավերով հայերն այստեղ հաստատվում են 1628 թ.-ից: Նրանց շնոր-

հում է լայն ինքնավարություն և 15 տարով ազատում հարկերից⁶¹:


1782 թ. բնակվում էր 396, 1808 թ.՝ 505, իսկ 1922 թ.՝ մոտ 420 հայ⁶²: 1945 թ. մոտ 400 հայեր ստիպված հեռանում են Լեհաստան:

Սբ. Աստվածածնի վերափոխման հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է Կոսմյատինի փողոց, № 74 հասցեում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°26.47.19''; E 025°33.35.14'', ծ. մ. 269 մ):

Աղյուսաշեն այժմյան եկեղեցին կառուցվել է 1801-1805 թթ. 1632 թ.-ից գործող փայտաշեն եկեղեցու տեղում: Ուներ երեք խորան՝ նվիրված Սբ.

61 Baracz S., նշվ. աշխ., էջ 165:

62 Сиреджук П., նշվ. հոդվ., էջ 136:



ՄՆՅԱՍԻՆ. Սբ. Աստվածածնի վերափոխման հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիսարևելյան կողմից (ջրաներկ, գործ՝ Ս. Քիսաժի, 1937 թ.), հյուսիսից և հարավից, ներքին տեսքը դեպի խորան և հատված թաղի որմնանկար հարդարանքից (2012 թ.)

Աստվածածնին, Սբ. Գրիգորին և Սբ. Կատալինին⁶³:

Առաջին աշխարհամարտի ժամանակ մեծապես տուժելով՝ եկեղեցին 1924 թ. հիմնավոր վերա-

նորոգվում է տեղի հոգևորական Կատան Ամիրովիչի կողմից⁶⁴: 1946 թ. փակ էր, իսկ 1954 թ.-ից ծառայում է որպես տեղի Ագրարային ուսումնարանի սպորտային դահլիճ:

⁶³ Baracz S., նշվ. աշխ., էջ 165-166:

⁶⁴ <http://fundacjaormianska.pl/cmentarze/sniatyn/>.

Հյուսիս-հարավ կողմնորոշմամբ միանավ թաղական պազիլիկ է՝ արտաքուստ շեշտված հարավային կիսաշրջանաձև խորանով: Արևելքից կից է ցածրահարկ ավանդատունը, իսկ արևմուտքից միջանցքով միացված է ուսումնարանի հիմնական մասնաշենքին: Նախասրահի երկրորդ հարկում զետեղված է օթյակը: Արևելյան որմն ամրացված է մեկ, իսկ արևմտյանը՝ երեք որմնահեծերով: Որպես մարզադահլիճ՝ հարմարեցված է բասկետբոլի և վոլեյբոլի համար: Ավագ խորանին տեղադրված են սպորտային աստիճաններ և բասկետբոլի զամբյուղ:

Այժմ վթարային վիճակում է և չի գործածվում, իսկ չվերանորոգելու դեպքում տանիքը կարող է փլուզվել:

10. ԿՈՒՏԻ (ԿՈՒԹԻ)

Գտնվում է Իվանո-Ֆրանկովսկի մարզի Կոսովի շրջանում: Գյուղաքաղաքն ունի մոտ 4.300 բնակիչ:

Հայ համայնքը ձևավորվել է ԺԸ դարի սկզբին Սոլոդվայից գաղթած հայերի շնորհիվ, որոնք հայախոս էին և ունեին ինքնավարություն:

1787 թ. բնակվում էր 396, 1827 թ.՝ 1169 հայ⁶⁵: Սինչև Երկրորդ աշխարհամարտը Կուտին Լեհաստանի ամենահայաշատ վայրերից էր: Այստեղ է ծնվել Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Գրիգոր Ռոմաշկանը (1879-1881 թթ.):

Կուտիի վերջին հայ հոգևորականն էր Սամուել Մանուկիչը, որը հիշվում է նաև որպես քաղաքապետ և լեհական Մեյմի պատգամավոր⁶⁶:


1946 թ. հայերն արտաքսվում են Կուտիից:

Այժմ այնտեղ բնակվում են հայկական մի քանի ընտանիքներ: Չնայած դրան՝ ամեն տարի՝ հունիսի 13-ին կազմակերպվող մեծ ուխտագնացությանը մասնակցում են բազմաթիվ հայեր Լեհաստանից և Ռումինիայից:

Սր. Աստվածածնի անաղարտ հղիության (Սր. Անտոն) հայ կաթողիկե եկեղեցի. աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°15.41.20''; E 025°10.43.97'', ծ. մ. 339 մ:

Առաջին փայտաշեն եկեղեցին կառուցվել է դեռևս 1715 թ. տեղի առաջին հայ կաթողիկե հոգևորական Գրիգոր Վարդանովիչի գլխավորությամբ, իսկ 1779 թ.՝ այրվել հրդեհի ժամանակ⁶⁷:

1786 թ. տեղի հայ հոգևորական Յան Ստեֆանովիչը կառուցում է աղյուսաշեն եկեղեցին, որը 1791 թ. օգոստոսի 14-ին օձվում է Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Յան Թումանովիչի կողմից⁶⁸:



ԿՈՒՏԻ. Սր. Աստվածածնի անաղարտ հղիության (Սր. Անտոն) հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից (ջրաներկ, գործ՝ Ս. Բիսաժի, 1937 թ. և 2012 թ.), հյուսիսից (2012 թ.)

Ավագ խորանը նվիրված էր Սր. Աստվածածնին, իսկ մյուսները՝ Սր. Անտոնին, Սր. Կատեանին, Սր. Գրիգորին և Սր. Երրորդությանը⁶⁹:

Խորհրդային տարիներին եկեղեցին ծառայում էր որպես պահեստ: Այժմ պատկանում է Կիևի պատրիարքության Ուկրաինական ուղղափառ եկեղեցուն:

Բարոկկո ոճով կառուցված միանավ, թաղական պազիլիկ է՝ արտաքուստ շեշտված ուղղանկյուն խորանով: Հյուսիսարևելյան ճակատային մասում՝ մուտքի առջև, առկա է հիմնական շինությունից ավելի

65 Baracz S., նշվ. աշխ., էջ 102:

66 Isakowicz-Zaleski T., Słowniku biograficznym księzy ormiańskich i pochodzenia ormiańskiego w Polsce w latach 1750-2000, Kraków, 2001, էջ 15:

67 Baracz S., նշվ. աշխ., էջ 100:

68 Նշվ. աշխ., էջ 101-102:

69 Նշվ. աշխ., էջ 102:



ԿՈՒՏԻ. Սբ. Աստվածածնի անաղարտ հղիության (Սբ. Անտոն) հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից և ներքին տեսքը դեպի խորան (2012 թ.)

ցածր փոքրիկ նախամուտք, իսկ հարավային մասում ավանդատունն է:

Եկեղեցուն է ամփոփված բարերար Պյոտր Ռոմաշկանը:

Եռակամար զանգակատունը գտնվում է եկեղեցուց դեպի արևմուտք, որը 1990-ական թթ. վերակառուցման արդյունքում ունի քառակուսի հատակագիծ:

Գյուղի հին գերեզմանատանը պահպանվել են հայկական բազմաթիվ տապանաքարեր:

11. ՉԵՐՆՈՎՅԻ (ՉԵՐՆԻՎՅԻ, ՉԵՐՆԱՈՒՏԻ)

Համանուն մարզի կենտրոնն է և ունի մոտ 256.000 բնակիչ:

Հայերն այստեղ հաստատվել են ԺԵ դարի սկզբին: ԺԹ դարի վերջին Չերնովցիում բնակվում էր մոտ 600 հայ, իսկ Ի դարի սկզբին՝ ընդամենը 50 հայ ընտանիք⁷⁰:

Սբ. Պողոս-Պետրոս հայ կաթողիկե եկեղեցի. գտնվում է Վիլնենսկա (Հայկական) փողոցի և համանուն նրբանցքի հատման կետում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°17.19.62''; E 025°56.20.34'', ծ. մ. 244 մ):


Կառուցվել է 1869-1875 թթ. քաղաքի հայկական թաղամասում⁷¹ և օծվել Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Գրիգոր Ռոմաշկանի կողմից 1879 թ.: Հեղի-

նակն է հայտնի չեխ ճարտարապետ Իոսիֆ Գլավկան: Նրա նախագծով է կառուցվել նաև Չերնովցի քաղաքի հայտնի Բուկովինայի Ուղղափառ մետրոպոլիտների նստավայրը, որը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության հուշարձանների ցանկում (№ 1330):

Հայկական եկեղեցին գործում էր մինչև 1940-ական թվականները, որից հետո վերածվում է պահեստի: 1980-ական թթ. վերջին վերափոխվում է երգեհոնային երաժշտության դահլիճի: Երգեհոնը տեղադրված է ավագ խորանի վրա, իսկ ձախ կողմի խորանն այժմ պատկանում է Հայ առաքելական եկեղեցու Ուկրաինայի թեմին: Փաստացի այժմ եկեղեցին գործում է և՛ որպես երգեհոնային դահլիճ, և՛ որպես Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայ առաքելական եկեղեցի:

Շինությունը հայկական, գոթական և բյուզանդական ճարտարապետական ոճերի հրաշագեղ միասնություն է: Հյուսիս-արևելք-հարավ-արևմուտք առանցքով խաչաձև գմբեթավոր, եռանավ, եռախորան բազիլիկ է: Կենտրոնական նավը բավական բարձր է կողային նավերից: Արտաքուստ շեշտված խորաններով ավարտվող տրանսեպտի շնորհիվ եկեղեցին ունի խաչաձև հատակագիծ: Շքամուտքի երկու կողմերում վեր են խոյանում քառահարկ երկու զանգակատուն-աշտարակները՝ ութանիստ վեղարներով: Ավագ խորանի երկու կողմերում զետեղված են ցածրահարկ ավանդատները, որոնց, ինչպես նաև կողային նավերի տանիքների

⁷⁰ Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 593:
⁷¹ [http://uk.wikipedia.org/wiki/Вірменська_церква_\(Чернівці\)](http://uk.wikipedia.org/wiki/Вірменська_церква_(Чернівці)).




տեղադրված է երկուական հենակամար: Գմբեթի թմբուկն արտաքինից զարդարված է բազմաշարք քիվերով, սյունաշարով և որմնակամարներով, իսկ վերարև ունի կոնաձև կառուցվածք:

Հրաշալի պահպանվել և վերանորոգվել են որմնակարները, մասնավորապես թմբուկի պատերին առկա են տասներկու առաքյալների, գմբեթի կենտրոնում՝ Հիսուս Քրիստոսի, իսկ առագաստների վրա՝ չորս ավետարանիչների որմնակարները:

Շքամուտքի դիմաց դրված են Պողոս և Պետրոս առաքյալների արձանները, իսկ մուտքի վերնասասուն առկա է հայերեն և լատիներեն շինարարական արձանագրություն:

Եկեղեցու տարածքը ցանկապատված է: Դեպի հյուսիս գտնվում է հայ հոգևորականի նախկին տունը, որն այժմ գործածվում է այլ նպատակներով:



ՉԵՐՆՈՎՑԻ. Սբ. Պողոս-Պետրոս հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից (ջրաներկ, գործ՝ Ս. Բիսաթի, 1937 թ.), արևելքից (2012 թ.), հատվածներ թմբուկից, ներքին ծավալներից (2012 թ.) և հատակագիծը



ԺՎԱՆԵՑ. Սր. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցու տեսքը հարավից և արևմուտքից, հայ համայնքի զինանշանը և առյուծի հարթաքանդակ (2012 թ.)

12. ԺՎԱՆԵՑ (ԶՎԱՆԻՅՑ)

Գտնվում է Խմելնիցկու մարզի Կամենեց-Պոդոլսկու շրջանում: Գյուղաքաղաքն ունի մոտ 1500 բնակիչ:

Հայ համայնքը հիմնադրվել է 1670 թ. Մոլդովայից և Վալախիայից վերաբնակեցված հայերի շնորհիվ, սակայն արդեն 1672 թ. թուրքական արշավանքի պատճառով հայերը ստիպված լքում են քաղաքը: 1699 թ., երբ Ժվանեցը վերադարձվում է Ռեչ Պոսպոլիտային, բնակվում էր 100 հայ ընտանիք: 1768 թ. թուրքական նոր արշավանքի հետևանքով հայերը հեռանում են դեպի Կամենեց-Պո-

դոլսկի, իսկ ԺԸ դարի վերջին՝ Ռուսական կայսրության կազմում ընդգրկվելու պահին, Ժվանեցում կար ընդամենը 28 հայ⁷²: 1820 թ. քաղաք ժամանած Մինաս Բժշկյանը փաստում է, որ այլևս հայեր չէին բնակվում⁷³:

Սր. Աստվածածնի անաղարտ հղիության հայ կաթողիկե եկեղեցի. աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°33.01.32''; E 026°29.10.57'', ծ. մ. 155 մ:

Կառուցվել է ԺԸ դարի սկզբին: Շինարարության ղեկավարն էր տեղի հոգևորական Գրիգոր Հանկելիչը, որն էլ հետագայում ամփոփվել է եկեղեցում⁷⁴:

1768 թ. թուրքական արշավանքից էապես վնասված եկեղեցին հիմնովին վերակառուցվում է 1791 թ. և օծվում Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Յ. Թումանովիչի կողմից⁷⁵:

Եկեղեցին ունեցել է վեց խորան՝ նվիրված Սր. Աստվածածնին, Սր. Գրիգորին, Սր. Կատեռանին, Սր. Անտոնին, Սր. Թադևոսին և Սր. Բարդուղիմեոսին⁷⁶:

72 **Дашкевич Я.**, նշվ. աշխ., էջ 231:

73 **Բժշկեանց Մ.**, ճանապարհորդություն ի Լեհաստան, Վեներտիկ, 1830, էջ 132:

74 **Baracz S.**, նշվ. աշխ., էջ 179:

75 Նույն տեղում:

76 Նույն տեղում:



ԿԱՄԵՆԵՑ-ՊՈՂՈՒՍԿԻ. հայկական թաղամասի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից (2012 թ.)

ԺԹ դարի սկզբին եկեղեցին տրամադրվում է Լեհ կաթոլիկ եկեղեցուն⁷⁷: Խորհրդային տարիներին այն և շրջակա բերդապարիսպները վերածվում են գյուղատնտեսական մեքենաների սպասարկման կենտրոնի: Ուկրաինայի անկախացումից հետո կրկին տրամադրվում է լեհ կաթոլիկներին:

Բարոկկո ոճով կառուցված միանավ, թաղածածկ բազիլիկ է: Արևելքում հիմնական ծավալից առանձնանում են կիսաշրջանաձև գլխավոր, իսկ հյուսիսային և հարավային կողմերում՝ ուղղանկյուն խորանները: Ավագ խորանին հարավից կից է մաս առանձին մուտքով փոքր ավանդատուն: Արևմտյան ճակատը ձևավորված է դեկորատիվ որմնասյուներով: Շքամուտքի վերևում պահպանվել է համայնքի զինանշանը՝ խաչազարդ դրոշով գառնուկ:

Եկեղեցուց մի փոքր լայն է արևմտյան մասում գետնոված նախասրահը, իսկ աջ և ձախ անկյուններում վեր են հառնում քառանկյուն երկու զանգակատուն-աշտարակները:

Եկեղեցու շրջակայքը պատված է մոտ 1-1,5 մ լայնությամբ և 300 մ ընդհանուր երկարությամբ բերդապարսպով և օժանդակ շինություններով: Արևմտյան մասում պահպանված պարիսպները բարձր են 1,5-2 մ: Առկա են երկու դարպասներ. մեկը կամարաձև է և նախատեսված հետիոտնի համար, իսկ մյուսը՝ մեքենաների: Առավել լավ են պահպանվել մոտ 4-5 մ բարձրությամբ հարավային և արևմտյան պարիսպները, իսկ հյուսիսայինը ներառված է Ի դարի կեսերին կառուցված գյուղտեխնիկայի սպասարկման շինությունների մեջ:

Պարիսպներին նկատելի են դեպի դուրս նեղացող բազմաթիվ հրակնատներ:

Հարավային մասում առկա է ուղղանկյուն հատակագծով միահարկ, կիսախարխուլ շինություն, որը հավանաբար նախկինում հոգևորականի տունն էր:

Եկեղեցուն կից հայկական գերեզմանատունը չի պահպանվել: Խորհրդային տարիներին գերեզմանաքարերը գործածվել են որպես շինանյութ գյուղտեխնիկայի սպասարկման շենքերի համար: Դրանք այժմ փլուզվում են, ինչի արդյունքում ի հայտ են գալիս հայատառ արձանագրություններով քարաբեկորներ, որոնցից մի քանիսը գործածվել են բերդապարսպի վերանորոգման ժամանակ:

13. ԿԱՄԵՆԵՑ-ՊՈՂՈՒՍԿԻ (ԿԱՄԵՆԵՑ, ԿԱՍԻԱՆԵՑ)

Խմելնիցկու մարզի Կամենց-Պոդլսկու շրջանի կենտրոնն է և ունի մոտ 103.000 բնակիչ:

Որոշ տվյալների համաձայն՝ քաղաքը հիմնել են հայերը, որոնք բնակություն են հաստատել 1062 թ. իշխան Ֆյոդոր Դ-միտրիևիչի հրավերով⁷⁸:

ԺԳ դարի կեսերին հայ համայնքը լիովին կազմավորված էր և ուներ իր եկեղեցին, իսկ ԺԴ դարի կեսերից՝ լեհական տիրապետության շրջանում, մաս լայն ինքնավարություն՝ առանձին դատարանով, մագիստրատով և փոյտով: Հայ համայնքը համալրվում է Դրիմից և Վալախիայից գաղթած հայերով, որոնք մեծ դեր են խաղում քաղաքի կառուցման,

77 Григорян В., նշվ. աշխ., էջ 144:

78 Гаюк И., նշվ. աշխ., էջ 158:



ՎԱՍԵՆԵՑ-ՊՈՂՈՒՍԿԻ. Սբ. Նիկողայոս եկեղեցին 1930-ական թթ., կամարաշար դարպասն արևմուտքից, զանգակատուն-աշտարակի տեսքը հյուսիսից (2012 թ.)

զարգացման և պաշտպանության գործում: ԺՉ դարի կեսերին այստեղ բնակվում էր մոտ 900 տուն հայ⁷⁹:

Գործում էին յոթ հայկական եկեղեցիներ և վանքեր՝ Սբ. Աստվածածնի վերափոխման, Սբ. Նիկողայոս, Սբ. Աստվածածնի ավետման, Սբ. Խաչ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Գևորգ և Սբ. Ստեփանոս⁸⁰:

1672 թ., երբ օսմանյան թուրքերը գրավում են Կամենեց-Պոդոլսկին, հայերը ստիպված լքում են քաղաքը: Եկեղեցիների մի մասն ավերվում է⁸¹, իսկ մնացածը՝ վերածվում մզկիթների: 1699 թ. Ռեչ Պոսպոլիտային վերադարձրած քաղաքում սակավաթիվ վերադարձած հայերը ստանում են նախկին իրավունքներն ու արտոնությունները, սակայն համայնքի հզորությունն արդեն չի վերականգնվում: ԺԸ դարի վերջին քաղաքը հայտնվում է Ռուսական կայսրության կազմում: Հայկական ինքնավարությունը վերանում է 1790 թ., իսկ հոգևոր առումով հայերը ենթարկվում են 1810 թ. կազմավորված Մոզիլ-Պոդոլսկու հայ կաթողիկե եպիսկոպոսությանը⁸²: Այդ ամենի արդյունքում 1863 թ. բնակվում էր ընդամենը 63 հայ⁸³:

79 **Baracz S.**, նշվ. աշխ., էջ 94:

80 **Жарких М.**, Храмы Поділля, Київ, 2007, էջ 27:

81 **Шкурко С.**, Армянские архитектурные памятники в городе Каменец-Подольске, «МРՀ», 1968, № 2, էջ 235:

82 **Гаяк И.**, նշվ. աշխ., էջ 210:

83 **Հայ սփյուռք հանրագիտարան**, էջ 593:



1940-ական թվականներին արդեն մեծ մասամբ ուծացած հայ համայնքը դադարում է գոյություն ունենալուց և հեռանում դեպի Լեհաստան:

Հին քաղաքի հարավային մասում ներկայումս պահպանվում է հայկական թաղամասը՝ հայկական հին շինություններով: Կենտրոնը Վիրմենսկա ռինոկ (Հայկական շուկա) հրապարակն է, որից սկիզբ է առնում Վիրմենսկա փողոցը:

Սբ. Նիկողայոս հայկական եկեղեցի. 1930-ական թթ. պայթեցված եկեղեցու ավերակները գտնվում են Վիրմենսկա փողոցում (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°40.20.40''; E 026°34.24.64'', ծ. մ. 190 մ):

Կառուցվել է 1495 թ. որպես հայ առաքելական եկեղեցի: 1666 թ. վերափոխվում է հայ կաթողիկե եկեղեցու, իսկ թուրքական բռնազավթման տարիներին (1672-99 թթ.)՝ մասամբ քանդվում: Քաղաքի ազատագրումից հետո՝ 1756-1767 թթ., հայերը հիմնովին վերակառուցում են այն: 1971 թ. օծվում է Լվովի հայ կաթողիկե եպիսկոպոս Յ. Թումանովիչի կողմից⁸⁴: 1863 թ.՝ վերջին հայ հոգևորական Ռաֆայել Ուզունյանի մահից հետո, եկեղեցուն լեհ հոգևորականի կողմից պատարագը մատուցվում է կաթոլիկ ծեսով⁸⁵:

84 **Задорожник А., Петров М.**, Вірменський храм св. Миколи XV-XVIII ст. у Кам'янці-Подільському. Кам'янець-Подільський, 2009, էջ 21:

85 **Григорян В.**, նշվ. աշխ., էջ 98:



ԿԱՍԵՆԵՑ-ՊՈՂՈՍԿԻ. Սբ. Աստվածածնի ավետման եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից, հայ եպիսկոպոսի տունը, 1554 թ. խաչքար՝ ագուցված եկեղեցու հարավային որմին (2012 թ.)

Եղել է միանավ բազիլիկ՝ արտաքուստ շեշտված կիսաշրջանաձև խորանով և տրանսեպտով: Մեծածավալ ութանկյուն գմբեթի բարձրությունը կազմել է մոտ 30 մ: Եկեղեցին երեք կողմերից (բացառությամբ արևելյանի) շրջապատված է եղել ավելի ցածր սյունասրահով: Մուտքն արևմտյան ճակատից էր, որից վեր առկա խորշում տեղադրված է եղել Սբ. Աստվածածնի ոսկեգօծ արձանը:

Այժմ եկեղեցուց մնացել են միայն հիմքը, որոշ քարաբեկորներ և արևմտյան սյունասրահի կամարաշարը:

Եկեղեցու տարածքը պատկանում է նոր կազմավորված հայ համայնքին (ղեկ.՝ Արթուր Գասպարյան): Նրանց ուժերով 2005 թ. տեղադրվում է Հայոց Մեծ եղեռնին նվիրված խաչքար⁸⁶, իսկ արևմտյան սյունասրահի կամարների մեջ՝ մետաղական խաչազարդ վանդակաճաղեր:

Սբ. Նիկողայոս եկեղեցու ճարտարապետական համալիրի մեջ են մտնում զանգակատուն-աշտարակը, հայ եպիսկոպոսի տունը և առևտրական պահեստները, որոնք շրջապատված են 4-5 մ բարձրությամբ և 1 մ հաստությամբ պարիսպներով:

Հնգահարկ զանգակատուն-աշտարակը կառուցվել է 1565 թ. և նման է Լվովի մայր տաճարի զանգակատանը: Առաջին հարկում 1633 թ.-ից գործում էր Սբ. Ստեփանոս մատուռը⁸⁷:

1980-ական թթ. վերականգնվում է:

1990-ական թթ. սկզբից պատկանում է Կիևի պատրիարքության Ուկրաինական ուղղափառ եկեղեցուն և կոչվում է Սվետոյ Ստեպան: Չանգակատունն ունի քառակուսի հատակագիծ (11 x 11 մ), իսկ քարե պատերի բարձրությունը մոտ 23 մ է: Առաջին հարկի թաղածածկ մատուռի պատերին պահպանվել են որմնանկարներ, որոնցում պատկերված են հին Երուսաղեմը, Ստեփանոս Նախավկայի մահատակությունը և աստվածաշնչյան այլ տեսարաններ: Երկրորդ հարկի մուտքն արտաքին ճակատից է, որին հասնելու համար պետք է բարձրանալ փայտաշեն արտաքին աստիճաններով: Մյուս հարկերի միջև ծածկերը փայտաշեն են, և ներքին աստիճաններով հնարավոր է բարձրանալ զանգակատան տանիք: Վերին հարկում տեղաբաշխված են փոքր կիսակլոր չորս աշտարակներ, որոնց վրա առկա հրակնատներից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի հին հայկական թաղամաս:

Եկեղեցուց հյուսիս պահպանվել է 1577 թ. կաֆայեցի հայ վաճառական Անդրեասի միջոցներով կառուցված Հայ եպիսկոպոսների տունը, որը հետագայում ծառայում է որպես Հայ առևտրականների տուն: Երկհարկանի կառույցի հյուսիսային շքամուտքը պատված է կամարակապ գեղեցիկ զարդաքանդակներով: Այժմ քաղաքի Հնագիտական թանգարանն է:

⁸⁶ Задорожник А., Петров М., նշվ. աշխ., էջ 49:

⁸⁷ Григорян В., նշվ. աշխ., էջ 82:


Ճարտարապետական համալիրի հարավարևելյան մասում պահպանվել են հայկական խոշոր առևտրային պահեստները (ԺՁ դար), որտեղ հայ վաճառականները պահում էին արևելքից բերված ապրանքները:

Սբ. Աստվածածնի ավետման եկեղեցի. գտնվում է Սբ. Նիկողայոս եկեղեցուց դեպի հարավ-արևելք (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°40.18.67''; E 026°34.28.95'', ծ. մ. 188 մ):

Կամենեց-Պոդոլսկու հայկական քարակերտ ամենահին եկեղեցին է: Կառուցվել է 1398 թ. կաֆայեցի վաճառական Կոթլուբեյի որդու՝ Սինանի կողմից⁸⁸: Մինչև 1495 թ. կոչվում էր Սբ. Նիկողայոսի անվամբ: Օսմանյան բռնազավթման հետևանքով մեծապես տուժած եկեղեցին ԺԸ դարի սկզբին վերակառուցում է հայազգի առևտրական Բոգդան Լատինովիչը⁸⁹: Հայ համայնքի նոսրացման պատճառով և եկեղեցու վերջին հայ հոգևոր սպասավոր Գանիել Լևիցկու մահից հետո՝ 1811 թ., այն տրվում է Ուկրաինական հունակաթուղի, իսկ 1840 թ.՝ Ուկրաինական ուղղափառ եկեղեցուն⁹⁰:

Խորհրդային տարիներին ծառայում էր որպես մարզային արխիվի շենք, իսկ 1990 թ.-ից՝ Մոսկովյան պատրիարքությունը ենթակա ուկրաինական ուղղափառ Սբ. Նիկոլայի եկեղեցի:

Միանավ, ուղղանկյուն, քաղածածկ բազիլիկ է՝ արևելյան արտաքուստ շեշտված կիսաշրջանաձև խորանով (արտաքին չափերն են՝ 12,5x8 մ, բարձրությունը՝ 12 մ): Հյուսիսային և հարավային որմերին առկա են մեկական որմնահեծեր և հենակամարներ, որոնք կառուցվել են ԺԹ դարի վերջին և Ի դարի սկզբին՝ զանգակատուն-աշտարակի, փայտաշեն նախասրահի և շրջակա պարսպի հետ միաժամանակ: Հարավային որմին պահպանվել է հայերեն արձանագրությամբ 1554 թ. մի խաչքար:



Եկեղեցուն է ամփոփված Կամենեց-Պոդոլսկում 1627 թ. վախճանված Ամենայն հայոց Սեյքիսեթ կաթողիկոսը⁹¹:

Ներսում առկա են բազմաթիվ սրբապատկերներ, որոնցից առանձնանում է հայկական դիմագծերով Աստվածածնի հին սրբապատկերի կրկնօրինակը:

Եկեղեցուն կից հին հայկական գերեզմանատունը չի պահպանվել:

Հայկական բերդապարիսպ (Վիրմենսկի բաստիոն). կանգուն է հին քաղաքի գլխավոր՝ արև-



ՎԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿԻ. Գայկական բերդապարիսպն արևմուտքից և Գայկական ջրհորն արևելքից (2012 թ.)

մտյան մուտքի մոտ (աշխարհագրական կոորդինատներն են՝ N 48°40.25.79''; E 026°34.07. 34'', ծ. մ. 166 մ): Կառուցվել է 1583 թ. հայ համայնքի կողմից: Քաղաքի պահպանված քարակերտ ամենահին բերդապարիսպն ունի արևելքից բաց բազմանկյուն հատակագիծ և մոտ 100 մ ընդհանուր երկարություն: Պարսպի բարձրությունն արևմտյան հատվածում մոտ 10 մ է, իսկ հաստությունը՝ 1-1,5 մ: Այս ամենը վկայում է, որ հայ համայնքը մեծ դեր ուներ քաղաքի պաշտպանության գործում:

Հայկական ջրհոր (Վիրմենսկա կրինիցա). գտնվում է հին քաղաքի կենտրոնում՝ Պոլսկի ռինոկ հրապարակում (աշխարհագրական կոորդինատներն են N 48°40.31.58''; E 026°34.20.31'', ծ. մ. 197 մ): Կառուցվել է 1638 թ.:

Քառակուսի է (5 x 5 մ), իսկ խորությունը կազմում է մոտ 30 մ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին ավերված վերգետնյա շինությունն ամբողջությամբ վերակառուցվում է 1956 թ, որը ութանիստ է՝ մոտ 14 մ բարձրությամբ⁹²:

Քաղաքում պահպանվել են նաև հայաշեն մոտ երկու տասնյակ բնակելի և հասարակական այլ շինություններ, որոնցից կարելի է առանձնացնել Վիրմենսկի ռինոկ հրապարակի մոտակայքում գտնվող Լեոնովիչների, Բալասանովիչների և Ասլանովիչների՝ ԺՁ-ԺԷ դարերում կառուցված քարաշեն տները⁹³:

88 Նշվ. աշխ., էջ 73:
89 Նշվ. աշխ., էջ 77:
90 Նույն տեղում:
91 Նշվ. աշխ., էջ 76:

92 Шкурко С., նշվ. աշխ., էջ 238:
93 Նշվ. աշխ., էջ 239:

ՎՈՍԿԵՊԱՐԻ ԵՎ ՋԻԼԻԶԱՅԻ Պատմամշակութային հուշարձանները




ՈՍԿԵՊԱՐԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
HISTORICAL MONUMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA
THE HISTORICAL
MONUMENTS OF
VOSKEPAR



ՋԻԼԻԶԱՅԻ
ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
HISTORICAL MONUMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA
THE HISTORICAL
MONUMENTS OF
JILIZA



Պատրաստվել է հրատարակվել են «SOS մշակույթ» ծրագրի շրջանակներում
Works Prepared & Published within SOS Culture Programme



ՀՊՎՄՍԿՈՐ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2013

